ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

Բ. ՏԱՐԻ — ԹԻՒ Զ. — ՅՈՒՆԻՍ — 1861

ՀԱՍԱՐԱԿԱՑ ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՋՐԱԲԺՇԿՈՒԹԻՒՆ*

1.) Խմելու Ջրի լաւն ու վատն : 2.) Ջրի բժշկական գործածութիւնը առհասարակ : 3.) Լուացումն ցուրտ Ջրով : 4.) Ցուրտ Ջրով թրջած շորը : 5) Մարմնի վախճանելը թաց սաւանում : 6.) Սրսկումն , ցայտումն : 7.) Վրան Ջուր ածելը և Տուշը : 8) Գետում կամ ծովում լողանալը : 9.) Գետում կամ ծովում լողանալու համար ընդհանուր կանոններ : 10) Տաք Ջուրը և բաղանիքը : 11) Ջրաբժշկականութեան վրայ համառօտ ծանօթութիւն :

1.

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԼԱՒՆ ՈՒ ՎԱՏԸ

Երբ որ Իսրայէլացիքը Ամն անապատից դնալով բանակուելցան Ջըաւիլիմի և այն տեղ խմելու Ջուր չգտան խրելանց համար, սկսան տատիկ տրանջել Մովսիսից ասելով թէ ծարաւ կոտորելու համար հանեց նրանց Եգիպտոսից, և քիչ մնաց, որ քարկոծ անէին նրան, և մինչև մովսէս Ջուր չհանեց քարից իւր դաւազանով, Իսրայէլացւոց ժողովուրդը չըհանդստացաւ :

Իսրայէլացիքը, այն, իրաւունք ունէին քարկոծ անել Մովսիսին, թէ որ նա Ջուր չէր դտել նրանց համար. ինչու որ մարդի մի որ և իցէ տեղ բնակութեան առաջին պայմանը Ջուրն է, և յիրաւի առանց Ջրի կա-

*) Гидропатія, водоличеніе.

բոլ չէ լինել ոչ մի մարդկային գործ, առանց ջրի կարող չէ ապրել ոչ մարդը, ոչ անասունը, առանց ջրի կարող չէ ծաղկել ոչ երկրագործութիւնը և ոչ մի ուրիշ տնական վիճակ։

Օդի, լուսի և ջերմութեան հետ խմիչքն ջուրը պատճառում է երկրի պտղաբերութիւնը և բուսերի կեանքը և աճելութիւնը։ Ջրերի առատութենից և պակասութենից կախուած են նաև երկրի կլիման, նրա բարեխառնութիւնը և օդի խոնաւութեան աստիճանը։

Ջուրը նիւթերի կերպարանափոխութեան և հալելու գլխաւոր ներգործողը լինելով բնութեան մէջ, հարկաւոր է որպէս մեր կաղմուածքի, նոյնպէս և ամէն մարմինների համար, որոնք գոյանում երկրիս երեսին։ Այս պատճառով մենք գտնում ենք նրան ամէն տեղ, չոր փայտի, քարերի և ոսկորների մէջ, որոնցից կարելի է քաշել, մինչ նրան առանձին ջրաբաշխական մասուով։ Մարդու մարմնի մէջ պարունակվում է 60 ֆունտից մինչև 80 ֆունտ ջուր։ Ջուրը հալում է մեր մարմնի մէջ անողաբար նիւթերը, օգնում է մարմնատոյց նիւթերին փոխարկել արիւն և դուրս է հանում մարմնից անպիտան հեղանիւթերը, դառնալով այս կերպով մեր կեանքի պահպանութեան սուտջին պայմանը։ Մեր մարմնի մէջ ջրի պակասութենից մենք զգում ենք ծարաւ, որ կարող ենք կատրել համարեա թէ միայն ջրով։

Բայց որ ջուրը պիտանի լինի մարմնի պահպանութեան համար, նա չպիտի պարունակէ իւր մէջ վնասակար նիւթեր։ զոր օրինակ, կինդանիների կամ բուսերի փտած մասունքներ, զանազան աղտեղութիւններ և այլն։ Այլև չպիտի լինի նոյնպէս ամենեին առանց խառնուրդների, զըտած, քաշած ջրի երկար և առատ զործածութիւնը սովորաբար պատճառում է փսխումն, որովայնի խէթք և ուրիշ խանգարմունքներ։ Ջրի զովացուցիչ յատկութիւնը և ախորժ համը կախուած են իւր ածխային կաղից, մթնոլորտական օդից և ազերից։ Աղբիւրի և ջրհորի լաւ, կակուղ ջուրը ամէն ուրիշ ջրերից աւելի է պարունակում այս հեղանիւթերը, վասն որոյ ամէն տեղ, ուր որ միայն կարելի է, պէտք է զործածել խըմելու համար աղբիւրի կամ ջրհորի լաւ ջուր։ Մենք խմում ենք անձրեւի, գետի, առուակների և լճակների ջրերը։ Նաւորդները երբեմն հարկադրուում են զործ ածել ծովային զուած ջուր։ Բայց Աստուած աղատէ մեզ այսպիսի յետին կարօտութենից։

Ըմպելու համար անուարակոյս լաւագոյն համարելի է ազբերային ջուրը, ըստ որում նա յատակ է, ցուրտ է և առատութեամբ ունի զովացուցիչ կաղերը, մանաւանդ ածխայինը։ Ազբերային ջրից յետոյ նախապատկի է ջրհորային ջուրը, թէպէտ մի քանի տեղերում, զոր օրինակ, կաւախառն կրաւոր, զոնային կամ կաւճային հողումը նա կարող է պարունակել իւր մէջ հողախառն, դժուարամարսելի աղեր երեք կամ վեց անգամ առաւել քան թէ ազբիւրի ջուրը։ Գետերը և հեղեղատները, մա-

նաւանդ որոնք սրընթաց վազում են ոչինչ, քարուտ երկրի վերայ, ունին շատ քիչ հողախառն աղեր և այս պատճառով նրանց ջրերը նոյնպէս լաւ են խմելու համար։ Ընդհակառակն ջուրն անպիտան է խմելու համար, երբ գետի յատակը և նրա ափերը կաւուտ են, սիկաւէտ կամ ճախճախուտ, և առհասարակ գետի ջուրը կարող չէ փոխարինել բոլորովին աղբերային կամ ջրհորային ջուրը, ինչու որ նա գնալով կորուսանում է իւր զովարար կաղերը, ամառը լինում է շատ ջերմ և ձմեռը շատ ցուրտ։

Գետի ջրի հետ զբաղիլ անհրաժեշտ են լիրը (սիկ) և ցեխը, մանաւանդ անձրեւից յետոյ և ջրերի յորդութեան ժամանակը։ Արևադարձի կողմերում այսպիսի խառնուրդները այնչափ առատ են, որ գետի ջուրը դառնում է ամենեին անպիտան ըմպելու համար։ Գետերը համարեա թէ ամէն տեղ ընդունում են քաղաքային աղտեղութիւնները, վասն որոյ շատ անգամ մենք տեսնում ենք նրանց մէջ փտած դարձարանաւոր (կենդանական կամ բուսական) նիւթեր։ Ուրեմն այսպիսի ջրի գործածութիւնը հեշտութեամբ կարող է յառաջ բերել զանազան խանգարմունքներ ստամոքսում և մարմնի ուրիշ մասներում, նոյնպէս երևելի փոփոխութիւններ արիւնի մէջ, որոնք և պատճառում են երբեմն զանազան վտանգաւոր հիւանդութիւններ։

Ջուրը երկու տեսակ է բնութեան մէջ՝ քաղցր և աղի։ Առաջինը բաժանում են կակուղ և կարծր. կակուղ ջուրը, որ է առողջարար ըմպելիք, շատ սակաւ է պարունակում իւր մէջ օտարոտի մասունքներ, աղեր, գաճ և այլն։ Բայց ընդհակառակն կարծր ջրի մէջ այս նիւթերը առատ են, վասն որոյ նա այնքան օգտաւէտ չէ ոչ առողջութեան համար և ոչ անտեսական և արհեստական նպատակների։

Խորին և յատակ աղբիւրների, նոյնպէս մի քանի մեծամեծ գետերի, լճերի և ջրհորների ջրերը լինում են ըստ մեծի մասին կակուղ։ Քաղաքներում շատ ջրհորներ ունին կարծր ջուր։ Ամենակարծր ջուրը կարելի է համարել ծովայինը, և ամենակակուղը՝ զտածը, անջրեայինը։

Կակուղ ջուրը աւելի յարմար է առանին կիրառութեան համար, մանաւանդ խմելու. բայց եթէ ամենեին զուրկ է աղերից, դոր օրինակ, զտած և անձրեւի կամ ձիւնի ջուրը, այն ժամանակ լինում է անհամ և կարծր ջրի պէս ծանրացնում է ստամոքսը։ Բայց անձրեւային ջուրը աւելի անվնաս է քան թէ չափազանց կարծր ջրհորայինը։ Կակուղ ջուրը ախորժ է երևում նաև անասուններին։

Չափազանց կարծր ջրի վնասը դժուար է սահմանել հաստատապես. ինչու որ այս մասին շատ բան կախուած է մարդի մարմնի կազմուածից և նորա ստամոքսի զօրութիւնից։ Ոմանք կարծր ջրի գործածութենից չեն զգում ոչինչ վատ հետևանքներ. բայց շատերին նրա եր-

կար կիրառութիւնը պատճառում է փոխումն, փորի խէթք և որովայնալուծութիւն։

Շատ անգամ ոչ միայն բժշկականութեան անտեղեակ մարդիկ, այլ և նոյն բժիշկները բաղում հիւանդութիւնների պատճառը համարում են միմիայն անպիտան ջրի գործածութիւնը։ Թէպէտ անկարելի է բոլորովին մերժել այս կարծիքը, բայց պարտ է դիտել, որ այս մասին շատ անգամ չափազանց աւելացնում են վատ ջրի վնասակար ներգործութիւնը։ Անպիտան ջուրը գրեթէ չէ կարող լինել սաստիկ հիւանդութիւնների, արիւնախառն որովայնալուծութեան, խոլերայի, տենդերի և այլն՝ միմիայն պատճառ, եթէ չկան ուրիշ վնասակար հանգամանքներ, որոնք յաջողում են այս տեսակ ցաւերի ծագմանը։ Բայց շատ անգամ պատահում է, որ ջուրը պարունակում է աներկբայ վնասակար և նաև թունաւոր նիւթեր, զոր օրինակ, արճիճ, պղինձ, ծծմբախառն մետաղներ և նաև մկնդեղ։ Այսպիսի ջրերը լինում են հանքերի և դանաղան գործարանների մօտիկ տեղերում։ Այս պատճառով հարկ է միշտ զգուշանալ այնպիսի ջրերից, որոնց մէջ խառնուում են գործարանների ջրանցքերը։

Ջուրը առաւել յաճախ ոտնձգում է վատ յատկութիւններ, փտած գործարանաւոր, մանաւանդ կենդանական նիւթերի խառնուրդից, որոնք կարող են յառաջ բերել անտարակոյս ուղի վնասակար հետեւանքներ, քան թէ ամենակարծր ջրի ամէն հոգախառն աղերը։

Զգուշանալ վնաս է արուեստական լճակների, փոքրիկ ծովակների, ջրանցքների, փոսերի ցեխոտ, սղտոտ ջուրը։ Այսպիսի ջուրը միշտ առատ է անհամ աղերով, բորակով, անուշադրով, միջատներով, որդունքներով և ամէն տեսակ գործարանաւոր նիւթերով, մանաւանդ երբ որ նրա հետ խառնուում է լուացարանաց, փոսերի, արտաքնոցների, խոզուակների և փողոցների ջուրը։

Վատ ջրի վնասակար ներգործութենից հեռանալու համար պէտք է որչափ կարելի է գործ ածել միայն յատակ և զով ջուրը. որ ոչ չափազանց կակուղ է և ոչ շատ կարծր. նա պիտի լինի ցուրտ, բայց ոչ պաղ, ինչու որ շատ ցուրտ ջուրը խլելով մարմնի տեղական տաքութեան մասը, կարող է պատճառել ցրտահարութիւն և նորա վնասաբեր և վրատանգաւոր հետեւանքները, մանաւանդ մարմնի ջերմանալից յեռոյ։ Առհասարակ հարկ չէ ընդել ոչ աւելի չուռով, ոչ խիստ շատ և միանգամ։

Այն տեղերում, ուր որ վկայ լաւ աղբերային, ջրհորային կամ գետի ջուր, կարելի է գործ ածել անձրեւային ջուրը, կամ աշխատել մաքրել վատ ջուրը քամելով, եռացուցանելով, կամ խառնելով նորա մէջ լիմոնի հիւթ, մրգեղէն, քաղցրաւենիք, նուռն հիւթ և այլն։

Շատ անգամ ջուրը թուում է մեզ բաւական յատակ և զով, մինչ նրա մէջ կան բաղում անախորժ և վնասակար աղեր։ Այսպիսի ջուրը

հնչաւութեամբ կարելի է ճանաչել. եթէ թողնենք նրան առ ժամանակ բերանը լաւ խցկած բուսիկու

Ցունաց, Հռոմայեցոց և Արաբացոց բժիշկներ՝ Հիպոկրատէս, Ակղէբիատէս, Հալենոս, Ավիսեննան և ուրիշներ յաճախ գործ էին ածում ջուրը թէ ներքին և թէ արտաքին ցաւերի ընդդէմ։

Զ. դարի վերջումը Առաբացոց օրէնսդիր Մոհամմէդը՝ գիտելով անկրկայ մաքրութեան օգուտը առողջութեան համար, Մովսէսին հետևելով, հրամայեց իր հետևողներին ստէպ ստէպ լուացուիլ ցուրտ ջրով։

Բայց միջին անբաղդ դարերումը, երբ որ լուսաւորութեան ճառագայթը քիչ մնաց որ ամենեին չիջանէր, ցուրտ ջրի գործածութիւնը համարեա թէ բոլորովին մոռացուեցաւ։ Թիւր և անհիմն դատողութիւն անելով ջրի ներդործութեան վերայ, սկսան զանազան հիւանդութիւնների պատճառ համարել նրան։ Երկար ժամանակ մերժում էին նրան թէ հասարակութիւնը և թէ բժիշկները և միայն ներկայ դարումս Գրեֆենբերգի Պրիսնեց անուն չինականը, Ասարիոյ Սիլեզիայում վերականգնեց կրկին նրա բոլոր հին փառքը, ապացուցանելով անթիւ փորձերով ջրի գործածութեան կարևորութիւնը զանազան ցաւերի դէմ։

Անհիշելի ներքով դատ Պրիսնիցը ջրարժշկութիւնը (Гидропатія, Водолеченіе)։ 1820 թուականում խոտ հնձելու ժամանակին, Պրիսնիցը սայլից վայր ընկաւ, ձիու քացին դիպաւ գլխին և սայլի անիները վրան անց կենալով՝ կողերը ջարդեցին։ Բժիշկները վճռեցին, որ հիւանդը վտանգաւոր դրութեան մէջ է և կենալ միշտ խեղ, սախատած։ Պրիսնիցը տեսնելով որ բժիշկներից և վիրաբուժներից բժշկութեան յոյս չկայ, սկսաւ գործ ածել ցուրտ ջուրը արտաքուստ և ներքուստ, այսինքն՝ խմել, լողանալ, որով փոքր միջոցում ամենեին բժշկուեցաւ։ Նրա բուժշկութեան համբաւը տարածուեցաւ շուտով չրջակայ կողմերումն ամէն տեղից ծանր անբժշկելի ցաւերով հիւանդները սկսան հաւաքուիլ Պրիսնիցի մօտ և շատերը ստանում էին կատարեալ առողջութիւն։ Ջրի բարերար ներդործութիւնը սկսան հասկանալ որպէս բժիշկները, նոյնպէս և հասարակութիւնը։ Շինուեցան հիւանդանոցներ, հաստատուեցան ընկերութիւններ, երևեցան բազմաթիւ շարադրութիւններ ջրի օգտի մասին և վերջումը ամէնքը համոզուեցան, որ ցուցա ջրի գործածութիւնից կարելի է քաղել մեծամեծ օգուտներ առողջութեան համար։ Շատ ուրիշ ասաց մի երևելի դաղղիացի բժիշկ իր վերջին շունչը տալու ժամանակը. «Ես թողում եմ ձեզ ինձանից յետոյ երկու մեծ բժիշկներ՝ փահրեզը և ջուրը»։

Բայց դժբաղդաբար ջրի ընդհանուր գործածութեան կատարեալ յաջողութիւնը արգելում են նոր մինչև այժմ հին բժշկական դպրոցների նախապատչարմունքները, որոնց հետևողները սովորուած լինելով դեղերին, հրաժարուում են այն ամէն միջոցներից, որոնց հետ նրանք բնակցած չեն։ Զանազանելով մի անկախ հայեցք, նրանք ուրիշների կարծիքների սարսակ են միշտ և հին սովորութեան գերի։ Վեր ի վերոյ դա-

տեղով ամէն բանի վրայ, նրանք աչքի տակն ունին միմիայն ջրի առաջին ներգործութիւնը, այսինքն՝ մարմնի ցրտութիւնը, և ընդդիմանում են նրա գործածութեան, համարելով նրան մի այնպիսի միջոց, որն որ կարող է յառաջ բերել ցրտահարութիւն։ Նրանց այս սխալ կարծիքը դուրս է գալի այն հանգամանքից, որ նրանք չեն կարողանում որոշել յանկարծ և կարճատև ներգործող ցրտութիւնը երկարատև ցրտութեան ներգործութիւնից։ Առաջինից մենք ոչ երբեք կարող չենք ցրտահարւիլ։ Բաղատրեմ պատճառը։ Մեր երակները սկսանելով սրտից, ինչպէս ծառի մի բուն ցրտում են իրանց ոստերը մարմնի բոլոր մասներումը։ Արտի շարժմունքների կամ զարկերի ժամանակը արիւնը թափւում է երակների մէջ, որոնք տանում են, շրջեցնում նրան ամէն տեղ մարմնի զանազան մասունքները սնացանելու համար։ Վասն որոյ այս երակները կոչւում են արիւնաշուրջ ամաններ կամ անօթներ։ Այս անօթները որչափ առաւել մօտ են սրտին, այնչափ առաւել լայն են, և ընդհակառակն, նրանք այնչափ առաւել նեղ են, որչափ առաւել մօտանում են մարմնի երեսին, այնպէս, որ մորթումը արիւնաշուրջ անօթներ շատ բարակ են և այս պատճառով պարունակում են համեմատաբար աւելի սակաւ արիւն քան թէ այն անօթները, որոնք գտանւում են մարմնի ներսումը։ Երբ որ ճնչումը կամ ցուրտը ներգործում է մարմնի երեսի վրայ, այն ժամանակ արիւնը վազում է դէպի ներքին գործարանները, մանաւանդ ցուրտ ջրի ներգործութեան ժամանակ, որից բարակ անօթները սեղմւում են և այս կերպով քշում են արիւնը դէպի առաւել հաստ անօթները։ Այս պատճառով մենք տեսնում ենք միշտ, որ երբ ձեռները կամ ոտները դնում ենք ցուրտ ջրի մէջ, նրանք տժգունանում են իսկոյն արիւնը նրանցից հեռանալից և կնճռւում են անօթների սեղմուելից։ Բայց երբ որ մարմինը ընկել չէ երկարատև ցրտի տակ, որ պահպանում է արեան անդադար վազումն անօթների բարակ մասներից դէպի հաստ մասները, այն ժամանակ սրտի շարժմունքների և նոյն արեան ստատիկ ընդհարման պատճառով հաստ անօթների մէջ, արիւնը ցրտի հեռանալուց յետոյ չուտով յետ է դառնում կրկին դէպի բարակ անօթները։ Արեան սրընթաց յետ դալուց մարմինը տաքանում է, կարմրում է, մանաւանդ այն ժամանակ՝ եթէ մարդ սկսում է մանդալ կամ ուրիշ տեսակ շարժողութիւն անել։

Մարմնի այս ստատիկ ճիգն ստանալը ուրիշ բնական վիճակը և յարուցանելը գործարանների մէջ նրանց պաշտօնի ուղիղ կատարումը՝ կոչւում է ընդդիմամարտութիւն կամ ընդդիմագործութիւն։

Ամէն այս երեւոյթները, այսինքն՝ արեան սրընթաց դալն ու դընալը դրգռում են մարմնի գործունէութիւնը, թեթեւացնում են արիւնաշրջութիւնը և սնդացնում են կոչին։

Այս կերպով պարզ երեւում է, որ ցրտի կամ ցուրտ ջրի կարճատև

ներգործութիւնից մարմինը պաղում է միայն մի շատ կարճ ժամանակ և ընդհակառակն շուտով տաքանում է մարմնի ընդդիմամարտութիւնից և կենդանացած արիւնաշրջութիւնից։ Ուրեմն կարելի է հաստատ ասել, որ ցուրտ ջրի կարճատև ներգործութիւնից մրսելը կամ ցրտահարութիւնը մի անկարելի բան է։

Ուրիշ բան է, երբ որ ցուրտը կամ ցուրտ ջուրը ներգործում է մարմնի վերայ երկար ժամանակ։

Այս դիպուածումը արիւնը անդադար յետ է քշւում դէպի ներքին ներգործարանները և անշարժ մնում է նրանց մէջ երկար միջոց, ուստի և արիւնաշրջութիւնը յետաձգւում է։ Այս պատճառով երբեմն յառաջ են գալի ցրտահարութեան զանազան հիւանդութիւններ։

Նոյնպէս ներգործութիւնը, թէև կարճատև, ջնաստակար լինում է ներքին անզգոյշ գործածութեան ժամանակը։ Այս կերպով մենք կարող ենք հեշտութեամբ ցրտահարուիլ, եթէ մարմնի տաքանալուց յետոյ շարժմունքներով կամ տաք տաք կերակուրով, խմենք պաղ ջուր կամ ուրիշ ցուրտ ըմպելիք։ Սրա պատճառը այն է, որ բերանի և ստամոքսի լորձնոտ թաղանթը ունի աւելի թոյլ կազմութիւն, քան թէ մարմին, վանտրոյ տաքութիւնից յետոյ երբեմն չէ կարողանում դիմանալ ցրտին։

Ամէն վերոյիշեալ խօսքերից կարելի է հանել այս կանոնը, թէ ցրտի ներքին գործածութիւնը, մարմինը տաքացած ժամանակը վնաս է, բայց արտաքին գործածութիւնը շատ օգտակար է։ Այս կանոնը հարկաւոր է մտքումը պահել ցուրտ ջրի օգուտը և նրանից կախուած զանազան երևոյթները հասկանալու համար։

Հաստատելով ջրի արտաքին գործածութեան անվնասակարութիւնը, ցոյց տամք այժմ այն օգուտը, որ կարելի է քաղել որպէս ցուրտ, նոյնպէս և տաք ջրից, թէ առողջութիւնը պահպանելու և թէ ցաւերը բժշկելու համար։

5

ԼՈՒԱՑՈՒՄՆ ՑՈՒՐՏ ՋՐՈՎ

Ով որ կամենում է պահպանել իւր առողջութիւնը, զօրութիւնը ու գեղեցկութիւնը, ամէն օր պիտի լուանայ լոլոր մարմինը, կամ գոնեա նրա մեծ մասը, ցուրտ ջրով և յետոյ պինդ սրբել մարմինը ցամաք պաստառով մինչու որ այս մեքենական գրգռումն ևս կարող է զարթուցանել կեանքը և զուարթացնել մարմնի մարմն։ Ցուրտ ջրով լուացուելից յետոյ մարդ զգում է դիւրութիւն, զուարթութիւն, աշխուժութիւն և կարողանում է աւելի հեշտութեամբ դիմանալ տաքութեան, քրտնքին, աշխատանքին և կեանքի զանազան անյարմարութիւններին, լը-

ւացման երկար գործածութիւնը պնդացնում է կաշին, բթացնում է նրա ցրտահարութեան ընդունակութիւնը և այս կերպով չատ անգամ նախապահպանում է մեզ արտաքին ջնաստեր պատճառներից և երկիւղալի հիւանդութիւններից։

Ի հարկէ չատերի համար, եթէ սկզբից գործ են ածում բաւական ցուրտ ջուր, անհարժշտ է ցրտի առաջին ազդեցութիւնը, նրանք դողում են և սկսում են հեւալ, շունչը կրկնում է։ Բայց շուտով այս արկածները ոչընչանում են և մի քանի օրուան մէջ սովորելով ցուրտ ջրին, նրանք ոչ միայն չեն նկատում ոչինչ անտանելի զգայողութիւնք, այլև ընդհակառակն զգում են բաւականութիւն և զուարթութիւն։

Բայց զգայող մարդկանց համար լաւ է սովորիլ ցուրտ ջրին փոքր առ փոքր. առաջ առաջ լուացուիլ սակաւ ինչ տաք ջրով, վրա երկրորդ օրը սակաւ ինչ ցուրտ և ապա աստիճան առ աստիճան անցանել դէպի առաւել ցուրտ ջուրը։

Պէտք է լուացուիլ վաղ առաւօտեան խլոյն անկողնից վեր կենալից յետոյ, քանի որ մարմինը չէ հովացել։ Առաւել հարկաւոր է լուանալ սերական անդամները և այն տեղերը, որոնք ասելի քրտնում են՝ ոտները, անութները (թևի տակը), կուրծքը և իրանաց քունջը։ Որոնց համար անտանելի է զլուխը ցուրտ ջրով լուանալը, այնոքիսիք թող զլխներին ցուրտ ջուր չածեն։

Ջրի գործածութիւնը այս ձևով, ինչպէս որ մենք այս տեղ ստորագրեցինք, օգտակար է ամէն հասակի մարդկանց համար։ Շատ բժշկներ արգելում են ծերերին և երեխաներին լուացումն ցուրտ ջրով, հիմնելով իւրեանց կարծիքը այն հանգամանքի վրա, թէ ալեոր մարդկանց և երեխանց մարթոյ տաքութիւնը՝ սակաւ է և սրա համար պէտք չէ նրանց մարմինը ձգել ցրտի տակ, որով ջերմութիւնը ասելի ևս կպակասի։

Բայց տաքութիւնը պակասում է ցրտի երկար ներգործութիւնից, երբ որ երեխայքը կամ ալեորքը երկար ժամանակ լողանում են դեռումը։ Այլ եթէ ջրի տաքութեան աստիճանը համեմատ է լողանողի զգայութեանը, այն ժամանակ զրկուում է մարմնի մարթոյ ներգործական կարողութիւնը և մարմինը շուտով տաքանում է, մանաւանդ եթէ լուացուելից յետոյ չփում են նրան չոր ու ցամաք կտաւով։ Շատ պրոտեստ երեխանցը, մինչեվ երեք ամսական հասակը կարելի է լուանալ միայն տաք ջրով։ Բայց երեք ամսից յետոյ, երբ որ նրանց մարմինը կամենդանայ և ասելի յայտնի էերեի նրանց բնական, կենդանական ջերմութիւնը, այն ժամանակ կարելի է աներկիւղ սովորեցնել երեխին ոչ թէ ցուրտ՝ այլ միայն հով ջրի. բայց ի հարկէ սակաւ առ սակաւ, զգուշութեամբ և միայն չորս կամ հինգ տարեկան հասակում կարելի է լուանալ նրան բաւական ցուրտ ջրով և լողացնել գետի մէջ։

Թրթախատակն արևան հոսման, որպէս և դաչտանի ժամանակը

հարկ չէ լուանալ ցուրտ ջրով այն տեղերը, ուստի հոսում է արիւնը, ինչու որ ցրտի ներգործութիւնից արիւնահոսութիւնը կարող է դադարել։ Այս դիպուածներում աւելի յարմար է լուացուիլ սակաւ ինչ տաք ջրով։

Ցուրտ ջրով լուացման նպատակն է սնդացնել մարմնի կաշին և առնել նրան ընդունակ ընդդիմադրելու արտաքին վնասակար ներգործութիւնից։ Այս բարերար նպատակին օգնելու համար հարկաւոր է տարուայ եղանակին համեմատ հագնիլ շորերը, բայց որչափ հնար է փախչիլ չատ տաք հագուստից և չփափկացուցանել մարմինը։ Որչափ առաւել սովորումենք մենք օդի ներգործութեան այնչափ սակաւ վնասակար ներգործութիւն ունի նա մեզ վրայ։

Ցուրտ ջուրը ոչ թէ միայն նախապահպանում է ցրտահարութեան հիւանդութիւններից, այլև աղատում է բաղում ախտերից։ Ցուրտ ջրով լուացուելից լաւագոյն ճար չկայ մնացած հաղի, խարբուխի յօդուածացաւութեան, կանանց սպիտակ հիւթոյ, որովայնապնդութեան, ախորժակի խանգարման, սրտի խառնուելու, ղլխի պտոյտքի, քորի և ուրիշ բաղում ցաւերի համար։ Այս ամէն դիպուածներում ջուրը ներգործում է ջղերի վերայ, զրգռելով և զարթուցանելով նրանց զօրութիւնը։ Ուրեմն այս ցաւերումը աւելի օգտակար է լուանալ միչտ մէջքը, ըստ որում ամէն չարժողական ջղերը դուրս են գալի մէջքի ուղեղից, որ պարունակուում է ողնաչարուսը։ Հաղի ժամանակը հարկաւոր է լուանալ աւելի մէջքը և կուրծը։ Որովայնի կպուածում պէտք է ուղղել ջրի հոսանքը մէջքի և մանաւանդ ողնաչարի ստորին ծայրի վերայ։ Այս դիպուածներում օգտակար է նոյնպէս ըմպել առաւօտ առաւօտ անօթի մի կամ երկու բաժակ ցուրտ ջուր, մի փոքր չաքար խառնած համի համար։ Բայց հարկաւոր է նոյնպէս մանդալ յաճախ բաց օդի մէջ և հեռանալ դժուարամարսելի կերակրից։ Մի և նոյն խորհուրդը պէտք է տալ և ախորժակի խանդարման, սրտի խառնելու և ղլխի պտոյտքի դիպուածներում։

Յօդուածացաւութեան դիպուածում փաթաթելը թաց դենջակներով և յետոյ ցամաք բրդեղէն թաշկինակներով՝ օգտակարագոյն է ջրի ուրիշ տեսակ գործածութիւնից։

Մորթոյ մարմաջի, քորի դիպուածում օգտակար է լուանալ մարմինը սապոնի ջրով։

Լուացման նման թէ առողջութիւնը պահպանելու մասին և թէ դաւորը բժշկելու համար, ներգործում են ցուրտ ջրով թրջած շորերը. (холодныя обертки) փաթաթելը թաց սաւաններով կամ երեսսրբիչներով, սրսկելը, ջուր թափելը վրան, մարմնի առողեն (տուչը) և լողանալը գետում և ծովում։

Ջրի գործածութեան ամէն այս տեսակները դանազանուում են միայն

սաստիկ կամ թեթև ներգործութեամբ և ամէն մարդ պիտի ընտրի իւր համար այն տեսակը, որը որ աւելի կարող է տանել։

Այս տեսակներից շատերի վրա մենք կխօսինք համառօտ, թողնելով մանրամասնաբար և ընդարձակ ճառելը բժշկարանին, ուր որ բատորագրելու ենք այն հիւանդութիւնները, որոնց ընդդէմ գործ են ածում ջրաբժշկութեան զանազան եղանակները։

4.

ՑՈՒՐՏ ՋՐՈՎ ԹՐՋԱՆ ՇՈՐԸ

(Холодныя примочки).

Անձեռոցիկները, երեսսրբիչները կամ քաթանի կտորտանքները թրջում են և մարմնի վերայ դնելով նրանց պահում են մինչև որ սկսին տաքանալ և ապա կրկին թրջում են և կրկին ցուրտ ցուրտ դնում են մարմնի վերա։ Գործ են ածում նրանց առ հասարակ տապացուցիչ կամ բորբոքիչ ախտերի ընդդէմ, անտանելի ջերմութիւնը զովացուցանելու համար, հաւասարապէս մարմնի վնասների, ցրտից տարած անդամների (обмороженныя) թեթև այրածի, սուր յօդուածացաւութեան, դլխացաւութեան, արիւնահոսութեան և ուրիշ շատ հիւանդութիւնների ընդդէմ։

5.

ՄԱՐՄՆԻ ՓԱԹԱԹԵԼԸ ԹԱՑ ՍԱՌԱՆՈՒՄ

Այս եղանակը գործ է ածուում շատ տենդերի ընդդէմ, և յաւէտ օգտակար է երկարատև, հնացած հիւանդութիւնների, յօդուածացաւութեան, չնչարդելութեան և սրանց նմանների դիպուածներում։ Փաթաթում են կամ բոլոր մարմինը պարանոցից մինչև ոտների սգեղները, կամ միմիայն ախտացած անդամը։

Սրա համար վեր են առնում մի սաւան (չարսաւ), կամ մի երեսսրբիչ, թրջում են ցուրտ ջրումը և քսում, յետոյ փաթաթում են նրա մէջ հիւանդի բոլոր մարմինը, կամ նրա ցաւագար անդամը և ծածկում են նրան բրդեղէն վերմակներով։ Հիւանդը պարկած մնում է կէս ժամից մինչև երկու ժամ քրտնքի մէջ, որ շուտով երևում է։ Յետոյ հիւանդը նստում է ցուրտ ջրով լի աւազանի մէջ մի քանի միայն մանրերկրորդ։ Փոխանակ աւազանի կարելի է լուանալ մարմինը կամ հիւանդ մասը ցուրտ ջրով կամ շիլել թաց անձեռոցիկներով, թրջած ամպով և այլն։ Եթէ

փաթաթում են միայն թրջած երեսարբիչով մարմնի մի որ և իցէ մասը, այն ժամանակ հարկաւոր չէ փաթաթել հիւանդին թաց սաւանումը, կամ նստեցնել նրան աւազանի մէջ և կամ բոլոր մարմինը լուանալ ցուրտ ջրով, այլ բաւական է այս եղանակը գործածել միմիայն ցաւագար անդամի համար։

6.

ՍՐՍԿՈՒՄՆ ՝ ՅԱՅՏՈՒՄՆ

Երեսը, ծործրակը (վիզը) ցայտում են ցուրտ ջրով սաստիկ և անակընկալ ոգեւորութիւն անելու համար ջղերի գործունէութեան և արիւնաշրջութեան վրայ, որպէս ուշաթափութեան, քնաւոր թեան և ուրիշ սրանց նման դիպուածներում։

7.

ՎՐԱՆ ՋՈՒՐ ԱԾԵԼԸ ԵՒ ՄԱՐՄՆԻ ԱՌՈԳԱՆԵԼԸ

(տուշը, ծյաւ)

Ջուր ածելը վրան և առոգանելը կամ տուշը պատկանում են ջրի գործածութեան առաւել հզօր եղանակներին, վասն որոյ և յայտնի դիպուածներումը նրանք ամէնից առաւել օգտակար են, մանաւանդ սնդամկաղմ մարդկանց համար և երկարատև յամառ հիւանդութիւնների ժամանակը։

Ջուր ածելը վրան լինում է պարզապէս ջրահանով, կժով կամ որ և իցէ ուրիշ մեծ ամանով։ Այս եղանակը բաւական հեշտութեամբ տանում են նաև չափահաս երախայքը և ծեր մարդիկ, եթէ ջուրը թափում չեն շատ բարձր տեղից։

Ջուր թափելը վրան օգտակար է այն մարդկանց, որոնք փոքր ի շատէ սովոր են արդէն ցուրտ ջրին, ինչու որ այս եղանակը աւելի զօրաւոր է և ներգործական որպէս նախապահպանելու ցրտահարութեան հիւանդութիւններից, նոյնպէս և վերոյիշեալ ախտերը բժշկելու համար։

Առոգումն կամ տուշ կոչւում է ջրի հոսանքը, որ բարձր տեղից ածուում է անձրևի պէս։ Տուշը անտարակոյս առաւել զօրաւոր է, բայց և առաւել ներգործական և օգտակար քան ամէն ուրիշ տեսակ ջրի գործածութիւնը։ Տուշը կենդանացնում է ջղերի գործունէութիւնը և արիւնաշրջութիւնը, օգնում է մարսողութեան, զրգռում է ախորժակը և տալիս է մարդին զօրութիւն, զուարթութիւն և աշխուժութիւն։ Տուշը չը պիտի շարունակուի աւելի քան 2—6 րոպէ։

Ցուրտ ջուրը այս եղանակով գործածուելով, բժշկում է շատ շուտով ամէն տեսակ ընդհատ տենդերը։

8.

ԼՈՒԱՑՈՒՄԸ, ԼՈՂԱՆԱԼԸ ԴԵՏՈՒՄ ԿԱՄ ԾՈՎՈՒՄ

Ցուրտ Ջրի գործածութեան ամէն եղանակներից ամենաօգտակարը աներկբայ է դետում կամ ծովում լողանալը։ Ալիքների զարկուածքը, մկանանց ձգտումը մարմնի հաւասարակշռութիւնը պահպանելու համար և մանաւանդ լողալն հարկադրում են լողանողին ընդունել զանազան դրութիւններ և առնել տեսակ տեսակ շարժմունքներ, որոնք ոչ միայն չեն աշխատ առնում և նեղացնում մարմինը, այլ ընդհակառակը նորոգում են նրան և զուարթացնում։ Ծովի Ջուրը ընդունակ է ոչ միայն սնդացնել մարմինը և զօրացնել նորա գործածութիւնը, այլ և բժշկել շատ հիւանդութիւններ, որոնց ընդդէմ անզօր են համարուած բժիշկների երկայն դեղատոմսակները։ Նաև լոկ դատելին ծովի ափը պատճառում է նոյնպէս մի բարերար տպաւորութիւն մարդի վերայ, որ կարող է զրաւ անսահման ծովային տարածութեան վառայեղ տեսարանը։ Ծովի լայնատարած երեսի զմայլեցուցիչ տեսիլը, վրվրալից ալիքների աղմկալի ծածանումը, Ջրի յաւիտենական հետ դեռեռ դալն ու դնալը, վսեմ պատկերը, որ բացուում են արեգական ծաղելիս և մայր մտնելիս, դեղեցիկ ծովային թռչունքները և զանազան օտարոտի կենդանիքը — այս ամենը լցուցանում է մարդի սիրտն ու միտքն մի առանձին անպատմելի զգայութեամբ և տալիս է նրան համարեա թէ նոր կեանք։

Մաղձոտ մարդիկը (Πολχολρικς) կամ ուրիշ Ջղային ախտերով հիւանդները նաև առանց լողանալու, միայն ծովի ափը մտնելով ըզգում են լաւութիւն և թեթեւութիւն ցաւերից։

Ցուրտ Ջրերը, ցրտութեան աստիճանին մտիկ տալով, պատճառում են անընդմիջական տպաւորութիւն մարմնի վերայ։ Մի և նոյն Ջուրը, որ միայն հովացնում է մինին, միւսի համար կարող է համարուիլ ցուրտ և ընդհակառակն մի և նոյն Ջրից մէկը զգում է մեծ ցրտութիւն, միւսը հաղիւ միայն հովութիւն։ Այս պատճառով դետումը կամ ծովումը լուացուելու ամէն մարդ պիտի առաջնորդ ընտրէ իւր համար իւր առանձնական զգացողութիւնը և ոչ թէ Ջրի բարեխառնութեան աստիճանը։ Բայց Ջրերը լուացուելու համար առ հասարակ պիտի ունենան ցրտութեան կամ տաքութեան համարեմ թէ յետագայ աստիճանները։

Շատ ցուրտ, պաղ Ջուրը . . . 10° մինչեւ 11° ըէօմիւրի Ջերմաչափով։
Ցուրտ Ջուրը . . . . . 10°—15°—
Հովը . . . . . 10°—20—
Ջափաւորը . . . . . 20°—25°—
Տաքը . . . . . 25°—30°—
Ջերմը . . . . . 30°—35° կամ 36°

Այս ջրերի անընդմիջական ներգործութիւնը կախուած են զանազան պայմաններից՝ մարմնի կազմուածից, հասակից, առողջութեան դրութիւնից, կլիմայից, տարուց եղանակից և այլն, վասն որոյ անկարելի է յառաջագոյն սահմանել մարդի համար ջրի բարեխառնութեան այս կամ այն աստիճանը։

Գետերի բարեխառնութիւնը կախուած է ջրի արագ կամ դանդաղ ընթացքից։ Նաև մի և նոյն գետի մէջ ջրի բարեխառնութիւնը չէ միատեսակ, ինչու որ զառիվեր ափերը և զանազան խորութիւնը փոփոխումն են գետի ընթացքը և ընդ նմին նրա տաքութիւնը լողանողների վերայ։

Հով ջուրը ոչ թէ միայն պակասցնում է մարմնի տաքութեան աւելորդը այլ և հանդարտացնում է ջղերի գրգռումը, վերականգնելով նրանց մէջ մի առաւել ուղիղ արիւնաբղխութիւն։ Վասնորոյ հով ջրի մէջ լուացուիլը օգտակար է շոք ժամանակը։ Նա հեռացնում է վտանգաւոր հիւանդութիւնները, որոնք որ սովորական են շոք երկիրներին։ Գետումը և ծովումը յաճախ, բայց չափաւոր լողանալը ունի շատ յաջողակ հետևանքներ. նա սնդացնում է մարթին, զօրացնում է մարսողութիւնը, գրգռում է ախորժակը, յառաջ է բերում խորին և հանգիստ քուն, զաւրացնում է մարմինը, նորոգում է ամէն կենդանական զօրութիւնները և ցնծացնում է հոգին ու միտքը խաղաղացնելով նրանց ալեկոծութիւնը, եթէ լողանողները չարժուում են անդադար ջրի մէջ և երկար ժամանակ չեն մնում։

Ցուրտ ջրումը լուացուիլը շատ օգտակար է այն մարդկանց համար, որոնք շուտ շուտ հիւանդանում են փողացաւով, խարբուխով, աչքացաւով (բորբոքումն աչաց) կերկերութեամբ (ձայնի խանձուիլը, կըտրուիլը) հաղով, մկանց յօդուածացաւութեամբ, ջղացաւութեամբ և գլխացաւութեամբ։ Նոյնպէս շատ զօրաւոր դեղ է գիրութեան, խուլի (зологухха) և օրիորդների դժգունութեան կամ գեղնութեան ընդդէմ։ Շատ անդամ պատահում են մեղ այնպիսի անձինք, որոնք շատ տաք հագուստ են հագնում, երկչոտութեամբ զողում են ամէն ցրտից և այնքան առաւել և շուտով հիւանդանում են ցրտահարութեամբ, որքան առաւել զգաստ են նրա ընդդէմ։ Այսպիսի անձանց ոտները սովորաբար ցուրտ են ինչպէս ձիւն, բայց գլուխը կրակի պէս տաք և մարթը զրեթէ միշտ թաց քրտունքից։ Սրանց հարկաւոր է փոքր փոքր սովորել լուացուիլ պաղ ջրով, շատ պաղ և նաև սառուցի ջրով։

Շատ վնասակար է լողանալ, գլուխը դինով տաքացած և փորը կերակուրով լի ժամանակը։ Կերակուր ուտելից յետոյ պիտի անց կենայ գոնէ չորս ժամ. սրանից առաջ ցուրտ նաև հով ջուրը կարող է պատճառել գլխի կսթուած։

Շատ ցուրտ կամ պաղ ջրով լուացուիլը վտանգաւոր է դեռահաս

երախանց և զառամեալ մարդկանց համար։ Զառամեալ հասակումը մարդի մարմինը անդադար կորուսանում է ընդունակութիւնը բանալ և արձակել իւր մէջ կենդանական ջերմութիւնը, մարմնի արտաքին մասների արիւնը պակասում է, ինչու որ ալեորների սրտի դարկելը այնչափ թոյլ է, որ չէ կարողանում քշել արիւնը դէպի հեռաւոր տեղերը որչափ և հարկաւոր է ջերմացնել նրանց։ վասն որոյ լողանալու ժամանակը ծերերի արիւնը հաւաքուում է ներքին գործարաններումը, որ շատ երկիւղալի է նրանց համար, ինչու որ սրանից կարող է յառաջ գալ կաթուած։ Ի հարկ է պատահում են և ծերեր, որոնք լողանում են միշտ պաղ ջրի մէջ և մնում են անվնաս, բայց մենք չենք խօսում այս տեղ բացառութիւնների վրայ։

Նորածին և դեռահասակ մանուկների ջերմութիւնը իջանում և բարձրանում է հեշտութեամբ նրանց արեան քանակութեան սակաւութիւնից. վասն որոյ և նրանց մարմինը սակաւ առ սակաւ միայն ստանում է ընդունակութիւն տանել ցուրտ ջրի ներգործութիւնը առանց վնասակար հետևանքների։ Զորս կամ հինգ տարեկան հասակից սկսած է սկսել լողացնել երախանցը դեռի ջրի մէջ ամառնային ժամանակը. եթէ նրանց առողջութիւնը չէ պահանջում առանձին զգուշութիւններ։ Նրանց չը-պիտի ջրի մէջ մնալ 1—3 րոպէից աւելի։

Կանայք դաշտանի օրերումը (ամսական հոսումն) նոյնպէս և թըթախտական անձինք թանչքի արեան հոսման ժամանակը չպիտի լուացուին ցուրտ ջրով, ինչու որ որպէս վերևը ասացինք արեան հոսումը կարող է կտրուել ցրտի զօրութիւնից։

Նոյնպէս ծանր հիւանդութիւններից առողջանալու ժամանակ հարկ չէ գործ ածել ցուրտ ջուր լուացուելու համար, ինչու որ մարմինը կարող չէ տանել ջրի տպաւորութիւնը։

9.

ԳԵՏԻ ԿԱՄ ԾՈՎԻ ԶՐՈՒՄ ԼՈՂԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Լողանալից առաջ հարկաւոր է վազը ինչ ման գալ ոտով։ Երբ որ հասար լողանալու տեղը, եթէ չատ դաղարած ես և հոգնած, յառաջ քան տկլորիկ հանդստացիր, բայց եթէ դաղարած չես, այլ միայն տաքացել ես ման գալով, չուտով չորերդ հանիր և մաքիր ջուրը, մի տար մարմնիդ հովանալ, ինչու որ լողանալը գրգռում է արիւնաշրջութիւնը աւելի չուտով երբ որ մարմինը տաք է և այս կերպով յառաջ է բերում մարմնի ընդդիմադրութիւնը, այսինքն՝ արեան դալն ու դնալը։ Հարկ չէ տկլոր նստել երկար ժամանակ ջրի տիրը, կարող ես մրսել։

Յուրա Ջրի մէջ կարելի է մնալ 15—20 րոպէ։ Սրանից առաւել մնալը վնասակար է։ Առ հասարակ պիտի դուրս գաս Ջրից, երբ որ ըսկըսար դողալ ցրտից։

Գետումը կամ ծովումը լողանալիս լաւ կլինի որ մարդ մենակ չըմնայ, ինչու որ Ջուրը մտնելու ժամանակը շատ անգամ ոտների մկանունքը կծկու

են, թմրուում են, ուստի անհնարանալով լող տալկարող է խեղդուիլ։

Պղտոր Ջրերի մէջ լողանալը լաւ չէ, ինչու որ նրանք վնասակար ներգործութիւն ունին մարմնի վերայ, մանաւանդ երախանց։

Կերակուր ուտելից յետոյ չորս ժամից առաջ լողանալը անտարակոյս վնաս է, պատճառ որ կարող է խանգարել մարսողութիւնը և յառաջ բերել վտանգաւոր հետեանքներ։ Ամենից օգտակարագոյն է լողանալ առաւօտեան անօթի փորով։ Լողանալից յետոյ հարկ է խկոյն սըրբուիլ և հագնել չորերը։ Երբ եղանակը պարզ է, օգտակար է չափաւոր զբօսնուլ։ Անձրևային և ցուրտ ժամանակը վատ չի լինիլ լողանալից յետոյ տաք չայ խմել։

Ծովումը կարելի է լողանալ առ հասարակ Յունիսից սկսած մինչև Սեպտեմբերը, առաւօտեան 7 ժամից մինչև 11 ժամը։ 20—25 անգամ լողանալը մի ամառն բաւական է, բայց ամէն լողանալն ևս ոչինչ վնաս չի բերի։

Երբեմն լողանալից յետոյ երևում են փսխումն, դժուարամարսութիւն, ընչաւութեան գործարանների բորբոքումն, սուր խաղաւարտք մարմնի վերայ և այլն, այս դիպուածներումը երբեմն հարկաւոր է թողնել մի առ ժամանակ լողանալը։

10.

ՏԱՔ ՋՈՒՐԸ ԵՒ ԲԱՂԱՆԻՔԸ

Տաք Ջրով լողանում են ըստ մեծի մասին ձմեռն։ Լողանողները զգում են մի սխորժ տաքութիւն, որ տարածուում է և ներքին գործարաններում։ Տաք Ջրից մարմնի պինդ մասունքները կակղանում են, վատնորոյ տաք Ջուրը ունի բարերար ներգործութիւն երկար մանդալից կամ ճանապարհորդութիւնից վատակած, դաղարած մարդի վերայ, կարում է Ջղերի զրդռումն և հանդարտացնում է արիւնաշրջութիւնը և միսանունքը։ Նիհար մարդիկը Ջղային և մաղձային խառնուածի ակերը զգում են մեծ թեթևութիւն տաք բաղանիքից յետոյ, նոյնպէս այն անձինքները, որոնք անդադար ձգտում են խրեանց միտքը և չարժում կիրքը։

Տաք Ջուրը օգտաւէտ է երեխանց առողջութեան համար։ Տաք-

թութեան համար բաւական է շաբաթը մի կամ երկու անգամ լուանալ երեխին։ Եթէ ամէն օր են լողացնում երեխանցը, այն ժամանակ պէտք չէ երկար պահել ջրի մէջ։ Տաք ջուրը բարերար ճար է ծերերի համար, ինչու որ ծերութեան հասակում մորթը չոր է և պինդ, յօդուածները կարծր՝ հիւթերի պակասութիւնից, արիւնաշրջութիւնը՝ դանդաղ։ կենդանական ջերմութիւնը՝ պակաս, նիւթական գործարանները թոյլ. անդադար խարբուխը պակասցնում մորթի արտաշնչութիւնը՝ և այն։ Բայց ծերերը տաք ջրի մէջ երկար չպիտի մնան և շաբաթը մի անգամ աւելի չլողանան, ինչու որ նրանք երկար մնալով տաք ջրի մէջ և շուտ շուտ գործ ածելով՝ կարող են ստանալ ուղեղի կաթուած։

Կանայք կարող են գնալ բաղանիս դաշտանից յետոյ։ Բաղանիքը օգտակար է յղութեան վերջին ամիսներումը և ծիծ տալու ժամանակը։

Լուացուելից յետոյ հարկաւոր է իսկոյն սրբել մարմինը տաք ու չոր սաւանով ցրտահարութենից զգուշանալու համար։ Զափազանց յաճախ լողանալը թուլացնում է մորթը և առնում է նրան զգալի և ընդունակ շուտ շուտ ընկնել ցրտահարութեան հիւանդութիւնների տակ։

Տաք բաղանիս պէտք չէ մտնել իսկոյն կերակրից յետոյ, ինչու որ մարսողութիւնը՝ կերակրի հալումը կարող է յանկարծ դադարուել արեան դէպի մորթին դիմելու պատճառով։

Հիւանդութենից առողջանալու ժամանակը տաք ջուրը պահպանում է մորթի յատակութիւնը և փափկութիւնը և պակասացնում է ջղերի զրգռումը։

Զափազանց ջերմ ջրով լողանալը ոչ միայն օգտաւէտ չէ առողջութեան համար, այլև վնաս է, վասնորոյ շատ զգուշութեամբ պիտի գործածուի։

Բաղանիս պէտք է գնալ որպէս ամառն, նոյնպէս և ձմեռն։ Ամառան ժամանակը բաղանիքը օգտակար է նաև ամէն օր դեռումը լողանողի համար. ինչու որ բաղանիքի տաքութիւնը աւելի լաւ կարող է յատակել մորթին քրտունքից և դադարած մկանունքներին տալ զօրութիւն։

Արևելեան կողմը բաղանիքը գործ են ածում շատ անչափաւորաբար։ Արևելեան բժիշկները հաւատացնում են, թէ նրանց կանայքը վաղ թառամում են, կորուստնում են գեղեցիկութիւնը բաղանիքի չարաչար գործածութեան պատճառով։

Մարմնի չփելը, մերսելը բաղանիսում՝ շատ օգտաւէտ է, նա քշում է արիւնը մարմնի ներքին գործարաններից դէպի արտաքին գործարանները, հեշտացնում է արիւնաշրջութիւնը, զօրացնում է մորթու և մկանունքների գործունէութիւնը և կակղացնում է անդամները։ Մերսելը կենդանարար ներգործութիւն ունի այն մարդի վերայ, որի պաշտօնը

կամ արհեստը պահանջում է նստած կեանք վարել, բաւական պարապ ժամանակ չունենալով մարմնոյ համար։

Բաղանիս պէտք է գնալ մի կամ երկու անգամ ամիսը։ Անօթի փորով բաղանիս մտնելը վնաս է, ինչու որ տաքութեան ներգործութենից կարելի է թուլանալ, նուազիլ, բայց կերկրից յետոյ երկու կամ երեք ժամ պիտի անց կենայ, որ մարսողութիւնը չխանգարուի։

Զմեռն բաղանիս գնալիս չպէտք է երկար մնալ դուրսը ցրտումը. բայց եթէ անհնար է պահպանել այս զգուշութիւնը, գոնէ չմտնել խոյոն ուղղակի տաք բաղանիս, այլ մի փոքր հանգստանալ շորերը հանելու սենեակում։ Եթէ այսպէս չանէ, կարող է մարդ ստանալ խարբուղիս, հաղ և ուրիշ հիւանդութիւններ։

Բաղանիսից դուրս գալից առաջ օգտակար է հով ջուր ածել տալ վերան և դուրս գալից յետոյ ոտները լուանալ ցուրտ ջրով։ Այս հնարքով ոտները դառնում են ընդունակ ընդդիմանալ ցրտին և ցրտահարութեան։

Բաղանիսից յետոյ ցուրտ ջուր խմելը վնաս է, կարելի է խմել չայ և քիչ կերակուր ուտել, շատ ուտելը նոյնպէս վնաս է, ինչու որ մարսողութեան գործարանները այն ժամանակը զբաղուած լինելով, չեն կարող հալել կերակուրը։ Ով որ սովոր է ցուրտ ջրով լուացուելուն, կարող է միւս օրը կրկին սկսել լուացուիլ։

11.

ՋՐԱԲԺՇԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՑ ՀԱՄԱՌՕՏ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Ջուրը մի այնպիսի պարզ ճար է, որ թէպէտ կարող է փոխարինել գրեթէ ամէն դեղերը, որոնք առաւելապէս բաղկանում են հովացնող զօրացնող, զրդռող, քրտնեցնող, կակղեցնող և լուծանող ճարերից. բայց այսու ամենայնիւ անկարելի է համարել նրան ընդհանուր դեղ ամէն ցաւերի ընդդէմ։ Եթէ շատ ցաւեր ընդդիմանալով ամէն տեսակ դեղերին, շատ անգամ բժշկուումեն ջրի գործածութեամբ, այս հանգամանքը պիտի վերաբերենք աւելի հին երկարատև հիւանդութիւններին, բայց նոր սրընթաց ախտերումը, որոնք որ պահանջում են արագ օգնականութիւն, ջուրը ըստ մեծի մասին չէ այնքան ներգործական ճար։ Այսպէս ջրաբժշկութիւնը չպիտի դուրս հանի բժշկականութիւնից ամէն դեղերը և մենք խոհեմաբար օգուտ պիտի քաղենք երբեմն ջրից և երբեմն ուրիշ դեղերից։ Ջրի և միւս ճարերի ընտրութիւնը կախուած է բժշկի բանա՛նութիւնից, փորձից և ցաւի ճանաչելից։

Բժիշկ Դ. Ռօստոմեանց։

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՍԱՆԻՔ

ՆԵՐԳՈՐԾՈՂՔ

ՎԱՍԱԿ ԽԱՆ . . . . . Հարսնացուի հայրը։
ՆԱՐԿԻԶ ԽԱՆՈՒՄ . . . . Հարսնացուի մայրը։
ՇԱՀՍԱՆԱՄ ԽԱՆՈՒՄ . . Հարսնացուն։
ՄՂԴՍԻ ՆԱԶԱՐԵԹ . . . Փեսացուի հայրը։
ԳԻԻԼՆԱՐ ԽԱՆՈՒՄ. . . Փեսացուի մայրը։
ՃՌՕՑ ԽԱՆ . . . . . Մակարների մեծը։
ՔՕԶՄԱՐ ԲԷԿ
ԽԱԶՕ ԽԱՆԶԱՏԷ } . . Մակարները։
ԽՕՌՕՄ ԽԱՆՈՒՄ
ՇՈՂԷՐ ԽԱՆՈՒՄ
ՆԱԶԱՆԻ ԽԱՆՈՒՄ } . Պառաւ կանայք։
ԵՍԱՄԱՆ ԽԱՆՈՒՄ
ԳԻԻԼՆԱԲԱԹ ԽԱՆՈՒՄ
ՏԷՐ ԿԻՐԱԿՈՍ . . . . . Քահանայն։
ՍՕՆԱՑ ԲԱՋԻ . . . . . Պառաւ աղախինը։
ՌԷՑՀԱՆ ԲԱՋԻ . . . . Տատմէրը։

Անցքը անցանում է Թարվիզու Հայոց մէջը։

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՍԱՆԻՔ

ԵՐԵՒՈՅԹ ԱՌԱՋԻՆ

Տեսարանը ձևացնում է մեծ դաւիթ տան, որոյ դուռը բացուում է փողոցի մէջը։ Ներս են դալի փողոցիցը երկու մշակ, մինի քամակին ջվալով բրինձ, միւսի՝ կուժով գինի—մի խոյ, վրէն դիպակ ձգած, եղջիւրների վերայ մոմեր վառած, վղումը քիրմանի շալ կապած, ծայրիցը մի մարդ բռնած—մի խոնչայ (1) մի մարդոյ գլխին դրած, չորս կողմը մոմեր վառած, միջին ամանով հինայ դրած։ Նապարէն, զուռնէն փչվելով, քահանայն, աշխարհականք ձեռքերնումը մոմ բռնած, միմեանց հետը խօսալով, փսփսալով ու ծիծաղելով հետևում են զուռնաչիքանցը և ներս մտնում դաւիթը։

Երբ ամենքեանքն ներս են դալիս դաւիթը, մշակները՝ խոյ բռնողը՝ խոնչայ տանողը և զուռնաչիքը ածելով սկսում են պար դալ և դահլիճէն, (որոյ լուսամուտները նայում է դաւթին,) դուրս են դալիս օրիորդք երեսնէրնուն կպցրած զանվարաղ և փոչեա, և կանայք հաղնված, զարդարված, ոմանց ձեռ երեխայքը ստեանց վերայ կամ ձեռքերնումը բռնած, խառնուելով վերոյիշելոց, ըսկըսում են Մըրդէի (2) պարը պար դալ խառն ի խուռն, անկարգ, այս այն կողմը գնալով գալով։ Պառաւ կանայքը ստիպում են միւսները, որք ձեռնեբու-

---

1) Սկուտղ։ 2) Տեսակ պարուց Հայաստանի։

մը երեխայք ունին բռնած և չեն պար դալիս, վայր դնեն կամ ուրիշին կամ իւրեանց պահ տան ու պար դան : Սոցա մէջ խառն են երեխայ, տղայք կամ աղջիկք, յորոց մինը լաց է ընում, միւսը վերվեր թռչտակում, մինը պար եկող մօր փէշքերը բռնում, միւսը վաղում հօրը կամ եղբօր մօտը, որ նոր է նեռս եկած խնամիքանց հետը, մոմը ձեռքէնիցը խլել : Մին էլ դուրս է դալի յանկարծ խոհանոցէն, մրոտ՝ կեղտոտ դոդոնցով, մրուտատոր՝ արրած խոհարարը, մի ձեռքումը շերեփը, միւս ձեռքումը՝ դանակ, խառնվում կանանց մէջ, պար դալով դալիս խոյի չորս կողմը սկսում իւր պարը : Դահլիճի վրէն է փոքր սենեակ, ուր հարսնացուն նստած է մինակ, լուսամուտի թուղթը վոքր ինչ ծակած, մին աչքով նայում է պար եկողներին, և մինքը էլ երբեմն երբեմն ուրախանալով ծիծաղելով վեր է կենում պար դալիս, էլի դալիս տեղը նստում ակիցը նայում :

ՃՈՑ ԽԱՆԸ, ՔՕՉԱՐ ԲԷԿԸ, ՏԷՐ ԿԻՐԱԿՈՍԸ, ՎԱՍԱԿ ԽԱՆԸ :

ՃՈՑ ԽԱՆԸ

(Զեռները բարձր բռնած ձայնում է :)

Հէ՛ շաբաշ, հէ՛ շաբաշ՝ Աստուած շէն պահէ Շիրշէնց Գեւասպար[1] աղին, տուեց մի թոռման : (Անում է մի սև փող տալի զուռնաչուն:)

Հէ՛ շաբաշ, հէ՛ շաբաշ. սաղ[2] կենայ Ասրունց Դիլան բէկը, տուաւ տասնուութը խաղար[3] դիան, շէ՛ն կենայ, շէն կենայ: (Անում է երկու սև փող տալիս զուռնաչուն :)

Հէ՛յ շաբաշ, հէ՛յ շաբաշ, շէն կենայ նաջար[4] Կաղար[5] բէկը, տուաւ խինդ խաղար դիան : (Անում է մի սև փող տալիս զուռնաչուն:)

ՔՕՉԱՐ ԲԷԿԸ (Թռչտակելով :)

Դէ՛ մակարնէր, խարսանիքաւորնէ՛ր, ձէն տուէք : (Ամենքեանքն ձայնեն) Աստուած շնորհաւոր անէ՛, Աստուած շնորհաւոր անէ՛:

ՃՈՑ ԽԱՆԸ

(Նշանացի է անում, զուռնէն լսում է, պար եկողները քաշվում են այս այն կողմը կանգնում, քրանքանելնին սրբելով :)

Խնամի աղայ խարսնախէր, խանում խարսնամէ՛ր, խանում խարսաքուրէր, դէ՛հ, հիմի ձեր նօրաթն[6] է, եկէք, եկէք, խամեցէ՛ք, խամեցէ՛ք եկէք, մին քիչ էլ դուք ձեր փայը[7] պար եկէք, էսպէս օրը էլ չեն ամուչելի, դէ՛ նազ մի անէք, եկէք—այ աղայ Քօչար բէկ, խաչօ խանղանտէ՛[8], գնացէք խնամիքանցը դուրս բերէք, տեսնում՝ նազով են դալիս—չէ՛ ընում,

1) Գասպար : 2) Ողջ : 3) Թարվ իրեցիք հ տան միշտ Խ արտարերեն 4) Հիսն : 5) Ղաղար : 6) Հերթ : 7) Բաժին : 8) Խանի որդի :

ինչքերի չես խնդրում, աղաչում, դուրս չեն գալիս. ամէն խարանքում սրանց կարգ, կանոն և մարդավարութիւն պէտք է խեղճ մակարները սովորցնեն. խօմ գալու էք, եկէք էլի:

Քօչար բէկը և Խաչօ խան, զատէն մտնում են դահլիճը, հարնամօր և հարսնաքվոյների կռնիցը բռնում, քաշքաշելով դուրս են բերում բակը: Զուռնէն փչում է և սոքա էլ պար են գալիս Վասակ խանը էլ հետ է նոսն

ԿԻՐԱԿՈՍ ԳՈՒՀԱՆՆԱՑՆ

(Գաւազանով նշանացի է տնում, զուռնէն լռում է, կանայք էլ մի մի ղըլուխ են տալիս բազմութեանը, ներս դնում դահլիճը:)

Է՛հ Աստուած շնորհաւոր արասցէ՛, ամէնքդ էլ շատ նեղութիւն քաշեցիք, բաւական է, դէ՛ խնամի՛ք դուք էլ նեղութիւն էք քաշել, խամեցէ՛ք, խամեցէ՛ք նստէ՛ք: (Հիւրերը սկըսում են կարգով նստել բակի չորս կողմը փռուած գրի վերայ:)

ՎԱՍԱԿ ԽԱՆԸ

(Մօտանում է քահանային և աչը համրարում:)

Օշնեա՛ տէր, փառաւորի՛ք, բարով էք եկել աղանէ՛ր, խանէ՛ր, բէկէ՛ր, պարոննէ՛ր, իմ գլխի վրէն էք եկած. խամեցէ՛ք, խամեցէ՛ք նստէ՛ք, էս տունը ձեր մուրբասն[1], աշըաղխանէն է, տանտէրը դուք էք, ես էլ ձեր փոքրն եմ, ձեր ծառէն եմ (դէպ ի սպասաւորները) դէ՛ տղէ՛ք, գալեան, չիբուղ արաղ գինի, մազայ[2] բերէ՛ք: (Ծառայքը բերում են գալեան չիբուղը, համբոյրք են անում աշխարհականաց, իսկ արաղն ու գինին քահանային, նա էլ խաչակնքում տալիս է ուրիշներին: Նոքա էլ իմ գլուխ գրուխ են տալիս առում:)

Օշնեա՛[3] տէր, ծառայ եմ աջիդ, խնամի՛ պարոն Վասակ խան, Աստուած շնորհաւոր անէ՛, աչքդ լոյս:

ՏԷՐ ԿԻՐԱԿՈՍԸ (ամէնից վերջը գինին ձեռքումը):

Աղանէ՛ր, պարոննէ՛ր, խանէ՛ր, բէկէ՛ր, լսէ՛ք, ականջներդիդ դէս արէ՛ք, (լռում են ամենեքեանքն) Աստուած շէն ու խաստատ պահէ՛ տունս, բնակութիւնս, և նորա մէջի բնակիչները, Աստուած շնորհաւոր արասցէ՛ խարանիքըս, Տէր ամենակարողը անպակաս արասցէ՛ էս տանէն տեղէն էսպիսի ուրախութիւնները— ասացէ՛ք լիսբերան: (ամենեքեանքն ձայն են տալիս) Ամէ՛ն:—Մին էլ, (Ամենեքեանքն ձայն են տալիս) Ամէ՛ն:—Դէ՛հ, մին մին էլ, մին էլ ներ-

1) Գոյնանշան բառէր, այսինքն՝ խոնարհ: 2) Զոր մրգեղէն: 3) Օրհնեա:

բորդութիւնն է : (Ամենեքեանքն ձայնում են) ամէ՛ն : (Տէր Կիրակոսը կանգնում է, ձեռքը տանում դաւազանին, քօշերը հագնէ :)

ՎԱՍԱԿ ԽԱՆԸ

Տէրտէր, Ծառայ եմ աջիդ, կուլուղնէրումդ[1] ընինք, էլ ո՞ր էք գնում, Աստուած մին կտոր խսդ ու պանիր պարգևել է հալբաթ[2], խնդրում եմ էս գիշեր էստէղ մնաք խնամիքոնց խեաղը վայելենք :

ՏԷՐ ԿԻՐԱԿՈՍԸ

Աստուած շէն ու խաստատ պահէ տեղս, բնակութիւնս, օջախդ : Աստուած շնորհաւոր արացէ խարսանիքդ—հալա ժամանակ շատ կայ, կերթանք էլ կըգանք էլ, ինչ էս վռազում, էս գիշեր խինադրէք է[3], խանում բաջիքոնց[4] ուրախանալոյ ժամանակն է, նրանց պար գալոյ քէֆ անելոյ նօբաթն է, մեք մուրախաս[5] ընինք, բաւական է որքան վայելեցինք Աստուծոյ պարգևած բարերարութիւնները, շատ շատ նեղութիւն տուինք, մնա՛ք բարով :

ՎԱՍԱԿ ԽԱՆԸ

Փառաւորվի՛ք տէրտէր, դուք էլ պարոն խնամի՛ք շատ նեղութիւն քաշեցի՛ք, բախշեցէ՛ք, բարով խազար բարի եկի՛ք, ես էլ ձերն եմ, իմ տունը էլ ձերն է, Աստուած ամէնքիդ էլ էս վոխը անէ : (Զուռնէն սկսում է վէչել, խնամիքը մի մի ղուրս են տալի Վասակ խանին, դուրս գնում : Կանայք էլ դահլիճումը հարսնացուն էլ վերի սենեակումը վեր վեր են թռչտակում :)

ԵՐԵՒՈՅԹ ԵՐԿՐՈՐԴ

ՌԷՑՀԱՆ ԲԱՋԻՆ, ԽՕՌՕՄ, ՇՈՂԷՐ, ԵԱՍԱՄԱՆ, ԴԻԼՆԱԲԱԹ ԽԱՆՈՒՄՆԵՐԸ, ՆԱՁԱՆԻ ԲԱՋԻՆ

ՌԷՑՀԱՆ ԲԱՋԻՆ

Է՜հ, է՜հ, խէրիք է, խերիք պար եկա՛ք, ամէն մարդ իր տեղը նստի, չիրուղ ղալեան, գինի, արաղ, մազայ են բերում, նըստէ՛ք, նստէ՛ք, ղըաղ[6] քաշվի՛ք (սրան նրան բռթում է, ամէնեքեանքն սկը-

1) Ապաստամբ : 2) Ի հակէ : 3) Հինայ դնելու օրը : 4) Գոյներք : 5) Աղտաս : 6) Ավք :

սում են սենեակումը շարքով նստել: Չիբուշներ, զալեանները են բերում տալիս առաջ Խոռօմ և Շողէր խանումներին: Սրանք էլ առնում են ձեռքները, սրանը-բան են համբեցէք անում, ոչ ոք չէ առնում, իւրեանք են քաշում՝ տալիս մօտիկ նստողներին: Սոքա էլ նոցա նման այլոց են համբեցէք անում և իւրեանք քաշում տալիս միւսներին: Շատերը, որք չեն համարձակվում պառաւների մօտը քաշել, ուրիշ կնկայ խնդրում են, առաջնեն կանգնում է, որպէս զի պառաւները չըտեսնեն քաշելիս և կամ դուրս են դնում նախասենեակը կամ բակը, հնոեղ քաշում, վերադառնում, իւրեանց տեղը նստում: Ղարեան չիբուղը դուրս են տանում, դալիս է Ռէյհան բաջին ձեռքումը մին փոքր խանչայ, միջին քանի մի դատարկ բաժակներ, յետիցը երկու կին բռնած մի մեծ խանչի ծայրերիցը, մէջին քանի մի սրուակ գինի ապաղ և քանի մի ամանով մազայ, բերում են պար գալով դնում դահլիճի մէջ տեղը: Նաղարայ զուռնէն փչվում է:)

ՌԷՅՀԱՆ ԲԱՋԻՆ (բաժակները լցնում, համբեցէք անում)

Խոռօմ խանում՝, արաղ կուզես թէ գինի՞, ահա սրը կուզես վեր առ, երկուսիցն էլ լցրած եմ, խամեցէք, ձեր կնիկ ես, քոյ օշնութիւնը օշնութիւն է, առ, խամեցէք մին օշնէ նորախարսին ու նորափեսին: Շողէր խանում՝, դու էլ խամեցէք, վեր առ որիցը կուզես: Աղճի (դէպի այլ օրիորդ) ձեռքիդ բա՝, խինայ չես դրես խա՞, ջէհել ջիւան ես ի՞նչ կրլինի նեղութիւն քաշես, էտ մազէքանցիցը բերես, խամեցէք անես: (Նա բերէ:)

ԽՈՌՕՄ ՎԱՆՈՒՄԸ (բաժակը ձեռքումը:)

Աստուած շնորհաւոր անի՝ սանամէր Նարկիզ խանում՝, (Նա էլ գլուխ է տալիս) բարով գայ քավոր Գիքի[1] բէկը, էսպէս ուրախութիւնը անպակաս ընի էս տանիցը, հա՝ բարով գայ խանզանտէն էլ, նրա ուրախութեանն էլ արժանի ընինք: Շողէր խանում՝ սաղ ընի՞ս, ապրի՝ մարդդ, որդիդ: Նազանի՝ բաջի, բարով գայ եղնայ[2] Փիլիփոսը: Եասաման քավոր կի՞ն, բարով գայ քավորը, Աստուած մի զօչ[3] տղայ տայ: Դիւլնաբաթ ամուզան[4], ապրի՝ ամին[5], որդիդ, թոռնէրդ: Նորախարսնէր, ջէհիլ ջվաննէր սաղ ընի՞ք, ուրախ կենա՞ք (խմում է բաժակը տալիս Ռէյհան բաջուն ու վեր առնում չոր մրգերիցը, դնում բերանումը: Ամէնը գլուխ են տալի ասում,) Անուշ:

ՇՈՂԷՐ ԽԱՆՈՒՄԸ (արաղի բաժակը ձեռքումը)

Քեռակին Նարկիզ խանում՝, շնորհաւոր ընի, Աստուած անփոշմանելի անէ՝ Աստուած միւս աղճիկներուդ ուրախութիւնն էլ արժանի անի՞, բարով գայ Գիքի ապէրը[6] խանզատի հետ:

---

1) Գրիգոր: 2) Փեսայ: 3) Խոյ. և ես թէ զոչ ասիցին, նշանակէ զոյգ: 4) Հոբեղրոր կին: 5) Հոր եղբայր: 6) Եղբայր, կրճատեմամբ աւելն ապէր:

Ամուզան խոռօմ, օշնութիւնդ զողդ թավվի՛ : Նազանի սա-նամէ՛ր, մին ու անճար բալէդ՝ ապրի, նրա ուրախութեանն էլ արժանանք : Եասաման քավոր մէ՛ր, բարով քավորի տեսութեանն արժանանամ : Աղճի նազ խաթուն քո՛ւր, ուրախ կե-նամ : Գիւլնաբաթ դայեզան[2], դու էլ շատ ապրիս : Բալէ՛ք, մանր մունէ՛ր, պատիկ խանումնէ՛ր՝ վառվառէ, նանասի, Սան-դուխտ, ճանճիկ, Սանամ, ամէնքդ էլ սաղ կենաք, ծլէ՛ք ծաղ-կի՛ք, խնազանդ մնաք ձեր խօրը մօրը, ձեր մենծէրին : (Խմում է տրողը բաժակը յետ տալիս, մին քանի մաղա վեր առնում, դնում կրնկի վերայ, էս կողմէն էն կողմէն դրախ են տալիս ու կրկնում) Անո՛ւշ անո՛ւշ :

ՆԱԶԱՆԻ ԲԱԶԻՆ (դինոյ բաժակը վեր է առնում)

Խնամի Նարկիզ խանո՛ւմ, աչքդ լո՛ւս, շնորհաւոր ընի՛, շէն կենայ օջախդ, բարով ճամփորդնէրդ գան : Խոռօմ խա-նո՛ւմ ապ, քեզ արքայութիւն : Շողէր խանո՛ւմ անուշ խը-մեցիր : Նազանի խալայ[3], ապրի մարդ որդիդ : Եասաման քա-վոր աղճի՛կ, ապրի՛ սիրունիկ մարդդ : Նազ խաթուն ամրզրզի, ապրիս : Մանր մունրէ՛ր սաղ ընիք, որիդ կանաչ կանաչ կար-միրը չէ կապած, բարով կապո՛նք : (Դատարկում է բաժակը վերա-դարձնում, ու ջոկովի մաղէ՛ք վեր առնում, մի հատ տալիս խոռօմ խանումին, սա էլ ի փում է ձեռն նորա բիրի վրէն, առնում է ձեռքը դնում աչքի, դլխի վերայ, դրախ տալիս :)

ԵԱՍԱՄԱՆ ԽԱՆՈՒՄԸ (արաղի բաժակը ձեռքին :)

Խնամի Նարկիզ խանո՛ւմ, բարով դան խնամիքը, աչքդ լո՛ւս խոռօմ խանուում, խոդիդ լուս դառնայ : Շողէր խանուում քո դարաւաշն[4] եմ : Նազանի սանամէր, ապրիս ինձ համար, բարով սանամէրը գայ, մեզ էլ մին լաւ բիրեան[5] ուտացնես : Նազ խաթուն քեզ դուրբան[6] : Գիւլնաբաթ ամուզան, հին ճերմակ դինին մէնակ չխմես հա— ես քոնը եմ : Դուք էլ բա-լէ՛ք, ապրի՛ք : (Խմում է տրողը ու մաղա վեր առնում որան նրան համեցէք անում որպէս Նազանի բաջին :)

ԳԻԼՆԱԲԱԹ ԽԱՆՈՒՄԸ (դինին ձեռքումը)

Դայեզան Նարկի՛զ խանուում, Բարով գայ ճամփորդնէրդ, աչքդ լո՛ւս, փառք Աստուծոյ, էս տան ուրախութեանը տր-

---

1) Զաղ : 2) Բեռակին : 3) Մօրաքոյր : 4) Աղախին : 5) Խորոված ոչխ ոչխ դոռը կամ ոչխարը : 6) Մատաղ

ժանացանք: Խօռմ քավոր մէր, ամէն միջլիսի[1] գլխին նըստած մնաս: Շողէր խանում, անպակաս ընիս մեզանէ: Նազանի՛ քեռակին, բարով ձեր խին նարնջի դինուցը էսպէս ուրախութեան օրը խմենք: Եռատման բաջի, բարով գայ եզնէն: Նազխաթուն խալաղլի, Աստուած պահէ քեզ ինձ խամար: Ռէյհան խնամի, ես ու դու գիտենք, եալլահ—եալլահ[3], եթիշ եթիշ: (Մխմանց ձեռը ձեռին տան:) Նորախարսնէր, բալէ՛ք, դուք էլ ապրիք: (Խմում է և բաժակը վերադարձնում է ու վեր առնում մաղա, համեցէ՛ք անում, սրան նրան ձեռին խլելով:)

(Զուռնէն նաղարէն սկսում է ածվիլը: Գինոյ, արաղի բաժակները, սրուակները դուրս են տանում: Ներս է դալիս մին կին գլխին խոնչայ՝ հինով, պար գալով դահլիճի մէջին կանգնում: Միւս նորահարսները առնում են հերթով գնում գլխնէրնուն, պար դալիս: Վերջը գնում են սենեկի մէջ տեղը: Զուռնէն լռում է:)

ՌԷՅՀԱՆ ԲԱՋԻՆ

Ա՛յ բալէ՛ք, էլ ի՞նչ էք շուարած, պեղացած մտիկ տալիս: (Դէպի օրիորդները.) Ի՞նչ էք կանգնել, գնացէ՛ք նորախարսին դուրս բերէ՛ք: (Նոքա էլ վաղում են, մտնում միւս սենեակը, ուժով քաշքաշելով լայ ընող հարսնացուին դուրս բերում, նստացնում դահլիճի վերի կողմն բարձերի վերայ, աջու ձեռքը ուժով ճակտի վերայովը տանում, գնում բայ՝ շուռ տուած գաղաթի վերայ, մէջը լքցնումեն շաղաված հինիցը: Օրիորդները հերթով պար են դալիս, գնում մի մատը հարսնացուի բռան մէջի հինիցը թաթաթախում ու բարձր պահած մատը՝ էլի պար գալով գնում խոնչի մէջի հինովը ձեռնէրնին հինում ու գնում մաղալի կրակի վերայ պպղում՝ չորացնում:)

ՌԷՅՀԱՆ ԲԱՋԻՆ (մօտանում է հարսնացուին, զուռնէն լռում է:)

Աղջի՛, քիչ լացէ՛ր, աչքերիդ սուրմէն[4] ախր գնաց:

ԳԻՒԼՆԱՐԱԹ ԽԱՆՈՒՄԸ

Աղջի՛, քեզ չե՞ն ասում, խերիք լաս. (աղջիկը տանում է աչքերը սրբէ,) թո՛ղ, թո՛ղ արտասունքդ հնպէս սրբեմ, որ սուրմէդ չգնայ, քեզ զուրբան, քեզ մատաղ Շահսանամ խանո՛ւմ, հէ՞ր ես լացում:

(Զուռնէն նաղարէն կրկնում է, մնացեալքն ևս պար գալով առաջիններին նըման, գնում են ձեռքէրնուն հինայ գնում: Երբ ամենքեան վերջացնում են, նորահարսները խոնչէն ձեռքէրնումը բռնած՝ պար գալով բերում են, գնում հարսնացուի առաջին: Այս այն կողմէն աղլուխ են տանում շուռ շուռ հարսնացուի արտասունքը սրբելոյ: Ուժով նորահարսի ձեռքէրը մօտացնում են հինի ամանին,

1) Հանդէս: 2) Մօրաքվոր դուստր: 3) Աստուած, Աստուած. հասաւ, հասաւ: 4) Սև դեղ աչքերը քաշելոյ:

հինայ դնում ու մաղալը մօտացնում են ձեռնէրը վրէն պահում չորանայ։ Մին կէն գալիս է նայում նորահարսի աչքերին, դնում սուրմայ, միլը բերում, աչքերին ուրմայ քաշի։

ԵՐԵԻՈՑԹ ԵՐՐՈՐԴ

ՍՕՆԱՑ ԲԱՋԻՆ, ԽՕՌՕՄ, ՇՈՂԵՐ ԵՒ ՆԱՐԿԻԶ ԽԱՆՈՒՄՆԵՐԸ

(Մի և նոյն դահլիճը, սուփրէն ձգած, մէջին կերակուրների ամանները և գինայ սրուակները շարած, սուփրի չորս կողմը նստիք ձգած, վրէն մի և նոյն կանայքը ծարպատակ բաղմած։ Ոմանց երեխայքը մօտէրնին նստած կամ քնած, ոմանցը ծծի վերայ, գողումը քնած կամ նստած, կամ ծիծ են ուտում և կամ լաց ընում։ Մարդէրը էլ ոմանց բարկանում են, ոմանց խփում և ոմանց անիծում։ Սուփրի մէջ տեղը քանի մի աղճկէրք կանգնած՝ կերակուր են տալիս կամ բաժակները դինով լցնում, համեցէք անում նստողներին։ Բոլորի դլուխը տաքացած միմեանց թիքայ[1] են համեցէք անում, բարձր ձայնով այնպէս խօսում, որ էլ միմեանց չեն հասկանում։)

ՍՕՆԱՑ ԲԱՋԻՆ (կապուտ դաղիխով ներս է մտնում։)

Ա՛յ երվեք դո՛ւք, ա՛ կնիկ հալայ[2] սուփրէն չէք աւելացրել[3], բա՞ ե՞րվ էք սուփրէն աւելացնելոյ, ե՞վ նորախասրսին ծակ ու պուչաղ[4] ման ածելոյ, ե՞վ շոր խաքցնելոյ։ (Ոչ ոք ականջ չէ դնում, քօշերով մտնում է, սուփրէն դնում սրան նրան բրթելով, խօռօմ խանումի առջևն պպշում, կրկնում մի և նոյն խօսքերը ու աւելացնում,) Խօռօ՛մ խանում, ա՛ քեղ ղուրբան, ա՛ինր խնամիքը գալիս են, ի՞նչ էք անում կէս գիշեր դառաւ։

ԽՕՌՕՄ ԽԱՆՈՒՄԸ (բարկացած.)

Ի՞նչ—ի՞նչ—հո՞ւր են գալիս էտէնց շուտ, հալայ փլաւը, տօլմէն էլ չեն քաշել—ի՞նչ է, խնամիքը մին մարդ չէի՞ն կարող ղրկիլ խարցնել իմանալ՝ վախտն է[5] թէ ո՛չ։

ՍՕՆԱՑ ԲԱՋԻՆ

Դո՞ր չեն ղրկած—եանի[6] մին երկու մարդ էլ չեն ղրկիլ—էստեղ մարդ կա՞յ, որ դրուստ խաբար ասէ—եկողը գլուխը ո՞ր քարովը տայ, ե՞վ ամէն խարսանիքաւորնէրը խարփած են—ի՞նչ կուզէք արէք, խնամիքը գալիս են։

---

1) Պատառ հացի։ Սոցա հացը լաւաշ է, մի կողոր լաւաշի մէջը դնում են պանիր, միս, կանաչի ձուլը, և կամ ինչ որ լաւ են իմանում, փաթաթում համեցէք անում միմեանց։ 2) Դեռ ևս։ 3) Ա.յսինքն ժողովիլ։ 4) Անկիւն։ 5) Ժամանակ 9) Ա.յսինքն։

ՇՈՂԵՐ ԽԱՆՈՒՄԸ (ձեռքով կանչում է Նարկիզ խանումին)

Ո՞վ եկաւ, ումնից խարցրին—խիմի էդ պոչը կպցրէք—խարփած են—դուք էք խարփած—էս ինչ խայտառակութիւն է—խնամիքոնց միտքն է էս մարդի (ձեռքը դէպի Նարկիզ խանումը) խարջըն[1] խարաբ անէ՞ն։

ՆԱՐԿԻԶ ԽԱՆՈՒՄԸ

Ինչ՞, ինչ կայ—ինչ ա՞ եղել։

ՇՈՂԵՐ ԽԱՆՈՒՄԸ

Էլ ի՞նչ պէտք է ընի, խնամիքը գալիս են։

ՆԱՐԿԻԶ ԽԱՆՈՒՄԸ

Բույի՛—ի՞նչ էք ասում—քիւլը[2] դլխիս—ի՞նչ վախտ է։

ՍՕՆԱՑ ԲԱՋԻՆ

Վախտ, չվախտ—գալիս են, էլի։

ՆԱՐԿԻԶ ԽԱՆՈՒՄԸ

Ասա՛, քո դլուխը վկայ—քեզ խորեմ։

ՍՕՆԱՑ ԲԱՋԻՆ (զայրացած)

Գլուխդ էլ վկայ, քեզ խորեմ էլ, որ գալիս են։

ԽՕՌՕՄ ԽԱՆՈՒՄ

Ջանէրնին[3] դուրս կայ, դան ու քուչումը կանդնեն, ամիր բէջինս[4] Մարաղեցիք են էհ։

ՍՕՆԱՑ ԲԱՋԻՆ

Եանի դուք որ Թարվիզու մեծ պորտիցն էք, ջինսով էք, ի՞նչ է, քիչ են սպասել—կէս գիշեր անց է, պէտք է խարուբ ելիլի պատուելի տղամարդիք սպասեն, թէ կնանիքը, խանումները քէֆ են անում, գինի, արաղ են խմում, բարաքալայ ձեզ։

ՆԱՐԿԻԶ ԽԱՆՈՒՄ

Ա՛յ Սօնայ բաջի, քեզ մատաղ, իմ գլուխը կըսիրես, էլ կըռուի ժամանակ չէ—վեր կաց—վեր կաց—շուտ արա—գնա՛ խնա-

---

1) Մրսիս, ծախք։ 2) Մոխիր։ 3) Հողէրնին։ 4) Անաղդի։

միքոնցը խօսքով է, աղաչանքով է, մին կէս սհաթ յետ գցել տուր, մինչև մենք էլ սուփրէն աւելացնենք, հաղորդումենք[1]— վա՛յ, խողն իմ գլխիս, էս ի՞նչ խայտառակութիւն էլաւ։ (Սօնայ բաջին ուղում է դուրս գնայ։)

ՇՈՂԵՐ ԽԱՆՈՒՄԸ (գինւոյ բաժակը ձեռքումը)

Սօնայ բաջի՛, կացի՛ր, կացի՛ր—հալայ առ էս գինին, խմի՛, յետոյ գնա։

ՍՕՆԱՅ ԲԱՋԻՆ

Ա՛յ քեզ մատաղ, գինւոյ վախտն է՞, (վեր է կենում) թո՛ղ, թո՛ղ գնամ մին ճար անեմ։ (դուրս է գնում)

ՆԱՐԿԻԶ ԽԱՆՈՒՄԸ

Ա՛ ձեզ մատաղ, խարջս ջհաննամը[2], խարսնացուին ոչ քունջ, ոչ պուճախ[3], ոչ թոնդրատուն, ոչ հացատուն չենք տարել— բա ե՞փ պէտք է տանենք—ե՞փ շոր խաքցնենք։

ՆԱԶԱՆԻ ԲԱՋԻՆ

Դէ՛հ, խնամի Նարկիզ խանո՛ւմ, էլ խօսալու ժամանակ չէ, ելէ՛ գնա՛, վռազցրէ՛ փլաւը, տօլմէն տան ու սուփրէն աւելացնեն, առ էս թաս գինին խմի՛, յետոյ գնա։

Նարկիզ խանումը առնում է բաժակը, ամէնին գլուխ տալիս, խմում։ Ամենեքեանք էլ մին թիքայ են շինում, համեցէք անում նրան։ Սա էլ առնում է թիքէքը շարում դոկումը դուրս գնում։

ԵՐԵՒՈՅԹ ՉՈՐՐՈՐԴ

ԳԻՒԼՆԱՐԱԹ ԽԱՆՈՒՄԸ, ՇԱՀՍԱՆԱՄ ԽԱՆՈՒՄԸ.

Նկարագրվում է երեք սենեակ, այսինքն՝ հացատուն, թոնդրատուն և խոնեբանոց։ Բանի մի նորահարսներ և օրիորդներ վեր վեր թոչոտկելով, ծիծաղելով և միմեանց բռթելով, մին սենեակից ուժով դուրս են բերում հարսնացուին, որ ելի լաց է ընում, տանում են խոնեբանոցի օջախին 4 մոտացնում։)

ԳԻՒԼՆԱՐԱԹ ԽԱՆՈՒՄԸ

Դէ՛հ, բալէ՛ս, սիրունիկ աղջի՛կս, գլուխ տուր օջախին[3], շնոր-

---

1) Պատրաստենք։ 2) Դժոխքը։ 3) Ընկին։ 4) Կրակարան։

հակալուծիւն արա՝ որ հնքան տարի էտ օջախը քեզ կերակրել է, էս խասակիդ է խասցրել, —ասա —օջախ, ապատ[1] մնաս մինչև յաւիտեան : (Հարսնացուն լալով գլուխ է տալիս և Գիւնարաթի առաջնէրը կրկնում : Նոյն հանդէսով տանում են թոնդրատունը :)

ԳԻՒՂՆԱՐԱԹ ԽԱՆՈՒՄԸ

Որդիս, խէրիք լայիր, աչքէրիդ սուրմէն գնաց : (Այլք սրբում են արտասուքը,) *դէ՛, կռացիր, թոնրի ափը խամբուրէ՛ —ասա՝ —լիքը ու անպակաս մնաս, ինձ խալալ արա որքան քեզանէ դուրս եկած խացէն կերած եմ :* (Հարսնացուն լալով համբուրում է, և կրկնում նորա ասած խօսքէրը : Նոյն հանդէսով տանում են հացատունը :)

ԳԻՒՂՆԱՐԱԹ ԽԱՆՈՒՄԸ

Էհ՝ Շահսանամ խանում՝ աչքիս լուս՝ խէրիք է լացդ՝ գլուխ տուր՝ խամբուրէ՛ խացին—ասա—բարաքեաթով[2] ընիս խաց՝ ինձ նման շատերը բախտաւոր Ճամփայ գցես էս տանէն՝ լիքը՝ բոլ[3] մնաս մինչև Քրիստոսի դալուստը : (Հարսնացուն լալով կատարում է և նրա ասածները կրկնում :)

ԵՐԵՒՈՅԹ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՍՕՆԱՑ ԲԱՋԻՆ, ՎԱՍԱԿ ԽԱՆԸ, ՏԷՐ ՄԱՐԿՈՍԸ, ԳԻՒՂՆԱՐԱԹ, ԽՕՌՕՄ ՆԱՐԿԻԶ, ԳԻՒՂՆԱՐ ԽԱՆՈՒՄՆԵՐԸ, ՄԱԴՍԻ ՆԱՁԱՐԷԹԸ

Զուռնայ նաղարէն փչվում է, Երրորդ երեոյթի դահլիճն է, չորս կողմը ծալապատակ բացված են կանայքը : Դրած է նախատեսնեակումը մին խանչայ, մէջին հարսնացուի շորէրը, վրէն ծածկոց քաշած դիպակ : Նորահարսնէրը և օրիորդնէրը միմեանց ձեռքից առնում են խանչէն, գնում գլխնէրնուն, պար դալով բերում դահլիճը —էնտեղ էլ բաւականին պար են ածում, ապա բերում գնում մէջ տեղը : Մի օրիորդ դիպակը վեր է առնում, պար դալիս, յետոյ միւսնէրը մի մի գնում են խանչի մէջից հերթով մի մի կոտոր շորէրէն վեր առնում, ձեռքէրնումը բարձր պահում ու պար դալիս : Յառաջ արիալուղը են բերում պար դալով, չօքում հարսնածուի առաջնէն, (որ բարձի վերայ բազմած է) համբուրում, երկու ձեռքով պահում : Միւսնէրը առնում են հաղցնում : Յետոյ օյմէն 4) ու քուլաչէն 5) լուչակը 6), քօչէրը, գլխի շալը և ապա դառ քողը : Մնում է բուփակը 7), որն որ ամենայն օրիորդ պէտք է հերթով առնէ, պար դայ, յետոյ միւսին, մինչև ամենքեան վերջացնեն և ապա բերեն հարսնացուի առաջնէն պահեն ձեռքում :)

---

1 Շէն : 2 Արդասաւոր, առատ : 3 Առատ, շատ : 4 Դէյրա : 5 Քաթիրայ : 6 Զիքիրայ : 7 Ր-չ Պասկերէն ասի երես և ֆ-ն Հայերէն վանկի բայի սրմատն, այսինքն էֆ- ֆ-ով : Այս ես նման է կուսանաց քօլի. միայն զառով կարած և նոցա նման ես ծածկումեն գլխէրնուն :

ԳԻՒԼՆԱԲԱԹ ԽՍՇՈՒՄԸ

Սիրունիկ, բախտաւոր, Շահսանամ խանում, քեզ խետ եմ, աղջիկ, խերիք լաս, ախր աչքերիդ սուրմէն գնաց—էհ ապրիս, քիչ լայիր : Ահա՛ բուփակս (առնում է օրիորդների ձեռքից) ձգում եմ գլխիդ, էս է քո համեստութեան, ամօթխածութեան թաւ-գըն ու պարծանքը—հայով[1]—աբուռով խարսը ընի՛ս, խնազանդ քո մեծէրին, ապրի՛ս, ծլի՛ս, ծաղկի՛ս, պտղաբեր ծառ ծաղիկ ընի՛ս : (Ամենեքեանք ձայն են տալիս) Ամէ՛ն : (Բուփակը ձգում է գլխին: Միւսները դալիս են, համբուրում հարսնացուի երեսը և սում,) Աստուած շնորհաւոր արասցէ :

Խօնչէն ճնում է մէջ տեղը, կոտիկը մէջը դրած :

ՍՕՆԱՑ ԲԱՋԻՆ (դուրս է գալիս դատիվով)

Է՛հ, փա՛ռք Աստուծոյ, որ պրծել էք—ա՛ ձեզ մատաղ, էնքան էլ խարսնիքը կուշացնե՞ն : Ապա՝ դրստվէ՛ք, ամէն մարդ իր տեղը նստի՛, խնամիքը դալիս են : (Յանկարծ հարսնացուի զուռնէն նաղարէն լսում է, և բակումը ածվում է փեսայացուինը : Մտնում են դահլիճը, քահանայն գաւազանը ձեռքին, դտակով, Մղդսի Նաղարէթը, փեսայացուն և բազմութիւնը սոցա յետևէն, և ապա կանանց դասը սպիտակ և կապուտ դաղիփէքով : Դահլիճումը նստող կանայքը ոտի վերայ կաղնում են, մի մի գնում քահանայի աջը համբուրում ու ամէն նոր եկողներին մօտանում գլուխ տալիս : Հարսնացուի մայրը գնում է փեսայացուի մօր ձեռքէն բռնում, յառաջ, քաշում, բերում հարսնացուի մօտը կանգնացնում, որոնց հետևում են և միւս կանայքը, որ փեսայացուի մօր հետը էին եկած, երբ ամենեքեանքն իրեանց տեղը կանգնում են, զուռնէն լռում է :)

ՏԷՐ ՄԱՐԿՈՍԸ

Բարի ողջոյն ամէնիդ, մեր սուրբ հայրապետաց օշնութիւնը էտ տանը տեղն վերայ ընի և ձեր ամէնիդ վերայ : Խանում քուրէր, էս ի՞նչ իրաւունք է, թէ ձեր գլխին չէք խընայում, զոնէ էս ծերացած աշխատաւոր քահանայիս խնայէք, որ գիշեր ցերեկ ձեր խոգուոյ խամար աղօթք է անում. լուսացաւ ա՞խր, մինչև ե՞ր նստինք ու ձեր քէֆին, կամքին սպասենք : Ինչևիցէ, մերը մեզ խասաւ, դուք էլ ա լաւ քէֆ արի՞ք—լաւ պար եկա՞ք :

ԽՕԴՕՄ ԽԱՆՈՒՄԸ

Տէրտէր, ծառայ եմ սուրբ աջիդ, դուք էլ մին քիչ ուշ էիք

1 Ամօթով :

ժողովվել թ՞նչ կը լինէր։ չէ՞ք դիտում էս երկրի կարգը կանոնը, դու խօմ խամ չե՞ս։

ՏԷՐ ՄԱՐԿՈՍԸ

Է՛հ, օշնեալ ընիս, մեք որքան տշխատումենք էս վատ կարգ կանոննէրը վերջացնենք, չի ընում էլ՝—մեզ էս ասում, ուշ էինք ժողովվել—թ՞նչ կը լինի որ դուք մին քիչ շուտ նրստիք խացի, շուտ վեր կենաք, ու մինչև կէս գիշեր ժամ գնանք, դուրս գնանք, խեղճ քահանայքն էլ գնան իրանց տունը խանգըստանան։ աւելի շուտ վեր կենան առաւօտը գնան ժամը, ձեզ խամար աղօթք անեն։ Խօռօմ խանում, դու էլ խօ երեխայ չե՞ս—լաւ գիտես անխաւատի երկրումենք։ ինչէր է պատահում էսպէս ուշ խարսանիքիցը։

ԽՕՌՕՄ ԽԱՆՈՒՄԸ

Ձեր սուրբ աղօթքի շնորհքիցը բան չի դուրս գալ էս օջախումը։

ՎԱՍԱԿ ԽԱՆԸ

Ճռօյ խան բէ՛կ, դէ՛հ, թ՞նչ ես խնուու կանգնել, մօտ արի, թասէրը վեր առ, ինամիքոնցը մին մին գինի, արաղ խամեցէք արա։ Քօչար բէ՛կ, դու էլ նեղութիւն քաշէ, մազա խամեցէք արա։ (Նոքա էլ գինի արաղ և մազա են վեր առնում, անդանդանա բար նոր եկող տղամարդկանցը և կանանցը համեցէք անում, երբ ամենեքեանք պրծնում են։)

ՏԷՐ ՄԱՐԿՈՍԸ

Պարոն Ճրռօյ խան բէ՛կ, պրծա՞ր—դէ՞ գնա՝ պարոն Վասակ խանին բեր, խարսնացուի գոտիկը կապէ։ (Նա էլ նրան բերում է։)

Զուռնաչին սկսում է փչել, մի օրիորդ գալիս է գոտիկը խոնչիցը վեր առնում (դատարկ խոնչէն դուրս են տանում) ձեռքումը բարձր բռնած, պար գալով տանում, տալիս միւսին, մինչև ամենեքեանքն պարէրնին վերջացնում են, բերում են տալիս Վասակ խանին, սա էլ առնում է մօտանում հարսնացուին։ Ճրռօյ խանն էլ գնում է մղդսի Նազարէթին բերում նոցա մօտ, յետոյ գնում փեսայացուին և խաչադրօրը բերում։)

ՎԱՍԱԿ ԽԱՆԸ (լալով)

Որդի՛, ահա՝ Հոգւոյն սրբոյ շնորհքովը գոտիկդ կապումեմ մէջքիդ (կապում է), պինդ մնաս լուս խաւատիդ, հաւատարմութիւնդ և . . . . . .

Հարենացուն լալով ընկնում է հոր ոտքերին։

ԽՈՌՈՄ ԽԱՇՈՒՄԸ

Վասակ խան, աղճիկդ խնդրում է խալալ անես խացդ, աշխատանքդ։

ՎԱՍԱԿ ԽԱՆԸ (*լալով*)

Որդի, խալալ ընի՛ քեզ իմ աշխատանքը, Տէր Աստուած քեզ խետ . . . .

Հարենացուն էստեղից գլուխը բարձրացնում է ընկնում Մղդսի Նաղարէթի ոտքերը։

ԽՈՌՈՄ ԽԱՇՈՒՄԸ

Խնամի Մղդսի Նաղարէթ, խարսդ իր խօրիցը ձեռն է վեր առնում, յոյսը քեզ վերայ է կապում ու խնդրում է լալով աղաչանքով յօրէս լեզնէն քաղցր աչքով նայես նորա վերայ, ինչպէս քո որդուցը։

ՄՂԴՍԻ ՆԱՂԱՐԷԹԸ

Աստուած ինձ կեանք տայ, որ կարողանամ ցոյց տալ թէ ոչինչ զանազանութիւն չի պէտք է ընի նրանց եւ քոյ մէջը, ու բալքայ նրանցից աւելի պատուեմ քեզ, խարսը, ապրիս, ծլիս, ծաղկիս, վեր կաց։

Հարենացուն էստեղից գլուխը բարձրացնում է ընկնում իւր մօր ոտքերը։)

ԽՈՌՈՄ ԽԱՆՈՒՄԸ

Սանամէր նարկիզ խանում, խալալ արա՛ աղճկանդ կաթը դ, աշխատանքդ, խացդ ու նեղութիւնդ։

ՆԱՐԿԻԶ ԽԱՆՈՒՄԸ (*լալով*)

Որդի՛, բարով դնա՛ս, բախտաւոր կենա՛ս, խալալ եմ անում քեզ իմ կաթը մինչև յաւիտեան . . . . .

(*Հարենացուն լացը և ևս սաստկացնելով և աւելի ևս ջերմեռանդութեամբ ընկնում է սկեսուր Գիւլնար խանումի ոտքերը*)

ԽՈՌՈՄ ԽԱՆՈՒՄԸ

Խնամի Գիւլնար խանում, խարսդ դուռալով դուռելով լալագին աչքք խնդրում է, շնորհքդ դրանէ անպակաս անես, լաւ աչքով նայես։ Երեսը խօրիցը, մօրիցը, քվորիցը, աղբօրիցը, աղդականներիցը շուռ է տուել դէպի քեզ է դալիս—դու ընիս

քոյ Աստուածը, որանից խետոյ ինչպէս պէտք է սրան պահես, պահպանես։

ԳԻՒՂՆԱՐ ԽԱՆՈՒՄԸ

Վեր կաց իմ որդի, իմ աչքի լուս—ճշմարիտ է ծնողմարիցը խօրիցը ձեռք վեր առնիլը շատ դժուար է, ամմա դու նրանց մօտը մինչև էս օր օտար էիր, ղարիբ էիր, սրանից խետոյ իմ տունը քոնը է, ես քեզ մէր, պատրոնդ քեզ խէր, վեր կայ եմ դնում մեր մէջը մեր ստեղծողը, որ դու յօրէս խետանէն աւելի ուրախ օրէր անց կը անցնես, (հաստ ձեռքէն բռնում է վեր կացնում) վեր կաց, վեր կաց աչքի լուս, սիրեկան խարսը, բաւական է որքան լաց էլար։

Վարագոյրը ցած է ընկնում։

Գալուստ Շերմազանեան Վարդանեանց։

ՕՎՍԱՆԱՅ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Շարունակութիւն և վերջ*

6

Օվսանէն մնաց մէնակ, խանումը դուս դնաց։ Արտասունքը՝ ծովի պէս՝ էկաւ, աչքերը լցվեց, ցաւն ու կսկիծը՝ սիրտը տեղը էան արին։ «Էլ ի՞նչ յոյս ունիմ, սկսեց սքի տուտը բաց անիլ, էլ ի՞նչ պէտք է ժամանակն ինձ տայ։ Ի՞նչ յիմարութիւն ա, աչքը կթիլ, թէ միւս օրն ի՞նչ կդայ մարդիս գլխին։ Միւս օրն ի՞նչ պէտք է բերի ինձ պէս անտէր ողորմելու համար, թէ ոչ՝ ցաւ, կսկիծ, հիւանդութիւն, պառաւութիւն, ու մահ։ Ժամանակը էն հէքիմն ա, որ մէկի սաղացնում պրծացնում ա, հազարին մեռցնում, հողը դընում։» Քանի արտասունքը սրբում էր, էնքան դեսի պէս վէր էր դալիս ու վանջարումը դրած ծաղկների վրայ էր թափում։ «Խեղճ ծաղկներ՝ ասում էր ողորմելին՝ էրվելով, ձեզ

* Տես Բ. տարի թիւ Ե.։

քաղէլիս, ու էս սիպտակ չինէքանց միջումը դնելիս՝ հէչ ֆիքր չէիք անիլ, թէ ձեզ վրայ էլ ցօղ վէր կդայ, ամա էս էն ցօղը չի, որ հովացնի, աչքի արտասունքը դառը ցօղ ա, տաք, ոչ ձեզ հովութիւն կտայ, ոչ ինձ:»—

Էս խօսքին Ստեփանը ներս մտաւ ու քվորը հարցրեց: «Ի՞նչ էք անում էս տեղ՝ իմ ազնիւ քոյր» ասեց նա, որ տեսաւ, թէ մէնակ կանգնած է: «Իմ արևը, իմ ջրատար դըլուխն եմ լալիս, ի՞նչ պէտք է անեմ, պատասխանեց Օվսանէն: Աստուած մէկ օր հոգիս չի էլ առնում, որ պրծնիմ, կորչիմ: Ասացէք, վանոյին էս օր տեսնի՞ էք. թէ չէ:»—«Ի՞նչպէս չեմ տեսել, բաս առանց ինձ պէտք է գնա՞ր,» ասեց Ստեփանը:—«Ի՞նչ, գնա՞, հարցրեց կրակված՝ նա մկամ ուզում ա գնա՞յ:»—«Հրամել էք՝ խանում, էն ա՝ հազրվել ա:»—«Վա՛յ իմ դլխիս, արևիս, ասեց Օվսանէն, առանց ինձ տեսնելու, առանց մէկ բարով տալու, վա՛յ, վա՛յ . . . . էդքան քարացել ա սիրտը:»—«Մի բարկանաք՝ խանում՝ պատասխանեց Ստեփանը, վանան՝ Աստուած գիտէնայ՝ մեղ չունի, թող կսկիծդ խելքիդ չյաղթի, հաւատացէք, նա ձեզ էնպէս ա սիրում, ինչպէս աչքի լիսը, ամա ի՞նչ անի ողորմելին, չի ուզում, որ բաժանվելիս իրար կսկիծ տեսնիք, իրար վրայ տանջվիք, ու դու նրա սրտի հալն իմանայիր: Դարդ մի՛ անէք, քանի չունչս բերնումն ա, կեանքս, արինս քեզ չեմ խնայիլ, աչքիս լսի պէս կպահեմ, թաք դու մի քիչ դինջանաս, սիրտդ մի քիչ հովանայ:»—

«Էդ մեծահոգութիւնը, որ դու ունիս, էդ լաւութիւնը՝ որ դու ես ինձ անում, կրկնեց Օվսանէն, ես ո՞վ եմ, որ դրա փոխարէնը վճարեմ, Աստուած միայն կարող է վճարիլ: Գիտեմ, որ գիշեր ցերեկ չալիշ էք դալիս, իմ օրս քաղցրացնէք, ինձ մխիթարէք, ամա, ի՞նչ անեմ, որ մխիթարութիւնս էլ, յոյսս էլ վաղուց է մեռել: Բայց ինձ չի սազ դալ՝ որ ձեզ պէս բարերար, ձեզ պէս ազնիւ մարդի մօտ սուք անեմ: Էդ աշխարքի ողորմութեանն էլ ընդդիմա: Թողէք ուրեմն հեռանամ, ու էնպէս իմ դլուխը լամ, որ մարդ չտեսնի, ինձ ղընամիշ չանի:»— «Զունքի էդպէս ա, ես դուս կերթամ, որ ձեզ չնեղացնեմ, ասեց Ստեփանը, դուս գնաց ու գնաց էն օթա-

խը, որտեղ որ Վանօն թախ էր կացել, որ Նրան պատմի, ինչ որ անց էր կացել։—

«Ա՛խ՝ Վանօ ջան՝ ի՞նչ ասեմ, ի՞նչ անեմ, ասեց Ստեփանը տուն մտնելիս, երանի՛ թէ աչքս էլ՝ չէր տեսել Օվսանէն հրեշտակ ա, հոգեղէն չի։ Էն ի՞նչ լեզուա նրա բերնումը, էն ի՞նչ սիրտ նրա միջումը։ Էնպէս քաղցր էր, էնպէս ազնիւ նրա շարժմունքը, նրա խօսքը, էնպէս դառն՝ նրա արտասուքը, որ սիրտս կրակ դառաւ, անկարելի է, թէ նա անմեղ չըլի։»—«Ի՞նչ ես ասում, ձէն տվեց Վանօն՝ իմ սրտի մուրազն էլ հէնց էն ա, որ Օվսանէն իր գլուխն արդարացնի. բայց հիմիկ ի՞նչ անեմ, դեռ բանը չիմացած, չհաստատած, նրա զորդեմ, Աստուած կվերցնի։— Երանի՛ մէկ օր նրա անմեղութիւնը լիս ընկնի, թող հոգիս էն վախտը դուս գայ։»— «Աստդ ճշմարիտ է, ի՞նչ անեմ», կրկնեց Ստեփանը։—«Որ էդպէս ա, էլ ո՞ւր ես էդպէս դառը բաները անկաջս քցում, ո՞ւր իմ սիրան հրում, փոթորթում. իմ ցաւն ինձ հերիք չէ։ Մինչև բանը չդրստվի, աշխարքն աշխարքով դիպչի, էս նախանձի կրակը՝ որ ինձ առել էփում, խորովում ա, ոչ սէր կթողայ մնա, ոչ սիրունութիւն, ոչ սուք, ոչ կսկիծ։ Ա՛ման՝ էն ի՞նչ խշշոց ա, որ դրսիցը գալիս ա, սուս, սուս. թող իմանանք, ո՞վ ա։»—

Էս խօսքին Վանօն փանջարի փարդէն եդ քաշեց ու աչքը սանդուխտին քցիլն ու լեզուն կապ ընկնիլը մէկ էլաւ։ Ռանդ մռանդը թռած, սպրդնած՝ փանջարէն էլ եդ՝ ուսուլով հետ արեց, ընկաւ բարեկամի ճտոցը ու շունչը փրն ընկած՝ կմկմալով ասեց։ «Իմ տունը քանդվեց, Աստուած գլխիս բարկացաւ, թէ ճար ունիս, տես, Օվսանի հէրն ա սանդուխտը գվեր գալիս, Օվսանի հէրը, էլ ի՞նչ ես մնում։» —«Ի՞նչ ես ասում, զի՞ժ չես հօ,» կրկնեց Ստեփանը։—«Իմ արևը, քո աչերը գիտէնայ, նա է, մէկ դուռը գտի՛ր, թէ չէ երկուսս էլ կորած ենք։» պատասխանեց Վանօն։ «Ղորդ Օվսանի հէրն ա, ինչպէս իմացար,» հարցրեց Ստեփանը։—«Տէր Աստուած՝ հօ քօռ չեմ, քանի՞ հարցնես, քանի՞, բանը բանիցն անց կացաւ, գնա՛, գնա՛։»— «Որ էդպէս ա, դու փանջարիցը եդ քաշվի՛ր, ասեց Ստեփանը, քեզ համար անսաս էս տեղ կաց, ես կերթամ, կտեսնիմ, ընչի՞ համար ա իմ տունս էկել։ Ի՛նչ անելու է

էն վախտը կանենք։»— «Ես մնամ էս տեղ, ես հետդ չդամ, ես, կրկնեց Վանոն, էլ ի՞նչ հարցնել կուզի, թէ ո՞ւր ա էկել։ Էկել՝ ա, որ իր կորած որդին, իր աչքի լեսը դանի, քանս էս էլ յայանի բան ի՞նչ կըլի։ Մկամ չար հրեշտակը չի՝ նրան իր ազիզ որդու տեղն իմաց արել, որ իմ օրս խաւարացնի։ Սիրաս ուզում՝ ասաքի՝ Ստեփան Ջան։ Թող՝ սիրելի՝ թող՝ ես էլ դամ, մահն ա՝ իմ վերջս էս օր, թուրն ա՝ իմ Ջանը։ Հիմիկ որդի որ ա՝ Օվանէն դուս կգայ, աչքովը կընկնի, էն ժամանակը վա՛յ իմ օրին, վա՛յ իմ արևին։»— «Ա՛խ՝ աչքի լեսս՝ ի՞նչ հարկաւոր ա, հէնց շուտ վատ բաներ մտածել, խօսքը կտրեց Ստեփանը, էդ ի՞նչպէս սիրտ ունես, հլա բանի վերջին մտիկ արա, ի՞նչ ես վռազում։ Ժամանակ հլա շատ ունես, որ քո սիրած Օվանիդ պահես։ Քեզ ու քեզ ի՞նչ ես փորձանքի առաջը վազում։ Սպասի՛ր, թէ որ տեսնես հնար չկայ, էն ժամանակն քո գլխի ճարը տես։ Ջուր չտեսած, բորիկանալ՝ ի՞նչ խելք ա։»— «Ինչ որ ասում ես էդպէս կանեմ, կրկնեց Վանոն։ ամա տես՝ սի՛րելի, բանն էնպէս բեր, մէկ ինաս չի դուս գայ, թէ չէ՝ գլուխս վեր եմ դրել էդ բանի խաթեր։»—

Ստեփանը՝ բարեկամին հանդարտացրեց ու դուս գնաց, Մելիք Պետրոսին քաղաքավարութեամբ գլուխ տվեց, դալը բարովեց։ Սա էլ ծոցիցը մէկ թուղթ հանեց՝ նրան տվեց։ Էս թուղթը Ստեփանի բարեկամի մէկն էր Շուշվայ—դալիցը գրել ու խնդրում էր նրանից, որ Օվանի հոր բանին գլուխ քաշի, նրա պատուը՝ իրը համարի, չունքի ասում էր, թէ լսել ենք, որ մէկ Երևանցի Գեորգին է՝ էն ժամանակը Շուշի էկած էլել, ու, Օվանի կորչելն ու նրա գիւմ ըլելը մէկ ա էլել։ Օվանի դարաւաշին էլ որ բանդն են քցել, նա էլ ա իր բերնովը խոստովանվել, թէ ինքը իր ձեռովն ա Գեորգուն բաղը նեքսև տարել, նրանից փող առել ու նա՝ պէտք է՝ որ Երևանցի ըլէր։ «Սի՛րելի բարեկամ, Ստեփան՝ դրած էր, իմ խաթեր, հէնց իմացէ՛ք, պարոն Մէլիք Պետրոսի բանը, ձերն է։ Բարեկամի, որդու պէս նրան քօմակ արէ՛ք, չունքի էդ մէկ որդին ունի աշխարքի երեսին։ Էնպէս բան արէ՛ք, որ դա իր ջիգրը հանի, ու էնպէս դալը, թշուառ մարդին՝ իրանն ի-

բան հասցնի, որ սիրտ արեց, էդպէս ազնիւ մարդու օջախի անունը քարովը տայ: Էսպէս սուրբ պարտաւորութիւնը մէկի վրայ էլա չէի դնել. ես ինքս կանէի, բայց չունքի ջանումս էլ զվարթ չկայ, ես էլ ուրիշի չեմ հաւատալ էս բանը, թէ ոչ՝ իմ կորիչ իմ աղեղ բարեկամ Ստեփանին, որ ես նրա ազնիւ սիրտը լաւ կճանաչեմ: Քեզ տեսնեմ թէ ի՞նչպէս կանէք:» Թղթի վերջի խօսքերն էստոնք էին:

«Աչքիս դլխիս վրայ, ասեց Ստեփան, երբ թուղթը կարդայ, պրծաւ: Հոդով մարմնով ղուլլուղիդ հաղիր կանդնած եմ: Թէ կուզես, հէնց էս սհաթին գնանք, էն տղին մանդանք: Նրա աչքը դուս դայ, ինչ տեղ ըլի, կհանենք, դուս կբերենք, դրա համար հէչ դարդ մի՛ անիր: Բարեկամիս խաթեր դլուխս էլ որ ուզես, քեզ փէշքաշ: Դորդ ա, մէկ ջահել տղայ, հէրնըմէր էլ չունիմ, ամա էդպէս բանի համար ջանս եդ ունիմ դրած: Գնանք, էլ ուշանալ պէտքը չի՛:»— Մէլիք Պետրոսը շատ բաւական էր էս խօսքերիցը, որ Ստեփանը էնպէս ուզեղ սրտով ուզումէր, իրան քօմակ անի, բայց ողորմելին չէր իմանում, թէ իրան ուզումեն դլխից ռադ անեն, որ աղչկանը չտեսնի: Ստեփանի ոտները դետնիցը կտրվեցան, որ տեսաւ՝ թէ հէրը որդու տեղը պետ չի խաբար: Զալիս դալն էր, որ նրան հեռացնի ու Օվսանին՝ մէկ ուրիշ տեղ տանի, պահի: Վանօն հօ՝ որ հարիր անդամ հոդի էր տվել, եդ առել, էնպէս ուրախացաւ, էնպէս սիրտը տեղն ընկաւ, որ էլ ասիլ չի ըլել: Ի՞նչքան դովեց իր մաքուրմը իր բարեկամի ճարտարութիւնը, հնարագիտութիւնը, որ էնպէս նրան ռադ արեց, փորձանքից ազատեց: Էն էր ուզում, որ էն սհաթին բարեկամը նեքսև դայ, մի ճտովն ընկնի ու իր շնորհակալութիւնն անի:—

7.

Հէնց Ստեփանը Մէլիք Պետրոսի հետ դուս գնաց թէ չէ, Մադդալ դարաւաշը Գէօրդուն՝ բաղովը նեքսև բերեց ու թուշ լանումի մոտ տարաւ, որ հեռը խօսայ, սիրան առնի ու բարերշին: Գայլանէն տանն էնպէս ծանրաղողոթ նստել աչք ու

ունք կիսել էր, որ իմանայ՝ թէ շատ բարկացած է Նրա վրայ։ Երես երեսի որ առան, երկուսի սիրան էլ գնաց։ Գայիանէն երեսը հանց մի քիչ թոնթորաց, խժի բժի արեց ու էլ կակղեց, խմոր դառաւ, որ լսի Գեորգու արած մեղքը։ Էն ա հա՝ խոստովանութեան տուտը բաց էլաւ, թողութիւնն ու ապաշխարութիւնն էր մնացել, որ ամէն ծուռն ու մուռը դրստի, սատանի՛ն նալսթ՝ մէկ էլ էն տեսան, որ Մաղդաղ ղարաւաշը՝ լեղապատառ նեքսև ընկաւ ու մաղերը պոկելով դուռաց, «Խանում՝ ղլխիդ ճարը տես, Ստեփան աղէն գալիս ա։»—Խոստովանութիւնը էլ հարամ էլաւ, ապաշխարութիւնն էլ, Գեորգին ափալ թափալ ընկաւ էլի էն օթախը, որ տեղ որ անց կացած դիշերը գլուխը պահել էր, Գայիանէն էլ՝ ջանը դող ընկած, հայլին ձեռն առաւ, որ երեսի կարմրութիւնը մէկ կերպով փախցրնի։ Ստեփանը թուշ էկաւ, մնաւ իր օթախը։ Էս տեղից մէկ դուռը կար Վանոյի մօտ գնալու։ Հէնց մնաւ Նրա մօտ, էլ չթողաց՝ որ բերանը բաց անի, խնդրեց, որ շուտ գնայ, հայեաթի դուռը բռնի, «Ֆորսը ձեռքներս ա ընկել, ասեց թայթի, հունար ունիս, բանացրու, որ էլ չփախչի։ Հէնց էս սըհաթին տեսայ, որ մէկ մարդ մեր հայեաթը մտաւ։ Էս ասեց ու գնաց քիոր օթախը։ Վանօն էլ մէկ ուրիշ փիլաքանով վեր էկաւ ու վազելով գնաց, որ հայեաթի դուռը բռնի։—

Արևն աչքը կապած՝ սկսեց Ստեփանը դուռն ու տունը տակ ու վեր անել, չգտաւ։ Վերջը էնպէս կատաղած՝ մտաւ Օվսանի օթախը, չունքի բոլոր տանն՝ էլ տեղ չէր մնացել, որ մնն չգայ, ինչպէս մէկ գիւլլա մարդի գլխին դիպչի ու էնպէս սառած մնաց տեղն ու տեղը քարացած կանգնած, էնպէս էլաւ ողորմելուն։ Միսը վրէն սրսռաց, աչքը սևացաւ, տունն ըսկըսեց գլխին պտիտ գալ, որ տեսաւ՝ թէ Օվսանէն էնպէս կըտաւի պէս սիպտակել՝ դողումա, ու Գեորգին՝ մօտին կանգնած, ձեռը բռնած ունի։ Պէտք է իմացած, որ ինչ ժամանակ Ստեփանը՝ տունը քրքրում էր, Գեորգին տեսաւ՝ որ Օվսանի օթախի դուռը բաց էր, բէխաբար ներս մտաւ ու խելքը գլխիցը թռաւ, երբ Նրան էն տեղ տեսաւ։ Գայիանէ խանումն էլ՝ ջանը դող ընկած, որ չէր իմանում, թէ ի՞նչ անի, իր ղարաւաշ Մաղդաղի հետ դէս ու դէն էր ընկնում, որ մէկ ճար

գոնի, բեղաՖիլ էս տեղ որ մաաւ, հէնց խմացաւ, թէ ամէն բանը լիս ա ընկել։ Բայց ի՞նչքան անասելի էր նրա զարմանքը, երբ որ լսեց՝ թէ Օվսանէն՝ ծնկան վերայ չոքած, ձանը ջուր դառած՝ գէմը լալիս, դոշին ծեծում էր, գէմը ասում։ Ա՛ղայ Ստեփան՝ Աստուած, երկինք, գետինք, ղորդ ա, սա էն մարդն է, որի խաթեր որ ես էսպէս տանից, տեղից զրկվել, էս տեղն եմ ընկել, հօրից, աշխարքից հեռացել, զարաւաշ դառել, ամէնի աչքիցն ընկել, օրս ու ումբրս էսպէս խաւարացընում, բայց էլի բանից խաբարութիւն չունիմ, չունիմ։ Քարանամ, կուրանամ, թէ էս բանը գիտենամ, հաւատացէք»։ . . . . . .

«Ձէնդ կտրի, բեհայեայ լաչար՝ խօսքը կտրեց Ստեփանը, լեզուդ քի՛ղ արա, անզգամ կեղծաւոր, գարշելի կենդանի, որ ինչ արել ես, հէրիք չի, ինձ էլ ես ուզում, խաբես։ Ինչ որ ա, խմացանք, էլ նհախ տեղը, ոչ գլուխդ ցաւացրու, ոչ խօսքդ քամուն տուր, լեզուդ քեղ պահի՛ր։ Գլուխ չունիմ, որ էլ քեզ անկաՀ դնեմ։»—«Երեսըդ պարզ կէնայ՝ պարոն Գեորգի», խօսքը շուռ տվեց Ստեփան, հիմիկ լաւ խմացայ, թէ ընչի՞ համար էք իմ տունս մտել. հէրիք ա, ինչ որ արիր, ոտըդ կըտրի՛ր մեր շեմիցը, մենք մեր դաւին չօլումը քուԹահ կանենք, մեր հեսաբը էն տեղ կվերջայնենք, հիմիկ հեռացի՛ր աչքիցս, ու գլխիդ Թաղարէքը տես։» Ա՛չքիս վրայ՝ ձէն տվեց Գեորգին՝ ու շատ ուրախացաւ իր մտքումը, որ բանն էսպէս էկաւ ու ախպէրը քվոր պակասութիւնը չիմացաւ։ Գայիանէ խանումն էլ՝ էնպէս կարծեց, թէ Օվսանէն՝ տեսնելով, որ իր խանումը, էնպէս փորձանքի մէջ ա ընկել ու դժար տեղն ա, իր սիրած Գեորգու հետ խօսքը մին ըլի արած, որ էսպէս մէկ հնարք գործեն, Ստեփանին գլխից հանեն, որ խանումի անունը բէդնամ չըլի։ Էս անօրինակ մեծահոգութեան վրայ մնացել էր զարմացած ու մտքումը դրեց, որ Օվսանին հաղար լաւութիւն անի, արածի փոխը՝ մէկին հարիրը իրան հասցնի, ու էս լաւութեան տակիցը դուս գայ, որ իրան էսպէս քոմակ արեց, էս նեղ տեղիցն աղատեց։—

Գեորգին տանիցը դուս էկաւ թէ չէ, ցնխիցը կտրի մէջն ընկաւ, վանօն՝ նրան ճանաչելով՝ խկոյն վը ոչ պրծաւ ու ըս-

կրսեց նրանից հէսաբն ուզել։ Գեորգին չէր ճանաչում, թէ ով ա, չունքի գիշերն էր նրա թրին ռաստ էկել բայց ամենեւին երեսը չէր տեսել։ «Ինձ՝ պէտք է՝ որ ճանաչէք, ձէն տըվեց Վանօն, մոի՞տ չի, որ Շուշվայ—ղալումը՝ հոգիդ բերանդ հասած՝ վէր ընկած թողի ու ես դուս էկայ։ Ցոյս ունիմ, որ պակասն էլ՝ էս օր թամամ անեմ։»—«Շատ ուրախութեամբ կանէի ասածդ՝ պարոն, խօսքը եդ դարձրեց Գեորգին, բայց ի՞նչ անեմ, որ հէնց էս սհաթին ուրիշի խօսք տվի, հլա պարոն Ստեփանի հետ հէսաբս վերջացնեմ, յետոյ՝ թէ ջանս սաղ մնայ, քո ղուլլուղն էլ կքաշեմ։»— «Իմ բանն ամէնիցը թայթի է, պատասխանեց Վանօն, հլա իմ ջուղաբը տուր, յետոյ՝ ինչպէս կուզես՝ էնպէս արա։»—«Չունքի էդպէս է, ասեց Գեորգին, գնա՝ Ստեփանի հետ խօսա՝ ինչպէս նա կասի, էնպէս անենք։»— Վանօն միտք արեց, որ ասածը դրուստ է, ու շատ տոՀթ էլ ա՝ օրը ճաշին՝ քուչի միջին բանը երկարայնի, մանաւանդ որ՝ շատ անց ու դարձ անող էլ շատ էր ըլում։ բաղէքն էլ՝ անկաջները կթել՝ մոիկ էին տալիս, որ տեսնին, թէ ի՞նչ խաբար է։ Ճարակտուր՝ դլուխը կախ քցեց, նըրան ձեռաց թողեց ու ինքը նեքսև մտաւ, որ Ստեփանի հետ մասլահաթ անի, թէ ի՞նչ սհաթի պէտք էր դուս գնացած, որ իրանց թշնամու ջիգրը հանել էին։

Վանօն տեսաւ՝ որ իր բարեկամը խիստ շատ բարկացել ա Օվսանի վրայ։ Փորձանքն ու երեւոյթը խօսքը մին էին արել, որ ողորմելու դլխին նոր տարաբախտութիւն բերեն։ Գայիանէ խանումը էստոնք բոլոր իմացել՝ ուզում էր սրտի հէրսիցն ու նախանձիցը՝ բողազը դուս ճոթռի։ Իրան իրան կորատում, սղանում էր, ու դլուխը քարէքար էր տալիս, որ Օվսանին, ինչպէս որ ըլի, աչքիցը հեռացնեն, կորցնեն, որ նա էլ իր տանը չերեւի։ Հիմիկ իմացել էր, որ սա էր իր սիրեկանի ուղած աղջիկը։ Սրա համար էր նա եարալու էլել էլ ի՞նչը նրան կըհանդարտացնէր։ Բայց ինչ Օվսանի հալն էր, Աստուած ոչ ըհանց տայ։ Ամէն բոպէի կարող էր Մէլիք Պետրոսը ներս մտնել, աղջկանը էն տեղ տեսնել ու վայն էկել էր, ամէնին տարել։ Մէկ միտթարութիւն էր ողորմելու համար մնալ, ղորդ ա՝ շատ էլ դառն էր։ Էս ցաւալից, էս սարսափելի ժա-

մանակին իմացաւ՝ թէ ո՛րքան աղնիւ ու իստակ էր Վանօի սէրը։ Ո՛րքան մեծ հոգու տէր էր, ո՛րքան բարի էր նրա սիրտը, չունքի Վանօն որ տեսաւ ու իմացաւ բանի զօրութիւնը, միտք արեց՝ թէ կարելի է՝ Գեօրգին ու Օվսանէն՝ իրաւ իրար սիրում են, խնդրեց իր բարեկամ Ստեփանիցը, որ Սելիք Պետրոսին մուտնաթ անի, աղաչի, որ աղջկանը Գեօրգուն տայ, էնքան չմաշվին, չտանջվին։ Նհախ տեղը Օվսանէն գլխին, դոշին ծեծում, օրթում էր ուտում, երկինք, գետինք վկայ կանչում, թէ նա Գեօրգուն չի սիրում, թէ նա իր աչքի փուշն ա, թէ նա բնաւ չիմացել, թէ Գեօրգին Երևան ա էկել, կամ նրանց տունը մտել։ Նհախ տեղը՝ երեսը գետինն էր քսում, աղաչում, պաղատում, որ իրան էս դժոխքիցն ազատեն, մէկ հեռու, աղքատ վանք ուղարկեն, որ գնայ էն տեղ, իր գլուխը լայ, իր սև օրը վերջացնի։ Ցղամարդիքը խօսքին չէին հաւատում ու Գայիանէ խանումը հօ՝ էնպէս էր նրա օրթումն ու ասածը ընդունում, ինչպէս թոյն, ինչպէս մահադեղ ու անդադար գլխին թուք ու մուր ածում։

8.

Ինչ ժամանակ Օվսանէն՝ էսպէս արտասունքի միջումը լեղ տալով՝ գետնի վրայ մնացել էր Գայիանէ խանումի ոտի տակին ընկած ու ձեռները բարձրացրել՝ աղաչում, պաղատում էր՝ որ իրան պրծացնեն, մէկ կողմի վրայ կորցնեն։ Գայիանէ խանումն էլ հօ՝ էնպէս քարացել՝ հէնց իմանում էր՝ իր հոգեառն ըլի առաջին ընկած. ո՛չ լացին էր անկաջ դնում, ո՛չ կսկծալուն, ու էն երկու բարեկամքն էլ՝ արիւնն աչքերը լցված՝ հէնց իմանում էին, թէ մէկ արդար գործք են կատարում, որ ողորմելի Օվսանին էնպէս տանջում, չարչարում էին, սրածն երեսովը տալիս, յիմար, անխելք, կեղծաւոր կանչում, խղճին էնպէս սաղ սաղ սպանում, բիրդանը իր մեծ զալն դրուները ճռռալով եդ դնացին, ինչ տեղ որ էս չորս հոգին էին, ու կնեաց Գեօրգին ներքսև մտաւ, աչք ու ունք հաւաքած, բայց քարացր կերպով։ Ամէնն էլ մնացին զարմացած։ Ամէնի սըրտումն էլ մէկ տեսակ խորհուրդ անց կացաւ։ Բայց նա էլ չը-

թողայ, որ նրանց մէկն էլ ա խօսի, ինքը սֆթայ բերանը բաց արեց։

«Զուռնքի իմ աղնիւ թշնամիքը ինձ չեն ման գալիս՝ ասեց, ու ես էլ հէնց էս հաթին իմացայ, որ ինձ համար մէկ ուրիշ դուշման էլ ա լիս ընկել, որ արինս՝ ուզում՝ խմի, էստուր համար եմ էկել, ու էն իմ երրորդ դուշմանին էլ էս տեղ կանչել՝ որ մենք ամէնս էլ կճանաչենք, որ Մելիք Պեարոսն է։ Նրան էս տեղ բերելու միաքս էն է, որ նրան ամեն բանը իմացնեմ, ինչ որ անց է կացել։ Իմ արած յիմարութիւնն էլ եմ լաւ իմանում, խեղճ հօր նեղութիւնն ու վնասն էլ։ Բայց էլի մուրազս էն ա, որ էս մութը, խճուճ բանը պարզեմ, ճշմարտութիւնը յայտնեմ, որ մէկին էլ ա վնաս չհասնի։ Ինչ ուզում էք, հաղիր եմ, մէկ օր ծնվել եմ, մէկ օր էլ պէտք է մեռնիմ, բայց քանի սաղ եմ, բանն էսպէս խառը չի պէտք է մնայ։ Որ ես էլ չասեմ, շատը պէտք է նհախ տեղը նեղանան, տանջվին, Մելիք Պեարոսը էնպէս ա կարծում, թէ ես եմ նրա աղէկը փախցրել։ բայց Աստծուն յայտնի ա, ես հէնց էս օր եմ իմացել թէ նա ձեր տանն ա։ Բայց նրա փախցնողին ու նշանածին՝ իր խօսքիցն ու շարժմունքիցը լաւ ճանաչեցի, որ հրէս էս տեղ կանգնած ա։ (Ասեց ու վանօին ցոյց տվեց։) Շատ ժամանակ չի անց կացել, որ սա ինձ իմացուցրեց՝ թէ ինքը ի՞նչ հուսարի տէր ա, ու էս օր էլ նշաններիցն էնպէս եմ վարավուրդ անում, որ Օվսանի սիրողը սա պէտք ըլի, ու ոչ ես։»

«Հիմիկ ամէնից դժարն ա մնացել, որ ասեմ, իմ մեղքս խոստովանվիմ։ Վայ ինձ, իմ արածն է, որ Աստուածանից թաքուն չի, ձեզ ոչ թաքցնեմ, ու անմեղին կրակը քցել տամ։ Ճշմարիտն եմ ասում, ինձ չքարկոծէք։ Շուշվայ զալէն որ գնացի ու Օվսանայ խանումին տեսայ, սիրտս կրակ ընկաւ։ Մէկ զարաւաշ ունէր, նրան՝ ինչպէս որ էլաւ, փողով բանով խելքից հանեցի, խաբեցի, ու մէկ գիշեր-մնայ նրանց բաղը։ Օվսանայ խանումը բանից խաբարութիւն չունէր, մէկ խօսք էլ ա չէր իմացել։ մեղաւորը ես ու զարաւաշն ենք։ Թէ էս պատուելին չըլէր էնպէս կրակված, բարկացած, թէ սրա թուրը բերանս չփակէր, էն սահաթին էլ կասէի, ու չէի թողալ, որ

էս անմեղ հրեշտակ հոգին՝ էսքան նեղութիւն քաշի։ Եվ ասում եմ, հոգի ունիմ տալու, Օվսանայ խանումը անմեղ ա, արդար, թող նրանից օքմին կարծիք չտանի»։

Ա՛ֆարիմ՝ կնեաղ՝ խոսքը կարեց կրակված՝ վանօն, տղամարդն էդպէս կըլի, ինչպէս դուք էք։ Էդ մեծ ազնուութիւն է, որ չալեշ էք գալիս, խանումի պատիւը պահէք, անունը չկոտրէք, սա էլ շատ շնորհակալ կըլի ձեզանից։ Բայց թէ սուղում էք՝ էդով ձեր երեսը պարզ անէք ու ամէն բանից պրծնիք, շատ սխալվում էք։ Ինչ որ էս անմեղ արդար, նեղացած, մաշված, մէկ ժամանակ էնպէս լաւ անունի տէր Օվսանին արել էք, ինչ ցաւ սրան ու ինձ հասցրել էք, դրա փոխարէնը էս թրերը կվճարեն։ Ձեր պարտքը սրանց վրայ է դրած ու ձեր սրտի արինը մէնակ կարող է սրանց վրայ դրած գիրը ջնջել, վերջացնել։ Էդպէս հեշտ չէք կարող իմ ձեռքիցը պրծնել՝ ձեր թադարէքը՝ ինչպէս ասել եմ, տեսէք։ Հլա էն դիշերվան՝ ծառի տակի, բաղնի միջի անց կացած բանը՝ բերան չբերենք, մոռանանք, երէկվան ու էս օրվան հեսաբն ուր թողանք։ Ի՞նչ գործ ունէիր դու էս տեղ, թէ միտքդ չար չէր։»—

«Էս երկու օրվայ անց կացած բանի համար՝ հաւատացէք ինձ, ոչինչ խաբարութիւն չունիմ, պատասխանեց Գեօրգին, բայց էս տեղ մէկ հոգի կայ ձեր միջին, որ էն ազնիւ սիրան ունի, էն բարի միտքն ու հաւատարմութիւնը, որ ինձանից յոյս ունիմ, չվերաւորվի, թէ որ ճշմարիտն ասեմ։ Ինչ վնաս գալու ա, թող դայ, իմ աչքի լիս, իմ անդին սիրեկան Գայիանէ, ասեց Գեօրգին ու ընկաւ նրա ոտի տակը ու ձեռը բռնեց։ «Ա՛խ, թող էս օր բարկութիւնդ էլ, նեղութիւնդ էլ, սիրտդ մի քիչ բաց արա, քո անուշիդ մեռնիմ, ճշմարտութեան պատիւը թող էլ եդ իրան տանք, ու էս ազնիւ բարեկամներին քո բերնովը յայտնի՛ր, թէ ընչի՞ ու ո՞ւմ համար եմ ձեր տունն էկել։ Մի՛ թողար, որ սրանք վատ կարծիք ունենան իրանց սրտումը։ Էս անմեղ ողորմելի աղչիանը մեղք ա՛ր՝, ինձ խնայի՛ր, ինձ, որ քո եսիրն եմ։ Ի՞նչպէս, միամիտ չլինք կարող բոլորս էլ բախտաւորվել, բոլորս էլ մեր մուրազին հասնի՞լ։ Ասենք՝ թէ մէկ ջահելութիւն, յիմարութիւն արի, ամա միթէ դու չէս դիտում, որ իմ հոգու անհատ, ճշմա-

բիտ սէրը, իմ կեանքն ու արեւը՝ դու էիր, ու դու ես։ Քո լեղու�ին ասա, երեսիդ մատաղ դնամ, ու ամէնիս էլ պրծացրու փորձանքից, բանը քո վրայ է մնացել։ Մեռնիլս չի աչքս դալիս, չեմ ուզում, որ անմեղութիւնը քարովը դիպչի։ Արանք քո բարեկամքը, ես քո եսիրը, ասա ճշմարիտը։»—

Ի՞նչ պէտք է անէր ողորմելի ադչիկը, բանը խղճմտանքի վրայ էր մնացել, խնդրողը՝ իր սիրելին էր, չասէր, արին պէտք է խաղար միջումը։ Մի փոքր սիրտը պնդացրեց ու պարկեշտ ձէնով սկսեց բերանը բանալ։ «Ա՛խպէր Ջան՝ ինչ արել եմ, ների՛ր։ Ասենք՝ թէ սրան ծածուկ էի սիրում, բայց իմ սէրը ճշմարիտ էր, անարատ էր։ Ինչպէս էն երկնքի արեգակը, էնպէս արդար է երկուսիս հոգին էլ։ Հիմիկ ինչպէս կամքդ ա, էնպէս արա, մէկ օր ախր պէտք է իմանայիր, լաւն էն ա, էս օր լիս ընկաւ։ Ու դու՝ իմ աչքի լի՛ս՝ Գեորգի՛, չունքի դու ես ճշմարտութիւնն ինձանից պահանջում, թող ինձ սուրը քաշեն, պէտք է ասեմ։ Է՛ս իմ ձեռը, ու սրա հետ էլ սիրտս քեզ զուրբան, որ էսքան տարի քեզ համար տանջվել, մաշվել ա։ Ղորդ ա, Օվսանէն անմեղ ա, պարոն կնեաղ Գեորգին՝ ինձ համար ա մեր տունը դալ գնալ ունեցել։ Սա ամենևին չգիտէր էլ թէ Օվսանէն մեր տանն է կենում։ Ինչպէս կուզէք, էնպէս արէք»։—

«Ո՛վ ներեցէք, ներեցէք, մեր արածը մեր երեսովը չտաք, ձէն տվին Վանօն ու Ստեփանը ու ընկան Օվսանի ոտի տակը, որ ուրախութիւնից խելքը գլխից թռել, աչքը արեգակի պէս բացված՝ դէս ու դէն էր քցում, ու տեղն ու տեղը՝ Մագդաղէնացու պէս լիս էր դառել, ինչ ժամանակ նա օձի դլուխը ջնջում ա։ Ինչ Վանօյի հալն էր, էլ ո՞վ կարայ պատմի։ Հէնց իմանում էր, նոր երկինք է առաջը բաց էլել, նոր արեգակ դուս էկել, ու էլ էս տշխարքումը չըլի։

«Հիանալին էն կըլէր, ձէն տվեց Գեորգին, թէ պարոն Ստեփանն էլ՝ ի՛նձ ախպօր պէս գրկէր, համբուրէր, օրհնէր, իմ մուրազը տեղ հասցնէր, որ Մէլիք Պետրոսը դալիս՝ ամէն բանը կարգին, սարքին տեսնէր։ Էս խօսքին՝ Ստեփանը շուռ էկաւ ու նրան ասեց, «Այսուհետև իմ քիրը քոնն է, դու նրա տէրը, նա քո սէրը։ Ինչպէս որ էլ տեսնում եմ, լաւ կըլի, որ

շուտով մատանիքներդ փոխէք, իրար նշան տաք»: Էս խօսքն ասեց ու ընկաւ փեսի ու քվոր ճտովը: Վանօն էլ՝ իր սիրելուն էր առել խոխոր, որ աչքը խուփ մնացել էր նրա ճտովն ընկած, ու սրտումը փափաքումէր, որ էս ըլէր նրա կենաց վերջի սհաթը:

Էսպէս իրար խոխոր ընկած, կանգնած էին, որ Մէլիք Պետրոսը՝ ասլանի պէս գազազած՝ ներս մտաւ: Խելքը գլխիցը թռաւ, որ տեսաւ, իր թշնամի Գէորգուն՝ Ստեփանի Գայանէի խոտին ու իր կորած որդին՝ կիսաշունչ Վանօյի դօշին կգած: Զարմանքը բարկութիւնին յաղթեց: Էլ սիրտը չըտարաւ, որ երկար դիմանայ: Ստեփանը վազեց առաջն ու բոլորը մի առ մի անկաջը հալեց: —Կորած որդու տեսնելու ուրախութիւնն ու իր բոլոր չարչարանքի, կսկծի էսպէս քաղցր վերջանալը՝ շուտով խլեցին նրա բերնիցը իր հայրական օրհնութիւնը: Աչքերը ծով դառած՝ ձեռը քցեց իր որդուոց ճտովն ու նրանց խոխան առաւ: Ինչ նրա սիրտն էր, Աստուած ամէն բարի մարդի տայ: Հէնց իմանումէր դրախտն ա աչքի առաջին բաց էլել, հրեշտակք ըլին չորս կողմը բռնած: Ինչ նրա բերնիցը դուս էր գալիս, օրհնութիւն էր խունկ ու պատարագ: Ուրախութիւնից էլ չէին ուզումիրարից բաժանվին: Ամէնն սկսեց անց կացած դարդերը պատմիլ ու սիրտն իստակիլ: Իրիկնահացի վրայ՝ սրտերի էն լաւ, ուրախ ժամանակը մատանիքներն էլ փոխեցին. մարդարտակապ շարքերը՝ որ Գայիանէ Օվսանին փէշքաշ արեց, էն էրէկ իրիկվան դառն արտասունքի տեղը բռնեցին ու, ինչպէս որ սովորութիւն է, անց կացրած նեղ օրերի վրայ շախա անիլ, ասիլ ըսիլ, ծիծաղալ, էսպէս էլ՝ Օվսաննէն՝ բարի դիշեր ասելու փոխը՝ Վանոյի անկաջը բռնեց ու հուպ տալով ասեց, «Գեղ չէի ասել առաջուց, թէ ինչ ըլի, ըլի, չի պէտք է կարծիք տանիլ, թէ վերջը վատ կըլի: Հիմիկ կիմանաս լաւ՝ ասածիս միտքը:»—

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆԻ գրուածներից:

ՆԱՄԱԿ

ԱԳՈՒԼԻՍԻՑ

Յարգոյ Հրատարակիչ

Ձեր ժամանակ առ ժամանակ դէպի ինձ գրած նամակների գեղեցիկ առաջարկութիւններովը պարտաւորել էք, որ մեր՝ Հայրենի լեզուից և ուսմունքից զրկուած, այս կողմերումն պատահելի ազգային դէպքերի մասին տեղեկութիւն հաղորդեմ ձեր օգտաւէտ հրատարակութեանը. թէպէտ այն գեղեցիկ առաջարկութեանցդ վերաբերեալ՝ վշտալի անցքեր և ողբալի դէպքեր մեր Հայաստանի հինօրեայ ոսոխը՝ անմիաբանութեան և երկպառակութեան հոգին շատ էր յառաջ բերում այս կողմերումը, որոնք առանց արտասուաց անհնար էր գրիչ բռնել մի առ մի ստորագրել սակայն նրանք թողնելով ուրիշ ժամանակուան, այժմ միմիայն այն անցքերի համար պատմեմք, որ նորումս պատահեցան մեր Ագուլեցոց աւանումն: Դեռ մի քանի օր է, որ այն վշտալի անցքերի վերայ տրտմութեամբ վարակեալ բեմն իմ սենեակումս խորին մտածման մէջ էի ընկղմում, թէ ա՞խ, արդեօք երբ պիտի այնպիսի ազգակործան կիրքերը և ախտերը բժշկուին և վերանան մեր ազգից և երբ պիտի անմիաբանութեան և նախանձու դրօշակը ջարդ ու փշուր արած՝ ոտի տակ տանք և նրա տեղ ազգաշէնութեան՝ սիրոյ և լուսաւորութեան դրօշակը կանգնացնենք միաբանութեան կրկիսումն: Սոցա համար ո՞վ պէտք է հոգ տանի, ո՞վ պէտք է քարոզէ, և ո՞ր պարտաւորութիւնն է արդի ժամանակումս, որ իւր անցաւ գլուխը ցաւի տակ ձգելով՝ ամենայն նեղութիւններն յանձն առած՝ վշտերին և տառապանքներին համբերելով՝ դուրս գայ հանդէս, այլ առնէ իւր մոլորեալ հօտին և ըստ իւր սրբազան կոչման, իւր սեպուհ պարտաւորութիւնը կատարելով՝ ասէ, քարոզէ և համոզէ ժողովրդեան, որ այնպիսի ոչ միայն ազգակործան՝ այլև հոգեկորոյս ախտերը թողնեն և մերժեն: Ա՜հա մինչ դեռ այսպիսի մտածման մէջ վարանեալ կայի, յանկարծ մինը ներս մտաւ և ասաց, թէ՝ «մի վարդապետ է եկել,

քեզ կանչումէ» : Մտածեցի, թէ արդեօք այս վարդապետն ո՞վ պիտի լինի. չլինի՞ թէ Խրիմեան Մկրտիչ Վարդապետն է, որոյ համար վաղուց լսել եմ, թէ այս կողմերն էլ է գալու. ուստի չհամբերելով դուրս գնացի և տեսնելու ժամուն աջը համբուրեցի մեծաւ փափագանօք և ըստ իմ անարժանութեան բարևելով՝ խնդրեցի ճանաչեցի՝ որ սա այն հայրենասէր հոգին է, այն արժանաւոր անձն է, որն որ իւր հայրենի Վասպուրական գաւառի հին դրացւոյ՝ Գողթն գաւառիս վերայ կարեկցելով հարկադրուել է այց ելանել և մեր կողմերը, որ նորա վերքերին ճար ու դարման անէ այս իմաստուն բժիշկը : Ապա հրաւիրեցինք մի քանի ազգասէր անձանց հետ մի բարեպաշտ անձին տուն, ուր սակաւ ինչ հանդստանալուց յետոյ գնաց Եկեղեցին, որ նրա որդիքներից տեղեկանայ՝ տեսնէ, թէ արդարև ինքեանք էլ են ցանկանում, որ իւրեանց հայրենեաց այն բազմադարեան խաւարի և տգիտութեան վերայց դեղ ու դարման անեն,—թէ ոչ : Վանորոյ բարեպաշտական աղօթքից յետոյ սկսեց խորհրդաւոր օրին պատշաճ, որ հէնց Ղազարու Յարութեան շաբաթ օրն էր, քարոզ ասել սիրոյ, միաբանութեան և լուսաւորութեան վերայ, բաղդատելով առաջին ճոխ վիճակը Հայաստանի, արդի անփառունակ թշուառութեան հետ, առաջին պայծառութիւնը արդի անշքեղութեան հետ և առաջին աղատութիւնը՝ այժմեան ստրկութեան հետ, անդադար յիշելով մեր Հայաստանի հոյակապ և բազմամարդաւերակ քաղաքների և եղեմաբուղխ դետերի անունները, և եկեղեցաշէն հարց և աշխարհաշէն թագաւորաց և նախարարաց սխրագործութեանց առաքինի յիշատակները : Սրտառուչ բաներով նմանեցնում էր չորեքհարիւր տարուան մեռօրինակ վիճակը Հայաստանին՝ Ղազարու մահուանը, յիշում էր մեր քաջ Հայկայ նահապետին արիական յաղթութիւնը Նը-պատ սարին վերայ, ծեր Մասիսին հանդիպումը մեր ազգի ազատութեան համար բռնակալի ծեռքիցը և երբեմն մեր Արամայ նահապետին հայրենի լեզուապաշտպանութիւնը, երբեմն Վարդանանց սուրբ հաւատոյ, մաքուր ծիսից և կարգաց Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ համար պատերազմի հանդէսը Աւարայրի դաշտումը և երբեմն Վահա-

նեանց՝ անօրէն Պարսից մոլարաղանդ մոգպետների և ծխահեղձ քրմերի խսուր սուսերի մաշելը և կրակատների քանդելը և անհետ առնելը Հայաստանից և նոցա տեղ բազմաթիւ եկեղեցիներ շինելը և աղդայնութեան սուրբ հաւատը, կրօնը և եկեղեցին հաստատուն պահելը, երբեմն Վռամշապհոյ՝ սրբոյ Մեսրովպայ և Սահակայ օրերովը և քրոնավաստակ Ջանիւքը՝ ուսման տարածելը և խմաստութեան լուսով գերապայծառ ծաղկեցնելը Հայաստանին : Ի՞նչ ասեմ, մեր երկրաւոր հրեշտակը՝ երկնազգեցիկ հոգւով քարոզիչը մեր միտքը յափշտակում էր անցեալ նախնի դարուց անմոռանալի յիշատակներով աղդաշէն հարց : Որպիսիքը լսելով ողորմելի ժողովուրդը, որ քանի ժամանակ էր այնպիսի քարոզներ երբէք չէր լսել, այն աղդողական բառերը հասկանալուն պէս շատերը, նրանցից արտասուում էին իւրեանց, խորին զղացման ոգոյը խառնելով այն քարոզչին հառաչանաց հետ : Այսպէս, ոչ եթէ միմիայն ցանկացան, այլև համակրութիւն ցոյց տուին այն վիրաց բժշկութեան համար : Պատճառ, այն քարոզների վառվռուն կայծերը սուր թափանցեց ամենեցունց սրտին և միանդամայն վառեց ամէնին աղդասէր հոգւով ինամ տանել հայրենեաց և օգտաբեր լինիլ որդւոց աղդայնոց : Ուստի այն աղդասէր քարոզիչը տեսնելով ժողովրդեան ջերմեռանդութիւնը աղդայնոց լուսաւորութեան համար, հարկադրեալ ըստ իւր անհրաժեշտ պարտաւորութեանը՝ առելոյ Տէրիցը Զիթենեաց սարին վերայ՝ փութացաւ և ի Վերին—Ագուլիս և անդանօր Սրբոյն Թովմայի Առաքելոյ Վանքումը, որ հէնց կրկնաղատիկ կիւրակէի օրն էր, Թովմայի հաւատոյ յիշատակութեան օրը, ուր այն օրը ըստ իւրեանց Նախնաւանդ սովորութեան հայաղդի ուխտաւորաց բազմութիւնը ժողովուած էին, սկսեց վառվռուն հոգւով այն կրկնաղատկի հոգեկան խորհրդոյն հետ և աղդաշինութեան կրկնաղատկի վերայ էլ քարոզել, վշտահար սրտիւ հառաչելով, ախ, քանի ժամանակ է, որ Հայաստանն էլ կրկնաղատիկ չի տեսնում : Ի՞նչ յիշատակեմ մի ըստ միոջէ. այսպիսի սրտառուչ քարոզները սիրոյ, միաբանութեան, լուսաւորութեան և աղդաշինութեան լսելուց յետոյ նոյնժամայն համակրութիւն ցոյց տուին և Ագուլեաց իշխանները և մա-

նաւանդ մեծանուն Տէրանց պարոնայքը, որ իւրեանց այն ծը-խական վարժարանը մեծացնեն և բաժանեն չորս դասատուն։ Այլ թէ այս Ուսումնարանը ի՞նչ արտօնութիւն պիտի ու-նենայ, արդէն չիմացայ, յուսամք, որ ինչպէս այն արժանա-գով անձն քարոզեց Հոգևոր Ազգային անուամբ պիտի լինի, որ առաւել սգուտ բերէ մեր Եկեղեցւոյն և մեր լեզուին, և ազգի որդիքը յառաջադիմութիւն ցոյց տան ուսման ասպա-բիզումը։ Հայրենասէր Հոգւոյն քարոզելուցը և սոցա համա-կերպութիւն ցոյց տալուցը միմիայն այս գաց իմ սիրտը հաս-տատապէս, որ այն Աստուածազգեցիկ Հոգւով սփռեալ տոհ-մական սերմերը ապարդիւն չեն մնալ ժամանակաւ։ Եւ ան-տի ապա վերադարձաւ դէպի մեր գիւղը և եկաւ այցելութիւն Հոգևոր Դպրոցին, ուր մատուցին նրան աշակերտներիցը «ՀԱՐ-ՑԱԿԱՆ ԴԻՄԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԳՈՂԹԱՆ՝ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԾԸ-ՒՈՑՆ», որն որ նրա «ԱՆԴՐԱԴԱՐՁ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ» հետ, յու-ղարկումՁեր «Կռունկ Հայոց Աշխարհին» ղատուական ամսագ-րին և խնդրումեմ, եթէ արժան կրդատէք, տաք այս նամակի հետ ի հանդէս հանել։

Վ. Իսրայէլ Տէր Գրիգորեան Մամիկոնեանց։

Ի 20 Մայիսի 1861 ամի

Ի Ֆ. Ն.—ԱԳՈՒԼԻՍ

ԳՈՂԹՆ

ԱՌ

ԱՐԾՈՒԻՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

Ա. Արծուի Վասպուրեան, սրատես թռչուն,
Գաղուստդ չնորհաւոր և սիրոյ ողջոյն.
Առնալ Դիոդնեան վչտավառ լապտեր՝
Արդեօք զի՞նչ կորուստ չրջիս որոնել։

Բ. Ցայտեռ, Հայաստան, ողբաս, Հայաստան,
Ակ իմ Հայրենիք, իմ քաղցր Հայաստան,
Սէրն է քո քարող, սէրն քո բարբառ,
Մինթէ Հայք չսիրեն մխիթարանց սիրավառ։
Գ. Մինթէ չցանկան կանգնիլ Հայրենեաց,
Մինթէ չկամին զարգանալ ինքեանց.
Ցուսմանց, զիտութեանց, բարուք կրթութեանց
Մինչև Երբ պիտի մընան դըրկուած։
Դ. Ասա ինձ, խնդրեմ, յորժամ կանգնիլ
Թռաբ ճախրելով ի սէր հեգ աղղիդ,
Հասար ի Տփխիս և անտի Գանձակ,
Ցոր վիճակ տեսար զաչխարհն հայաբնակ։
Ե. Զընտասեալ դեռ դու յԱրձախ գաւառըն՝
Շոյտ ընտասեցիր Միածնի զահըն,
Եւ անտի ահա զիմեցիր առ խ.
Ի՞նչ համբաւ կամ լուր այն տեղեաց ունիս։
Զ. Ես քաջ իսկ զիտեմ մտքիդ նպատակ,
Որ այսրէն չէր քո ուղին ընդարձակ.
Ասա, աղաչեմ, պատմեա ինձ մեկին,
Ով հարկաղրեաց, զուցէ սէր Աղղին։
Է. Թէպէտ խընդալի, որ եղէ արժան
Ընդունել քեզ ոչ վահ հիւր պատուարժան.
Ուստի և եմ դոհ հոգւով բոցեկէզ,
Որ այց եկեր ինձ և չարիր անտես։
Ը. Բայց աւաղ բաղդիս, որ զարդիս ունիմ
Մի մեծ տարակոյս, որով երկմտիմ,
Այն է քո ստէպ ոխն և հառաչանք,
Արդեօք առ ինչ հոգք և խորին թաղձանք։
Թ. Մինթէ անուսումն վիճակ աղղայնոց,
Եւ տըգիտութիւնն որ ի մէջ նոցունց,
Կամ անփառունակ կեանք Հայկայ որդւոց,
Վառել է ի սիրտդ այդ եռանդեան բոց։
Ժ. Այո, զիտեմ ես և իմ որդւոց մէջ
Չես դանիլ ուսումն, որ յերկնուստն էջ.
Աղաչեմ ծանոյ, ով խորախորհուրդ,
Իմ որդւոց հոգալ զիւրեանց բաղդ յողդոդ
ԺԱ. Ծանոյ դու սիրոյ, ուսման զօրութիւն
Եւ զաղրիւր բարեաց՝ զմիաբանութիւն,
Եւ ցոյց, թէ սոքօք ինչպէս մեր նախնիք
Ապահովեցին մեր քաղցր հայրենիք։

ԺԲ. Քանզի մինչև ցարդ որդիքս թքմբած,
Խորին քնոյ մէջ կային զբաղուած.
Եթէ լինէր ոք կոչող «օն զարթիք»,
Մթթէ չէն զարթնուլ իմ դժբաղդ որդիք։
ԺԳ. Աղագաւ որոյ համայն աղդայնոց
Ցաւր յորդոր կարդա իմ կարօտ որդւոց
Ի սիրտ արծարծել զսէր մեր նախնեաց՝
Հայկայ, Արամայ՝ դիւցազնն քաջաց։
ԺԴ. Քեզդէսկօք յուսամ նորել ծերութիւնս,
Եւ լընուլ բարեօք իմ սուրբ ցանկութիւնս.
Ուստի քեզ կեանք նոր մաղթեմ իյերկնից
Եւ նոր նոր բարիք ԳՈՂԹԱՆ ԳԱՒԱՌԻՍ։

Յակոբ Կ. Անաղչեանց։
Մկրտիչ Թ. Մանուէլեանց։
Ստեփանոս Յ. Այուազեանց։
ԱԳԱԿ. ՀՈԳ. ԴՊՐՈՑԻ ՀԱՅՑՈՑ
ՆԵՐԲԻՆ—ԱԳՈՒԼԵԱՑ։

28 Ապրիլի 1861 ամի
ի Գ. քաղաքն Ն. Ագուլեաց։

ԱՆԴՐԱԴԱՐՁ ՊԱՏԱՍԽԱՆԻՆ ԲԱՆԻՑՆ

ԳՈՂԹԱՆ ԳԱՒԱՌԻ

Առ քեզ, ով Գողթան՝ հայրենի երկիր,
Առ քեզ մեր Արծուին այցելու էկել.
Քո համբաւ, Գողթան, քո նախնի համբաւ
Հայկազանց համար մի դանձ է անքաւ։
Զքեզ խորենեան Մովսիսին ձայնիկ
Կոչէ հայրենեաց ցանկալի տեղիք,
Եւ քո դաշտն ու ձոր, քո սարն ու հովիտ
Են զինչ վարդ, շուշան, շող շող մարգարիտ։
Քո որդիք ամէն Երասխայ ջրէն,
Սնած, զօրացած երկնային հովէն,
Եւ ուրախաւառ քո անուշ զինով,
Քաջ բանաստեղծ են բամբիռ երգելով։
Թէ Հայոց քաջեր՝ հեռու սահմաններ,
Ռազմը խիզախէր, յաղթանակ վարէր։
Դու էիր նորա զլխին վեհ պսակ,
Հիւսէիր արժան բանս դիցաղներդակ։

Քնարն ու բամբիւռ և աչխոյժ տաղեր
Քո լերանց վերայ հնչէր՝ փողփողէր
Դիւցազուն Վահագն, յաղթող Արտաչէս.
Դու էիր սոցա քերթող Հոմերէս։
Դեռ ոչ զիր ու թուղթ և ոչ դպրութիւնք.
Քո մէջ խաղային քնարից մատունք.
Դաւիթն Աստուծոյն և դու Հայերուն
Տանողի երգիչ փառաց մեր նախնւոյն.
Արդ Ածուին եկաւ քո մէջ որոնել,
Լսել երգչիդ ձայն և մխիթարուել.
Ցանկացաւ տեսնել քո փոքրիկ թռուներ.
Որք դեռ ուսման մէջ նոր էին ծնել.
Նոր լեզուն բացուած,
Նոր ողի առած,
Նոր քնար չինած,
Ձեռքերնին բռնած,
Դողդոջուն տոտամբ.
Դալարիկ մատամբ
Գան ոստոստելով.
Դայլայլուն երգով
Բարևել Արծուոյն,
Ընդունիլ ողջոյն
Հայրենեաց սիրոյն։
Ապա քո կողմէն հարցմունքներ բացին,
Սիրալի բաներ Արծուոյն ասացին,
Թէ «Զինչ որոնես, զինչ կորուսեալ ես,
Որ լապտեր ձեռիդ չորս կողմ կըշրջես»։
Սոցա բանից պատասխան
Ի Դէմս Արծուոյն ես կուտամ։

Ա. Կորուստ ունիմք մեք, կորուստ մի անգին,
Կորուստ թանգագին մեր Հայոց ազգին,
Հայաստան կորցրած է իւր Հայկազունք.
Այրարատն իւր ճոխ ու ազատ զաւկունք։
Զմեզ ոչ ժառանգ զոնէ փնտռք միայն,
Այլև ոչ նշխարք մեզ դան յերեան։
Ա՛հ, մեր արեգակ, ա՜հ, մեր արուսեակ
Աշխարհաց իշխանք, Հայկ և Վաղարշակ,
Ո՞ւր են ձեր տեղիք, ձեր արեանց վաստակ։
Ա՛հ, թէ մնային թաղուած հողի տակ։

Ա՛հ, ձեր բիւրաւոր որդիք կորել են,
Իրանց մայր թողել ու հեռացել են։
Թէև Հայաստան իր տեղն է, այո,
Բայց Հայեր ցրուած իրանից հեռու.
Սա մայր իւր տան մէջ, որդիքն օտար տեղ,
Երկուքի վիճակն էլ զերի ու նեղ։
Մեր աշխարհ կուլայ իւր բաղդին վերայ,
Չի որդւոց տեսոյն կարօտ կըմնայ.
Թէև ունի շատ ուրիշ զաւակներ,
Բայց իւր ծնած չէ, դժուար է սիրել.
Ինքն ազատաց մայր և յաղատ տանէ,
Ծնած զաւակներ յՈստանիկ տոհմէ.
Ինքն Թագուհի, դշխոյ գերազանց,
Իւր փեսայն է Հայկ, Գրիգորն և Աստուած։
Իւր ապարանքներ, մեծ մեծ պալատներ,
Արտաշատն, Անի, հաղար տաճարներ,
Ամէնքն են կորել, ամէնքն էլ աւրել,
Մենք Նորա որդիք անտէր եմք մնացել։
Ո՛ր խեղճութիւնից, ո՛ր անտէրութիւնից
Ամէնքն էլ կորան, մոռացան և զՄասիս.
Նոթի ու ծարաւ, կամ բոբիկ թշուառ,
Թողին հայրենիք՝ ցրուեալ յայլ աշխարհ։
Արդ մեք որոնեմք հազարիցըն մէկ,
Թէև տառապեալ, ստրուկ, ծառայ, հեգ,
Սակայն դա ազատ ունի յիշատակ
Հայրենեաց սիրով եռայ իւր երակն։
Բ. Ողբայ մեր Արծուին, ձայնիւ լալագին
«Ա՛հ իմ հայրենիք, իմ փառք մեծագին»։
Եւ քարոզելով սէր իմէջ ազգին
Ջանայ կենդանի վառել մեր հոգին.
Տեսնելով Հայոց վայրատեալ վիճակ
Կամ անզօրաւար չուարած բանակ,
Սէրն ու միութիւն —Աստուծոյ կտակ,
Մեզ պատգամ կու տայ այս ՀՐԱՒԻՐԱԿ։
Գ. Կամին ու ցանկան, այո՛ քո որդիք,
Որ լուսաւորուի իրանց հայրենիք.
Բայց դու համբերէ՛ կըտեսնես անչուշտ
Պակ լուսապերճ ծերացեալ զլխոյդ։
Պիտի տեսնես դու քո որդիքն ամէն
Զարթնած սփոփած խոր թմրութենէն.

Ահա ապացոյց՝ այս քո Մանկանց ձայն,
Քո մէջ հիմնարկուած նոր Ռուսմնարան։
Դ. Կըհարցանես, թէ Տփխիսն ու Գանձակ
Ի՞նչ դրութեան են, ինչպէս են մեր Հայք,
Քեզ ասեմ, Գողթան, այժմ ամէն քաղաք
Զարթեալ են, շարժին, ուսման տան մեծ յարդ։
Մեղուին և Կռունկ, Տփխիսոյ թռչունք
Ուսման և լուսոյ են պատգամաւորք.
Տես մեր Հայաստան ծեր Նոյի նման,
Թռչուն կարձակէ չիւղ բռնած բերան։
Գանձակն ու Շուշին շարժին և եռան,
Ուսմամբ զիտութեամբ յառաջ ընթանան.
Եւ քո գլխաւոր քաղաքն Երևան
Սէջքեր բաց արած դէպ Մասեաց լերան
Սկսաւ իւր մէջ շինել նոր տապան.
Տապա՛ն աղաւիւ ի մէջ խաւարման,
Զքնաղ հոյակապն այն Ռուսմնարան։
Ե. Դու զի՞ զարմանաս որ չուտով Արծուին
Դարձաւ իւր չաւղէն սուրբ Էջմիածին.
Գնաց համբոյր տալ լուսափայլ Գահին,
Նշխարաց սրբոյն մեծ Գրիգորին։
Եւ ի սէր Եղբարցն՝ որք զինքն կոչեցին
Գնաց իյարդանս ի պատիւ աղին.
Եւ նորավեստուր զարդարուած թևով
Սլացաւ, դարձաւ այս սահմաններով
Այն Սրբազանից Հայրական ողջոյն
Բերից ինուէր ճանել Հայերուն։
Զ—է. Արծըւոյն պարտքն է իւր հայրենիք.
Եւ դու, ով Գողթան, դու ևս հայրենիք.
Նա թէ առանց քեզ՝ անցնէր ու գնար
Քո սիրոյ համար կրկին, ոչ դառնար։
Այն սէր աղին է նորա վախճան,
Նա ի սէր աղին է նուիրական.
Եկաւ և քո մէջ նոր եռանդ չընչել,
Նոր հոգի, նոր սէր գիտութեան վառել,
Նոր կապ միութեան ոլորել հիւսել,
Քո որդիք քո ծոց ժողովել, ածել։
Այդ եկեղեցիք քո սուրբ մեծաշէն
Որ այժմ ամայի, չորս մարդով են չէն.

Սոքա 'տի լցուին, քո սիրան սփոփի,
Որ ուսումն քո մէջ օրէ օր սփոի։
Այն քո տարամերժ ցրուած զաւակներ,
Այն քո թափառեալ՝ կորուսեալ հօտեր,
Ուսման շաւիղով, միաբան յուսով,
Դարձ կառնեն ի զիրկ քո մայրաղորով։
Ը· Արծուին կողբայ, որ քո մեծ դաշտեր
Ընկել մնացել են այլազգեաց ձեռ,
Իսկ քո զաւակներ մէջ չոր քարերուն
Շինած իրանց բոյն, զերդ ակար թռչուն։
Թ· Արծուին հառաչէ քո բաղդին վերայ,
Թէ ինչ էր և այժմ ինչ վիճակի կայ.
Եւ սորա պատճառ ուրիշ բան չկայ,
Այլ տգիտութիւն, ոսոխն հինօրեայ։
Որ Հայն վեր Հային նախանձել տալով,
Կործանեց մեր թագն իւր թագաւորով։
Գահն ու դաւազան, պալատն իւր շքով
Անկան ի կործան իրանց ճոխ փառքով։
Այո և դու լաց այս յիշատակներ,
Նախնի հայրենիք, աղամ իշխաններ,
Թէ ինչպէս անցան ու անհետացան,
Եւ ինձ հետ դու ևս կանչէ միաձայն.
Ցանկիր թէ կայ ճար մի այս կորստեան,
Այն է լուսակոչմ ուսման մեքենան։
Ժ· Եւ քո որդիքներ դուվեցի արդէն,
Նոքա քեզ սիրեն, քեզ բարիք կխնդրեն.
Թէև իրաւ է, զեռ ուսում չկայ,
Բայց նոցա վաստակ մեծ յոյսեր կուտայ։
Դոքա գիտցան, որ էլ այսուհետև
Անուսումն չունի մարդոց մէջ մի տեղ,
Եւ Ջանան յառաջ վարել օրէ օր,
Քո Ուսումնարան քո ջահ լուսաւոր։
ԺԱ Դոքա՝ որ հեռու ուրիշ քաղաքներ,
Կերթան, կըտեսնան ուսման բարիքներ.
Տեսած են դոքա, թէ ինչ երջանիկ
է ուսեալ ազգաց վաստակն ու քրտինք։
Այս դարուս վճիռն է անժխտելի
Ուսումն է յաղթող, սուսերք ժանգոտին,
Այսպէս սուրբ նախնիք, իմաստութեամբ լիք
Սիրով պահէին իրանց հայրենիք։

ԺԲ Դու մի զանդատիր, թէ կանչող չկայ,
Առաջնորդ, իշխան, կամ հովիւ չկայ.
Ահա ժամանակ քեզի ձայն կուտայ,
Դու վեր կաց, քալէ, ու յառաջ գնա.
Թէ հովիւ չկայ, ողջ հոյին չկայ,
Թէ իշխան չկայ, ողջ հային չկայ.
Բայց յառաջ երթալ տեղ կայ, տեղ չկայ,
Պատճառ, կասեն թէ Առաջնորդ չկայ.
Այլ դու հինաբեայ հայրենի Գողթան,
Դիւցազն դրացի մեր Վասպուրական,
Մեք և քո որդիք՝ եղբարք միաբան
Դու մեզ կարեկից, մեք քեզ օգնական.
Մեր ոտն է թոփալ, հովիւն ինչ անէ,
Ցուլ և դաւազան մեզի պիտոյ է.
Դու միշտ ընկած տեղդ կանչէ հառաչէ,
Ուսումն է քո ճար, այլ բան պիտոյ չէ.
Գոնէ կաղալով, գէթ խարխափելով,
Յառաջ ընթանանք մենք ոստոստելով.
Մինչև որ մեր ցաւ օր մի բժշկուի
Մեր թեւթափ անձն թև առնէ թռնի,
Մեր հինաբեայ կեանք կրկին նորոգուի,
Մեր նոր մանկութիւն զօրանայ, հասնի . . .

ԺԳ—ԺԴ. Ա՛հ, Արծուոյ ձայնիկ հասնէր ամէն տեղ,
Կամ ողջ Հայաստան ժողովէր միատեղ.
Մէկ կողմից «Կռունկ» մէկ կողմից «Արծուին»
Հայոց քաջալերս ձայն արձակէին.
Ա՛խ, Երբ Հայաստան, քո նախնի սուրբ դար,
Ում ցանկամք սիրով, խնդրեմք անդադար,
Ե՞րբ ուման դրօշակ քոյդ լերանց վերայ
Կրկին ծածանի, Հայն ուրախանայ.
Ո՛վ Աստուած, Աստուած, տուր մեզ այս սուրբ ուխտ,
Ողորմեա Հայոցս, ցրուելոցս պանդուխտ.
Լ ֆց, զարդարեա, Տէր, զտաճար քո նախկին,
Մեր Հայաստանին այց արա կրկին.

Յօհ. Գարեգին Սրուանձտեանց
Ա.Չ. Ժառանգաւորաց Վարժարանին
Վարագայ

1861. Մայիս 7.
Ի Ներքին Ագուլիս.

ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՂԱՐԱԳԱՂՈՒ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՑ

Կոստանդ Օրագրի Մարտ ամսատետրակի մէջ պարունակած Ներսիսեան Դպրոցի նկարագիրը կարդալուս, ամենայն հայրենասէր անձն պէտք է իւրային սրտէ հառաչէ և ցաւի, որ այնպիսի երևելի ազգօգուտ Դպրոցը մինչ ցայժմ չէ ստացել մի այն կերպ ուղղութիւն և ընթացք, որ լինի համեմատ անմահ Հիմնադրողի նպատակին և դաղափարին, բայց միշտ ալեկոծեալ նաւի նման կորցնելով ուղիղ ճանապարհը, իրան վիճակը յանձնած է եղել վերին նախախնամութեան։ Թէև երբեմն, ինչպէս գրում է պարոն Հրատարակիչն, Ուսումնարանը աղնիւ ու բարեմիտ տեսուչի աշխատութեամբն ստանում է պատշաճաւոր ընթացք, ազգի մանկունքը կրթուելով մայրական հոգւով ուրախացնում են ազգասէր անձանց սիրտը, մատաղ սիրով և արբուն մտօք քարոզում են եկեղեցեաց բեմերից ու ատեաններից մեր սուրբ հաւատոյ լուսաւոր ճշմարտութիւնը, ուսի և ազգը տեսնելով Դպրոցի կարգաւոր եղանակաւ ընթանալն, կարդադրողի և ուսուցչաց համախոհ ժրաջան աշխատանքը, սպասում է համեղաճաշակ պտուղներին։ Սակայն յանկարծ երկինքը պատում է ամպերով և բուն ուսումնարանի կառավարչութեան ծոցից փչում է Ամերիկայի զարմատան անուանեալ հողմի պէս մի քամի զեփիւռալի պարտիզի մէջ և չորացնում է նորա ուսումնականութեամբ զարդանող մանկունքը։ Մինչև այժմ իմ յիշողութենից չէ գնում Ներսիսեան Դպրոցի երջանիկ շրջանի աշակերտաց պատկերը, որոնք բեմի վերայ կանգնած կարդում էին ամենեցուն հասկանալի ու քաղցր լեզուով չարադրեալ քարոզներ։ Այն միջոցումը քաղցր էր նայել ուսումնարանի անմահ Հիմնադրողի երեսին, որոյ աչերիցն փայլում էր ներքին հոգեւոր ուրախութիւնը, մի և նոյն կերպով մխիթարվում էր նորա վիրքրիկ հօրը, լսելով դեռահաս աշակերտաց յստակ սրտէն բղխած հայենասիրութեան և մեր հաւատոյ ճշմարտութեան քարոզող խօսքերը։ Պարոն Ընֆիլանեանցի ճիշդ նկարագիրը Ներսիսեան Դպրոցի պէտք է արդար խղճմտանօք խոստովանիլ, յարմարաւոր դաս կարէ լինիլ մերայնոց համար, մանաւանդ այժմ, երբ բոլոր Հայքթէ Ռուսաստանի մէջ բնակողք թէ օտար պետութիւններում, լուսաւոր դարու պահանջողութեանց յարմարուելով եռանդոյլից սիրող դրաղուած են աղնիւ գործով, հետևում են մի նպատակի, այն է կցանկան կառուցանել այնպիսի կրթարան, որոյ դաստիարակութիւնն դոլով աղստ վնասակարու-

կրօնամոլ աղանդաւորների խմորից և անհարազատ մտքերից, կարողանայ առաջ տանել մեզ, մօտացնել լուսաւոր ազգերին, մի և նոյն ժամանակը տպաւորելով մեր սրտի մէջ հայութեան հոգին անջնջելի տառերով։

Թէև հմուտ դաստիարակներին պէտք է թողնենք գծագրել մեր մանկանց կրթութեան կանոնները և ցոյց տալ հեշտ անցանելի ճանապարհները առուղիղ ուխտական նպատակն, թէև այս առարկայի վերայ «Ընդունկան» և այլ օրագրաց միջոցով հրատարակուած են բազմավաստակ աշխատութեամբ մերազնեայ յայտնի դիտնականաց առաջարկութիւնները, բայց այնու ամենայնիւ յուսալով ընթերցասիրաց ներողամտութեան վերայ, վստահանում եմ այս առաջին անգամ իմ զողջունը լիզուով զրչովը խառնել երկարափորձ դաստիարակաց ասածներին հետ և նուաստիս կարծիքն։ Թէպէտ մինչև մեր հայրենեաց նոր իսկական կերպարանափոխութիւն տալն, մեր ազգայնոց մէջ վաճառականութեան անթիւ շահաւէտ ճանապարհ բանալն, ընկերութիւններ կազմելն և տնտեսականութեան առաջ ընթանալն հսկայական քայլերով Եւրոպայի լուսաւորեալ ազգաց նման շատ ջանք, համախոհ եռանդ և երկար ժամանակ կհարկաւորուի, բայց այս ամենին կարող ենք հասնել ոչ թէ մեզ համար դաղափար համարուած Եւրոպայի դպրոցների և հոչակաւոր համալսարանների մէջ միայն կրթելով մեր հայոց զաւակները. չէ, Եփրատայ, Երասխի, Զանգիի ջրով ոռոգանուած, Հայաստանի օդը ծծած և այրող արեգական աղդեցութեան ներքոյ կենդանութիւն առած նորածիլ բոյսը չի կարող Արևմտեան, հիւսիսային և այլ կողմերում ստանալ բնական հասակ և դոյն, նրա պտուղները կդրկուին իւր նախնական համեղութենից, որչափ էլ պահպանողութիւն և խնամք տանին այդպիսիները, ինչպէս Եւրոպայի տունկերը և մինչ անայլն անասունները Ամերիկայ փոխած ժամանակը կորցնում են իրանց առաջուան յատկութիւնը և ստանում են առանձին բնութիւն։ Այս կերպով և մեր դեռատիպիթ մանկունքը զրկուելով մայրենի զղուանքից, Մասիսի, Սնպուհի և այլ հայրենի պարծանքներից, սուրբ յիշատակարաններից, որոնք պէտք է վառէին նրանց սրտումը հայրենասիրութեան հուրն, գնում են օտար երկիրներ և այնտեղի խոյթ յիշատակարանների և սովորութեանց հետ սկսում են սէր կապել. թէպէտ նոքա խաղաղ չեն օտարանում, բայց և դժուար է նրանց համար իւրեանց իսկական նշանակութիւնը և ինչ լինելն, որ շարքում, դասում տեղ ունենալն պահպանել։ Ասածներս ապացոյցը յայտնի է ամենօրեայ փորձերիցն. արդէն քսան ու հինդ տարի է, որ մեր երկրի դեռահաս եղբարներից շատերը հազարաւոր մղոններ անցնելով գնում են օտար քաղաքներ, որ այնտեղի դիտութիւններովն զարդարեն իրանց միտքը և կարողանան ժամանակաւ լինել պիտանի անդամ հայրենեաց, բայց ափսոս, որ նոցա մի մասը չդիմանալով այլ երկրի օդին, վնասում է

զոհ, իսկ ոմանք համբերելով անթիւ դժուարութիւններին, օտարի ուսում և կրթութիւն ստանալուց յետոյ վերադառնալով հայրենի տունը, թէև ուրախանում են և ուրախացնում ծնողներին և աղգականներին, բայց այս ուրախութիւնը երկարատև և հոգեւոր սիրով վառուած չէ, որովհետև կերպարանափոխեալ որդուն սիրտը չունի ճգտողութիւն առ իւրան, նա չի կարող լինել պիտանացու և հարազատ անդամ այն հասարակութեանը, որոյ վիճակին, պատմութեանը և ամենայն անցքին զոլով անծանօթ և փոքր հասակիցն մնուած, մեծացած և կրթուած օտար ազգի խորժակոցն և դրութեան համեմատ, մեծ նեղութիւններ պէտք է տանի մինչ իւր հարազատ եղբարց հետ միանալն. կամ թէ օրէցօր կատչի և համարեա կքարանայ այնպիսի երիտասարդի հոգին առ իւր ազգն, եկեղեցին և լեզուն, որոնցից միշտ խորշելով կաշխատի իսպառ ջնջել իւր անունը Հայոց տոմարիցն։ Մեզանից ով չէ հանդիպած Հայ երիտասարդի, որն արհամարհում է Հայի հետ ընկերանալն, մայրենի լեզուով խօսալն և միշտ իւր ազգին պարսաւելով հայհոյելով, անհիմն տեղից ջանք է անում մեզ ամէն օր պարսաւողների հետ միանալ, բարեկամանալ անձնական շահի և փառքի համար։

Կարելի է ոմանք պատուելի ընթերցասէրներից զարմանան տուած թէ վերայ և հարցանեն՝ մթթէ առանց եւրոպական ուսման Հայերը կարող են առաջ դնալ։ չէ՞, այդպիսի թիւր և անհիմն մտածողութիւնը կվայելի Ասիայի կռապաշտական շղթաների ներքոյ ճնշուած և խաւարամտութեան մէջ յամառացեալ ազգերին, իսկ մենք վաղուց հետէ ճանաչում ենք և յարգում Եւրոպական լուսաւորութիւնը. զեռ հինգերորդ դարումն Հայք զգացին զորա ամենահարկաւորութիւնն։ Միայն պէտք է իմանալ, որ այն ժամանակը մեր նախահարք այլ կերպիւ էին ստանում ցունաստանի դիտութիւնները. նոքա առաջ կրթուում էին իրանց հայրենիքումն հայութեան մէջ և այնուհետև աշխատում օտարի օգտակար ուսումն ի հանձարը սեպհականացնել։ Ուրեմն մեր ազգը աւելի կառաջանայ այն ժամանակը, երբ նորա որդիքը սկզբնական ուսումը ստանան իրանց հարազատ երկրումն. վասն որոյ նախ պէտք է աշխատենք միակամ խորհրդով կառուցանել այժմեան մեր պահանջողութեանց համեմատ կրթարան, որոյ մէջ հայոց մանկունքը ուսանին ամենայն առարկայք իրանց բուն լեզուով, զարգանան հայրենասիրութեամբ, լսեն ազգային պատմութիւն, ծանօթանան Հայկայ, Արամայ, Ցիրանի և այլ անմահ նախահարց հետ և այնուհետև գնան Եւրոպայ և այնտեղի երևելի համալսարաններումը կատարելագործուին։

Ոմանք մերազնեայ գիտնականներից կրթուած լինելով Եւրոպայի երկար ժամանակեայ բարեբաղդութիւն վայելող ազգաց մէջ, զգալով Հայոց այժմեան դարումս լուսաւորութենից զուրկ լինելը, ակտում են ը դդմ խղճի պախարակել մեր ազգը զանազան ծանր և կծողական խօսքերով.

ցանկանում են իբր զարթնացնել Հայի սրտումն եռանդ ուսումնասիրուկան, բայց չեն գիտում, որ այս եղանակաւ միայն յուսահատացնում են և խոցոտում նրա նոր ինորոյ վէրքերից առողջանող սիրտը. միթէ հընար է Հայերին տալ մի և նոյն հասկացողութիւնը, որոյ ստանալու համար Եւրոպացիք գործ են դրել զարաւոր ջանք և մեծամեծ զոհեր։ Մենք պէտք է ամենայն բոլէ վերառաքենք առ Ամենակարողն փառաբանութիւն, որ զոնէ ներկայ ժամանակումս միմեանցից բնակութեամբ անջատեալ և ցիր ու ցան եղած Հայերը սկսել են միաւորուիլ միակերպ ձգտողութեամբ և աղնիւ նպատակաւ, աշխատում են առաջ գնալ, հասնիլ լուսաւոր ազգերին, միով բանիւ չեն անչարժ ու թմրած խաւարամտութեան մէջ, այլ ջանք են անում ազատել իրանց բարոյական կրթիւնը օտարի չըղթաներից։ Այս ընդհանուր ազգային նոր հոգին և եռանդը անտես չարաւ և Արցախայ ուսման ծարաւի մանկանց։ Ցուսանք, որ սոքա օրէցօր զարգանալով ազգային բարեկրթութեամբ, ժամանակաւ հարստացնեն ընութեան չնորհած իրանց բերրի և ամենատեսակ պտուղներով հարուստ հայրենիքը այժմեան դարուս գիտութիւններովն։

Ղարաբաղցիք արդէն քանի տարի է զզում են իրանց պակասութիւնները, ցանկանում են ունենալ հայութենում կրթուած որդիք և թէպէտ ժամանակ առ ժամանակ սկսում էին մտածել այս բարի գիտաւորութեան վերայ, բայց կրկին խորասուզվում էին առաջուան թըմրութեան մէջ. ուրեմն անջնջելի տառերով պէտք է գծաղրուի մեր և ապագայ սերնդոց սրտումն Արժանընտիր ՄԱՏԹԷՈՍ Հայրապետի անունը, որովհետև քաջ Հովիւն չնորհալի կոնդակներով ի 15 Յունիսի անցեալ 1860 թուականի վառեց Ղարաբաղցւոց սիրտը ուսումնասիրութեան անշէջ հրով։ Այն յաւերժայիշատակ կոնդակների զօրութեամբն բաղմատեսակ արդիւնաւոր աղբիւրներով հարստացաւ տեղւոյս Հոգևոր Դպրոցը, հաստատուեց Հոդաբարձութիւն, հաստատուեցին համաձայն ժողովրդի ընտրութեան հինգ արժանաւոր Հոդաբարձու, որ նոքա հոգան Դպրոցի ամենակերպ ճոխութեան և հարստութեան համար։ Թէև կարճ ժամանակից Դպրոցն զրկուեց քանի մի արդիւնքներից, բայց մեր հասարակութիւնն յետ չի կանգնեց իւր սուրբ դիտաւորութենից, մանաւանդ դի քաջ կճանաչէր Վեհափառ Հայրապետի ուսումնասիրութիւնը և ցանկանալով առաւել հեշտ կերպիւ առաջ տանել բարենպատակ գործը և ապահովացնել Հոգևոր Դպրոցը մեծագումար դրամով, բացաւ անցեալ Մարտ ամսոյ սկզբումն ստորագրութիւն կամաւոր տրոց այնպիսի պայմաններով, որ ոչ թէ միայն երևելի մեծատունները, այլև արհեստաւորք և ամենայն վիճակի հայրենասէր անձինք չըդժուարանան ցոյց տալ դրամաւոր օժանդակութիւն և մասնակցութիւն, որովհետև առանց ընդհանուրի համախառն գործակցութեան մասնաւորը որչափ էլ ուժեղ լինի, կարող չէ ընդհանուրի վերաբերեալ գործին յարա-

ան չարժողութիւն տալ։ Սորա ապացոյցը երևում է Տփխիսու համքեարութեամբ միաւորուած արհեստականների բազմատեսակ բարեգործութիւններից, որոնք յառաջանում են ոչ թէ հարուստների օժաղակութեամբն, այլ արհեստականին չքաւոր տուրքիցն. թէպէտ ամէն մէկի առանձին տուրքը շատ նուազ և չնչին իմն կերևայ, բայց այնպիսի փոքրիկ և նուազ տրոց գումարը հռչակաւոր ուսումնարաններ և դպրոցներ կկառուցանէ։ Որեմն մեր ազգասէր իշխանները թող չվիսորշին ստորին կարգի և աստիճանի մէջ գտնուող հայրենակիցներից, թող ընկերակցութիւն անեն նրանց հետ և նրանց չքաւոր տուրքը դնեն իրանց մեծամեծ նուէրքների հետ, միով բանիւ հեռացնեն եսականութիւնն և մասնաւորի կամքին չհպատակացնեն բոլոր հասարակութեան կամքը, որովհետև մեղանից ամէն մի անձն որչափ հանճարաւոր լինի միշտ կարող է սխալուիլ և անկանիլ վնասակար ազդեցութեան ներքոյ, իսկ բոլոր հասարակութիւնը շատ սակաւ կսխալուի և ընդհանուրի խնդրուածքն ունենալով աւելի ձայն և ուժ երկրային իշխանութեանց առաջնեն, կհետևի և ամենակարողի հզօր կամքին, ինչպէս ամենայն օր ասում ենք «Ձայն բազմաց՝ ձայն Աստուծոյ։»

Վերոգրեալ հիմանց վերայ հաստատելով իրանց միքտը, մեր քաղաքացիք սկսեցին ստորագրութիւն կամաւոր տրոց յօգուտ Դպրոցին։ Ստորագրութեան տումարի մէկ տողումն պարունակվում էին առ մի նուազ ուսումնարանի սկզբնաւորական հիմնադրութեան համար ժողովելի նուիրաբերութիւնքն, իսկ երկրորդումն նշանակվում էր այն տուրքի քանակութիւնն, որն որ ընծայաբերը խոստանում է տալ չարունակաբար ամենայն տարի Դպրոցի մշտապէս և հաստատուն պահպանութեան համար. այս երկու տեսակ տրոց գումարն փոքր միջոցում հասաւ մեծ քանակութեան և օրէցօր պէտք էա տեսանայ, որովհետև մեր հայրենակիցներից ոչ ոք չի հրաժարուիլ այսպիսի բարեգործութենից։ Ճշմարիտ է կան և չստորագրողք, մինչև քաղաքիս հարուստ բնակիչներից էլ, բայց եթէ արդար խղճմտանօք քննենք, դժուար է առանց գովաբանութեան խօսիլ և նրանց վերայ, պատճառը որ նոքա յայտնի գոլով իրանց արդիւնաւոր տուրքերովն զանազան ժամանակներում յօգուտ ազգային չինութեանց, անկարելի է, որ չուրախանան Ուսումնարանի հիմնադրութեան և պայծառութեան վերայ։ Այս վերջիններիցը ոմանք խոստացան մեծամեծ ընծայաբերութիւններ անել այն ժամանակը, երբ Ուսումնարանն կստանայ Ծայրագոյն Հոգևոր Իշխանութենից հաստատեալ կանոնադրութիւն և կապահովուի մասամբ իւիք Վեհափառ Կաթուղիկոսի նախկին կոնդակներումն նշանակած աղբիւրներովն։ Որեմն կարող ենք համարձակ ասել, որ ամենեցունց նպատակը մի և նոյն Դպրոցի կառուցման և հաստատութեան վերայ հոգալն է, թէև սկզբումն երևում էր անհամաձայնութիւն միայն այդ նպատակին հեշտ կերպիւ հասնելի միջոց-

ների գործադրութեանումն, և ոչ թէ ժողովրդի մի մասն կաշխատէր Դըպրոց հաստատել, իսկ միւսն ջանք էր անում քակտել, ինչպէս երևում է պարոն Նկարիչ Ստեփաննոս Ներսէսեանի «Կռունկ» Օրագրի Ապրիլ ամսատետրակումն պարունակած դրութենիցն։ Այս դրութենիցն կարելի է հասկանալ, որ Ներսէսեանցն դեռ ևս ծանօթ չէ մեր քաղաքացւոց բնաւորութեանն, որովհետև նա չափազանց մեծ նշանակութիւն է տալի իւր նամակումն այստեղի Դպրոցի հիմնարկելու համար պատահած տըՆացի անհամաձայնութեանն և աշխատում է ժողովրդի մի մասը նմանացնել Վարդանայ գունդին, իսկ միւսը Վասակայ և Մեհրուժանի։ Ես երբէք կարող չեմ վստահաբար ասել, թէ մեր երկիրն աղատ է չար սերմունք ցանող և հասարակութեան վնասաբեր անդամներից. ամենայն ուրիք մեր ազգի դժբաղդութենից պատահած են և կպատահին բարեգործների հետ և չարագործներ, ուսումնասիրական սիրով վառուածների հետ դաւաճանող խաւարասէրներ և լուսատեացներ, բայց ողորմութեամբն Աստուծոյ Ղարաբաղցիք այս օրուան օրը գոլով հեռու պարոն Ներսէսեանի առաջարկած սարսափելի բաժանմունքից և խորշելով վնասակար անձանց ազդեցութենից, միաբան հոգւով և վառուած սրտով աշխատում են առաջ տանել ազգօգուտ գործն, որովհետև արդէն քաջ գիտեն անմիաբանութեան վատ հետևմունքները և իրանց ամենայն քայլում տեսնում են մեծահռչակ չինութեանց, քաղաքների և այլ ազգային պարծանաց աւերակները, որոնք զոհ են եղած աշխարհակործան անմիաբանութեան։

Մեր քաղաքի հասարակութիւնը ուսումնարանի համար ստորագրութիւն բանալիս ընտրեց իւր միջից և հինգ արժանաւոր անձինք, որոնք գնալով ի Մայր Աթոռն Էջմիածին անձամբ անձին, յայտնեն Վեհափառ Հայրապետին Ղարաբաղցւոց փափաքը և ուսումնարանի վերաբերեալ դրաւոր խնդրքի ու արդիւնաւոր նուիրաբերութեանց տումարի հետ ներկայացնեն Լիմաց հոգաբարձուաց և նորոգ կազմեալ ճոխ և հեռատեսական աչօք կանոնադրութիւնը։ Եթէ արդար խղճմտանօք դատենք, այսպիսի յաջողակ և գործին հարմար ընտրութիւն կարող չեինք երբէք սպասել. ազնիւ պատգամաւորները վառուած լինելով ուսումնասիրութեամբ, բոլորովին արհամարհեցին ձմերային ճանապարհորդութեան մեծամեծ դժուարութիւնները, նոքա թողլով սեպհական տուն ու տեղն, անյապաղ փութացան ի Սուրբ Աթոռն մեր և արդարև կատարեցին իրանց հայրենակիցների ակնկալութիւնը և սրտեռանդ փափաքը Ծայրագոյն Պատրիարգի շնորհին. Ղարաբաղցիք չեն մոռանալ երբէք իրանց խնդրքի մտադրութեամբ ընդունուին, Արցախայ արդի և ապագայ հեռաւոր սերունդը միշտ ու հանապազ պարտաւորուած կլինի առանձին յարգանօք յիշել բազմերախտ Հայրապետի և նորա սրբազան գործակցաց անունները։ Թէև ոչ ոք չէր տարակուսվում, որ ուսումնա-

սէր Հովուապետը ուրախութեամբ պէտք է ընդունի մեր բարենպատակ հասարակութեան խնդրուածքը, բայց այնու ամենայնիւ անդադար սպասում էինք Հոգևոր Դպրոցի կառուցման վերաբերեալ գործոց վախճանական վճռահատութեանն, վասն որոյ անցեալ Ապրիլի 26երորդ օրը անջինջ տառերով կտպաւորուի մեր հայրենակցաց յիշողութեան մէջ, որովհետև այն օրը համայն Արցախն զգեցաւ հոգևոր ուրախութիւն, տեսնելով խաւարամտութեան չղթաների խորտակումն և իւր որդկերանց առաջն բացուած ընդարձակ և դիւր անցանելի լուսաւորութեան ճանապարհները, այն անմոռանալի օրը մեծախումբ բազմութիւն մեր քաղաքացիներից փափաքելով Ուսումնասէր Հայրապետի կոնդակին, բերդի պարսպներից արտաքոյ կանգնած, անհամբեր կսպասէր պատգամաւորաց, որոնք արդէն հեռու չէին քաղաքիցը երեք ժամ ճանապարհով և կփութային ուրախացնել իրանց եղբայրակիցներին հրաշալի աւետեաց. բացի սրանից հարիւրաւոր անձինք ձիաւորք մեր քաղաքացիներից և մերձակայ գիւղականներից ցանկանալով առաւել ևս արժանավայելուչ յարգանօք ընդունել իրանց Հովուապետի և Սրբազան Հարց շնորհած պարգևն, գնացին ընդ առաջ աւետաբեր պատգամաւորաց և քաղաքիցը տասը վերստ հեռաւորութիւնում ընդունելով նրանց զրգախառն սիրով, վերադարձան իմիասին առ դուռն քաղաքի, որ տեղ արդէն երկար ժամանակ սպասում էր անհամար բազմութիւն ժողով դրականաց։ Այն բոպէումն կասես մեր երկրացիք ստացել էին Հայաստանի հղօր և անյաղթ շրջանի որդկերանց կերպարանքը և հոգին, ամենայն տեղից թնդում էր «կեցցէ Մատթէոս Հայրապետն» և այլ սոյնպիսի ի խորին սրտէ բըղխեալ որդիական սէր արտայայտող բառեր։ Բերդի դրան մօտ Յովհաննէս—բէկ Բահաթուրեանցն իւր և պատգամաւոր ընկերաց կողմանէ խօսեց հանդիսին յարմար խօսքեր, որոնց դրաւոր օրինակը յղում եմ «Կը-օրինկան։» Զկնի մինչանց ողջունելու և անթիւ կեցցէներ արձակելու ամենեքեանք զիմնցին յԱղուլեաց մայր եկեղեցին, որոյ շրջապատ պարըսպի դրան մերձ, Ղարաբաղու Վիճակային Կոնսիստորիայի անդամները և բոլոր եկեղեցականաց երկու կարգ կանգնացրած դասը շարական երգելով ընդունեցին պատգամաւորաց ձեռօք շնորհած Վեհափառի Կոնդակը և Սինոդոսի հրամանը։ Այսպէս, հոգևորականք և ժողովրդականք ի մի հոգի շաղկապուած գոհութիւն վերառաքելով առ ամենաբարձրեան, մոլին սուրբ տաճարը, զկնի երեկոյեան ժամերգութենից նախկին աւագ անդամն Կոնսիստորիայի Գրիգոր Աւագ—քահանայ Տէր Աւետիանցն կարդաց իւր ամենեցունց Սրբազնակատար Հայրապետի անցեալ Ապրիլ ամսումն շնորհած յաւէրժայիշատակ կոնդակն, որով վեհափառ Հայրը յայտնում է իւր հօրն վերայ ունեցած խնամք ու գրթառատ սէրը և բացի կրկին հաստատելուց նախկին կոնդակներում նշանակած յոգուա տեղւոյս Հոգևոր Դպրոցի բաղմատեսակ արդիւնաւոր աղ-

բիւրներն, յանձնում է Հոգեւորականութեանն և բոլոր Ղարաբաղու թեմի վանքական կալուածքները, պատուիրելով հոգալ վանօրէից պակասութիւնները և մնացեալ արդիւնքը գործ դնել յօգուտ նոյն Դպրոցին։

Ժողովրդականաց խուռն բազմութիւնը եկեղեցուցն ուղղակի դիմաց յուսումնարանն, և աշակերտները լռնած արծաթի սկտեղի վերայ Ծայրագոյն Պատրիարգի կոնդակն, Սրբազան Սինոդոսի յանուն կոնսիստորիայն տուած հրամանն և նորոգ հաստատեալ կանոնադրութիւնն կարդէին քաղցր ձայնով չարական մինչեւի Դպրոց հասնելն. այս տեղ երկրորդ դասատան աշակերտ Յովակիմ Թամիրեանցն կարդաց իւր և ընկերների լեզուից գրած շնորհակալութեան ճառ և նոյն Դպրոցի հայ լեզուի ուսուցիչ Յարութիւն քահանայ Մելքոնեանցն խօսեց արժանաւոր բան ուսման վերայ, այս վերջի ճառերի օրինակն ես յղումեմ և յուսամ, որ Կռնկան շնորհիւն հրատարակուի լուսեղկութիւն համազգեաց։

Նոյն Ապրիլի 26ին Շուշի քաղաքի հասարակութիւնն բացի վերոգրեալ հանդիսաւոր եղանակաւ ընդունելութիւն ցոյց տալուց Ծայրագոյն Հոգեւոր իշխանութեան բարենպաստակ և աղջոգուտ տնօրէնութեանն, ցանկացաւ և նորա յիշատակն մշտնջենաւորապէս անջինջ տպաւորել իւր սրտի մէջ. վասն որոյ բոլոր ժողովրդականք ուսումնարանիցն գնացին Առաջնորդարանական տունն, որ տեղ նշանակուած էր կատարել ուրախութեան տօն ի պատիւ Վեհափառի կոնդակին։ Պատրաստեալ խրախճանաց հաղորդ դասնուողների թիւն չորս հարիւրից առաւել էր։ Առաջնորդարանն լուսաւորուած էր անթիւ ճրագներով և կատարածէր համայն քաղաքի վերայ իւր ճաճանչները, տան առաջիցն փայլում էին երեք փակագիր (վէնդէլ), որոնց մէկի վերայ գծագրուած էր ՕԳՈՍՏԱՓԱՌ ԿԱՑՍԵՐԻ անուան գլխագիրը, երկրորդն արտայայտում էր Վեհափառ Կաթուղիկոսի անունը, իսկ երրորդի վերայ նկարուած էր Էջմիածնայ Սուրբ Տաճարն։ Երբէք ես չէի տեսած այնպիսի հոգեւոր ուրախութիւն, որ կպատէր մեր հայրենակիցներուն այս անմոռանալի օրը, ամէնքը շաղկապուած մի հոգուով, կողջունէին միմեանց, վեր առաքելով բարեմաղթութիւն առ Ամենաբարձրեայն, որ առատօրէն շնորհում է մեզ Տեառն ՄԱՏԹԷՈՍ Հայրապետի ձեռամբ նոր կեանք և ամենատեսակ բարիքներ։

Ներսէս Ալթաբէկեանց։

Ի 11 Յունիսի 1861 ամի
Շուշի։

Ի ԴԻՄԱՑ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱՑ

Ի 26 Ապրիլ 1861 ամի

Շնորհաւորեմք ձեր քաղցր տխութիւնն՝ հայրենակից եղբարք, ձեզ և մեզ մեծ աւետիք. աւետիք՝ զի Քրիստոս յարեաւ ի մեռելոց, աւետիք, զի և ազգ յարեաւ ի մեռելոց։ Արդարև ի բաղում դարուց հետէ ազգ Հայոց մեր հայրենի վիճակի իւր մեռեալ անդրայ անկեալ կայր յերկրի, իսկ այսօր վերնային նախախնամութեամբ զդեցեալ նոր հոգի և նոր սիրտ՝ զերապանծ փայլէ ի տես ամենեցուն. վասնորոյ հարկ է մեզ գոհութիւն և փառաբանութիւն հնչել ի լսելիս ամենազօր Արարչին, որ միշտ աներևոյթ զօրութեամբ կատարելով ազգի բարենպատակ խընդրուածքը հայրենեաց բարօրութեան, լուսաւորութեան և երջանկութեան համար՝ պարգևում է ազգին նոր հոգի և նոր սիրտ։ Դուք, որ ցանկանում էք լուսաւորութեան նոր տաճար կառուցանել, որ նորանում ձեր մատաղ մանկունքը կրթուելով զանազան շնորհիւ և լեզուագիտութեամբ, հանդիսանան հոգևորական և քաղաքական ասպարէզներում, մեծի գովութեան արժանի էք՝ քաջալերեցարուք, զի Տէր Աստուած ընդ ձեզ է. այն Աստուածն, որ Եգիպտոսական խաւարից ազատեց Իսրայէլեան ազգը ի ձեռն Մովսիսի և առաջնորդեց դէպի աւետեաց երկիրն, այն Աստուածն, որ հերձուցանելով կարմիր ծովն՝ ապահով անցոյց իւր ժողովուրդը դէպի ցամաք, ընկղմեց Փարաւոնն իւր զօրօքը ծովու անդնդումը և չթողեց երկրին յաղթահարել Իսրայէլեան ազգին և խաւարի ծառայացնել։ Ահա դուք նոր Իսրայէլ հասել էք աւետեաց երկիրն, ուխտեցէք միմեանց և օրհնեցէք նորն Մովսիսի, այսինքն՝ Մատթէոսի Վեհափառ Կաթուղիկոսի կեանքը, որ առաջնորդում է մեզ եգիպտոսական խաւարից ազատելոյ, մի երկնչիք ոչ նորածին փարաւոնից և ոչ նրան հետևողներից, վասն զի ծովային անդունդն ասպատում է նրանց, այլ յուսացէք յԱստուած և ի նորն Մովսէս, այն է ի Մատթէոս Կաթուղիկոս, զի նա օրհնելով առաքելական շնորհիւ ազգի յառաջադիմութիւնը և ազգի հեռատեսական սուրբ նպատակը, կատարեց բոլորովին ձեր խնդրուածքը և ընդ նմին բարեմաղթեց դէպի Աստուածային սուրբ աթոռը, որ այս ղղացմունքը ազգի մէջ յաւիտեան մընայ և պողաբերի և մենք վայելենք մեր ազգի մանկանց ուսումնական յառաջադիմութիւնը։ Այլ ի վերայ այսր ամենայնի պարտաւոր եմք մենք ջերմեռանդ գոհունակութիւն մատուցանել և Տնարց Անդամոց Սինոդոսին Սրբոյ Էջմիածնի, վասն զի և նոքա եռանդուն աղղասիրութեամբ օժանդակ եղին ձեր և մեր խնդրուածքը կատարելու, որով և պարտաւոր կացուցին մեզ առաջի Սուրբ Մայր Աթոռոյ Էջմիածնի և առաջի ինքեանց։ Ապայոյց ձեզ այսր ամենայնի մատուցանեմք ձեզ թանկագին նուէրքներս —նախ՝ պաշտելի Կոնդակն Վեհափառ Մատթէոս Կաթուղիկոսին յանուն հասարակութեան, երկրորդ՝ հրամանը Սինոդին Սրբոյ

Էջմիածնի յանուն կենսիատորական և երրորդ՝ Կանոնադրութիւնն հաստատել ի Վեհափառէն և ի Սինոդէն, վերաբերեալ դէպի Ռուսմնարանն։ Ուստի յուսամք, զի Աղգասիրութիւն ձեր ընկալեալ այս նորընծայ նուէրքը, ողջունէք մխիթարանց սիրով և գրկախառն համբուրիւ, նորհաւորէք այս նոր աւետիքը և ուրախանաք յաւիտեան հանդերձ ձեր մատաղ զաւակներով, որք ունին վայելել այս սուրբ նորհքը Վեհափառ Կաթուղիկոսին և Տեարց Անդամոց Սինոդին Սրբոյ Էջմիածնի. ահա հընչեսցէ միաբան Եկեղեցի Հայոց —«Էջ միածին ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա և այն։»

Յոհաննէս —բէկ Բահաթուրեանց։

ԱԶՆԻՒ ԵՒ ՅԱՐԳՈՑ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՔ

Դարձուցէք քանի մի բոպէ ձեր քաղցր ուշադրութիւնը մատաղահաս աշակերտների վերայ այն Ազգային Հոգևոր Դպրոցին, որոյ վերանորոգութեան և բարելաւութեան համար գործ էք դնում ձեր անդին կեանքը և յանձն էք առել այս գերահուչակ գործը։ Կարելի է համարձակ ասել, որ ձեր անխոնջ հոգացողութիւնները և բարենպատակ աշխատանքը կդասեն ձեզ Հայաստանի հինգերորդ ոսկի դարուն ազգային անմահ կարգաւորողների չարքումն։ Մեզ յայտնի է, որ մեր հայրենակիցներից ոչ ոք չի դժուարանալ հաստատել այս ասածներս, որոնք առաջ են դալիս ոչ թէ կեղծեալ հոգւոյ ազդեցութենէն, այլ մատաղ աշակերտաց յատակ սրտից, որք ծարաւի են ազգային լուսաւորութեան։ Մեք սովոր ենք բարերար և ազգասէր անուանել նրանց, որք ցոյց են տալի հասարակութեանն գործակցութիւն դրամօք և կայքերով, բայց ինչքան մեծ պէտք է դնահատել գործակցութիւնն և նուէրքն այս մեր ընտիր պատգամաւորացդ, որք թողլով իւրեանց յատուկ տուն ու տեղն՝ անային հոգսերը և որ մեծն է ծնողական սրտի համար առաւել թանկագին կեանքն —զաւակներն, և իրանց ձգելով ամերային ճանապարհորդութեան ամենայն կասկածանացներքդ, դժուարուղի սարերով՝ փութացան, դնացին ի Մայր Աթոռն մեր ի Սուրբ Էջմիածին հասարակաց օգտին համար։ Պատմութիւնն փառաւորում է մեծագործութիւնն այնպիսի մարդկանց, որք յաղթում են թագաւորութիւններին և խանարհացնում օտար ազգերը սուրկութեան չղթաներով, ապա ուրեմն յոյժ յոյժ պէտք է փառաւորութեան արժանի լինի ձեր ազգօգուտ մեծագործութիւնն նրա համար, որ դուք Աստուածապատիւ մեր Վեհափառ մեծ Հայրապետի՝ Տեառն Մատթէոսի Առաջնոյ մեզ ուղարկած պաշտելի կոնդակովն խորտակում էք ազիտութեան և մատց խաւարի չղթաները և բանում էք մեզ համար ճշմարիտ լուսաւորութեան դրունքն և ճանապարհները։ Անմոռաց կմնայ օրս այս Արցախայ մատաղորերոյն յիշողութեանց մէջ և անջինջ կտպաւորուի նոցա սրտումն մշունջենաւորա-

պէս մեր Աստուածարեալ աղգասէր մեծի Հայրապետի, իւր Սինոդոսականաց և մեր Հասարակութեան արժանաւոր Պատգամաւորաց և հոյլենասէր Բարերարաց անուններըը, որոց երկար կենաց, քաջողջութեան և խաղաղութեան համար իւրաքանչիւր ոք մեղանից պարտաւոր է վերառաքել Ջերմեռանդ աղօթք առ Ամենարարձրեալն։

Աշակերտ երկրորդ դասատան Հողևոր Դպրոցին
Ղարաբաղու Յովակիմ Թամիրեանց։

ԱՐԺԱՆԱՊԱՏԻ՛Ի ՀԱՐՔ ՀՈԳԵՒՈՐՔ

ԵՒ ՄԵԾԱՊԱՏԻ՛Ի ԱՅՑԵԼՈՒՔ

Եղեալ են ի հնումն ի զանազան ազգս, զոն և այժմ երևելի ատենաբանք, որք յատենաբանելն իւրեանց խօսեցեալ են զմեծամեծ իրաց զերևելի բանս, և նոքօք գրաւեալ և յանգուցեալ են յինքեանս զաչ և զմտադրութիւն ունկնդրաց և հանդիսականաց, և ցուցեալ են զմեծ զորութիւնս և զպատիւս խմաստասիրութեան, որք ի յաւիտեանս ժամանակաց յիշատակին անմոռաց։ Այլ՝ իմ, որ կացեալ աստանօր ի հանդիսի բազմախումբ ժողովոյ սկսանիմ խօսել, չէ՞ զիտաւորութիւնն այն, զի անուանեցայց Ատենաբան, և չահեցայց զզորութիւնս, նա՛ զի ժամանակ վասն խօսակցութեանս սուղ է, զի ահա՛ գիշեր յաջորդէ աւուրս, և ունկնդիրդ վաստակեալ դառնիք բաղումս, այլ՝ որոյնեան տեսանեմ զդէմս ամենեցուն Ձեր զուարթս ինորազոյն Ատենիս, և ակնարկս յունկընդրութիւն, միանգամայն և յորդորս առիս ի բանախօսութիւն, ուստի ստիպիմ, մանաւանդ ի յուշադրութեանց և ի Ջերմեռանդութեանց Ձերոց, և որ մեծն է ի սուտ՝ ի սիրոյ, քան՞ ի պարտաւորութենէ ծանր պաշտամանս, բերանաբի բանիւ լացախօսել սակաւուք զոդուակարութենէ խմաստութեան, զիտութեան և ուսումնարանի, զանց արարեալ ի ժամուս զբաղմօք, ոչ ճարտասանական զարդարուն ոճով, և բաժանմամբք և իմաստասիրական նուրբ քննութեամբք, այլ՝ քերականական պարզ և ընտանի խօսակցութեամբ, միաձոյլ և ամփոփ եղանակաւ ի զիւրին հասկացողութիւն լսողաց, եղեալ բնաբան խօսակցութեան խնդ զբան դիրանենար խմաստնոյն Սողոմոնի «Իմաստութեամբ շինի քաղաք, և հանճարով հաստատի»։

Արդարև իմաստուն էր Սողոմոն, և Աստուածային իմաստութեամբ խօսէր, և կամ լաւ ևս ասել, «Իմաստութիւնն Աստուծոյ խօսէր ինձա»։ Իմաստութիւնն յատկութիւն է Աստուծոյ. զի Աստուած իմաստութեամբ շինեաց զքաղաք մարդկային բնութեան, յորում ամենայն անդամք բարեկարգեալ դասին, և կատարեն զիւրաքանչիւր գործ ըստ կարգի։ «Ի-

մաստութեամբ չինեաց Աստուած զաշխարհս, և հանճարով իւրով հաստատեաց, և զարդարեաց զանազան զարդու և զարմանալի տարազու, յոր հայեցեալ հոգւոյ աչօք մարգարէին Դաւթի, ասէր, «Աքանչելի են գործք քո Տէր, զի լցաւ երկիր ստեղծուածովք քովք». որք զճարտարապետին իւրեանց քարոզեն զօրհնապաղ զանհաս իմաստութիւն, և զանքննին զհանճար, այսինքն զարարչագործութիւն և զնախախնամութիւն նորին. Դարձեալ՝ իմաստութեամբ արար Աստուած զերկինս և զերկիր, և զոր ի նոսա, յորում և զառաձառափայլ ցոլանայ ամենահաս իմաստութիւն նորա, և անքուն հանճար։ Որով իմաստութեամբ արար Աստուած ի սկզբանէ զերկինս և զերկիր յոչնչէ, նովին ի յերկրորդումն նորոգեաց զապականեալ բնութիւն մարդկային, և առաւել քան զառաջինն ճաճանչաւէտ չքեղաղարդեաց անզին սուրբ արեամբ իւրով, և փրկագործ անօրէնութեամբք իւրովք, զորոց Աստուածաբանք նրբաբանեն։ Իմաստութիւնն պահապան է Աստուածութեան աթոռոյ, որպէս նոյնն աղաչէր, տուր ինձ Տէր զքոյոց աթոռոցդ զղարանակալ իմաստութիւն։ Իմաստութեամբ և խորին հանճարով չինեն թագաւորք զզանազան քաղաքս. և խնամարկեալ պահպանեն ի բարեկարգութեան, խելօք և զիտութեամբ հոգան մարդիկ զզէտս հոգւոց և մարմնոց իւրեանց, և որոց ի խնամս իւրեանց ապաստան կան։ Ասացեալ է, «Երանի աղքի և քաղաքի, յորում կամ իմաստասէրք թագաւորեցին, կամ թագաւորք իմաստասիրեցին»։ Տեսանեմք սիրելիք, զի յաշխարհի զամենայն ինչ իմաստութեամբ և զիտութեամբ գործեն և կերտեն արհեստաւորք, իւրաքանչիւրն ըստ իւրում կարգի, կանոնի և արհեստի։ Վասն որոյ բարձրաբարբառ ասէր իմաստունն, «Իմաստութեամբ չինի քաղաք, և հանճարով հաստատի»։ Ապա ըստ ասացելոյս պարտիք ո՛ արժանայարդ Այցելուք ջանալ ի հաստատութիւն ուսումնարանաց, յորում ուսանիցին որդիք, Ձեր և մանկունք բոլոր Հայաստանի զիմաստութիւնս, զգիտութիւնս և զարհեստս ամենագտակարս, ո՛չ ասեմ զաշխարհականս, զվնասակարս հոգւոց և մարմնոց, ըստ այնմ, «Թէպէտ և լցէ ոք կատարեալ, և առ իքէն իմաստութիւնդ հեռի լցէ ի նմանէ, խոտան և ոչինչ համարեսցի», այլ զիմաստութիւնս Աստուածայինս, զսուրբս և զաւետարանականս հանդերձ ամենագով առաքինութեամբք և Աստուածալունակ վարուք, որ անչուշտ սիրելի առնէ զմարդն Աստուծոյ, ըստ այնմ, «Աստուած ո՛չ զոք սիրէ, բայց զայն, որ ընդ իմաստութեան կեցցէ»։ Իմաստնոյն և զիտնականին հարկ է ըստ խրատու իմաստութեան կեալ, յորմէ և այլք բարեկրթեսցին, և փառաւորեսցեն զտուիչն այնպիսի իմաստութեան՝ մարդկան, ըստ այնմ, «Տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զհայր ձեր, որ յերկինս է. և թէ՝ Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն է», որպէս ասացեալ է։ Ապա երկիւղիս Տեառն խրատեցէք զորդիս ձեր, զի իմաստնասցին, և աստուածապաշտ լինիցին։ Մարմնոյ կրթութիւն սակաւ ինչ օգտակար է,

իսկ Աստուածպաշտութիւն առ ամենայն ինչ օգտակար է, ասէ Առաքեալն, և թէ շահավաճառ մեծ Աստուածպաշտութիւնն է բաւականութեամբ հանդերձ։»

Տուք զորդիս Ձեր յուսումն Աստուածային գիտութեանց, որով կարասցեն զարարչագիտին զպատկեր ճանաչել, և անարատ պահպանել յինքեանս, և ըստ պահանջման ժամու զաւանդն տալ տանդատուին ուրախութեամբ, զի ինքեանք ուսեալ զոլով յԱստուածային մատենից և օրինաց, կարեն ըստ կամաց Նորին վարել, որպէս կոչեցեալ մարգարէն Եսայի ասէ. «Եղիցին ամենայն մարդիկ ուսեալք յԱստուծոյ»։ Ցերկրի ծննդեան և մեղեան իւրեանց ուսուցէք զորդիս ձեր, զի զթասցին ի հողս իւրեանց ըստ սաղմոսերգուին, որով անմահասցին ինքեանք, և անմահացուսցեն զանուանս և զքաջութիւնս անմահանուն և երջանկայիշատակ նախնեաց մերոց յերկրի և յերկինս։

Մանկունք Հայաստանի ստացեալ զուսումն կարևոր գիտութեանց, կարեն լինել հիմնադիր քաղաքաց, կանգնիչ անկիւոյ աղգին, սիւն հայրենեաց, և առատացուցիչ գնոցորէն բարեբաղդութեանց և երջանկութեանց յաղագս իւրեանց, և իբրև զնրադ բաղմալոյս եղեալ ի բարձր աշտանակի լուսատու լինել ամենեցուն. վասն այսորիկ ասէր խմաստունն, «Խմաստութեամբ շինի քաղաք և հանճարով հաստատի»։ Ո՛չ միայն պարտիք կանգնել խմաստութեամբ զուսումնարան, այլև հանճարով ջանալ ի հաստատուն և յանխափան յարատևութիւն Նորին, զի այդեղուրիք առաւել քան զառաւել ջանադիր լինին և անքուն տքնին վասն անվնաս պահպանութեան այդեայ իւրեանց ի թշնամեաց ի ժամանակս պտղոց, և գուն գործեն դատանել զաշխատասէր և զսրատաւաւ մշակս ի նոսին։

Ցգէտն բոլորովին զուրկ է յաստուածային չնորհաց և ի կատարեալ կենաց, որպէս կոյրն զուրկ է ի լուսոյ արեգականն ճառագայթից, որպէս ասէր ցաւակցաբար սքանչելի ոմն վարդապետ ի մերոց, «Լաւ է կոյր աչօք, քան կոյր մտօք, որպէս կոյր զրկի ի ճառագայթից արեգական, նմանապէս տգէտն զրկի ի կատարեալ կենաց, զի ոչ կարէ ճանաչել զըստեղծուածս և զարարիչն նոցա, որ համարի այս ճանաչումն վասն մարդոյ երջանկութիւն բնական, ըստ այնմ, «Երջանիկ է, որ ծանեալ ըլ պատճառս իրաց»։

Ահա, արժանայարգ Այցելուք, մահու չափ մեղք պարտաւոր են ծընողք զորդիս իւրեանց տալ յուսումն, և առնել զնոսա Բարի մարդ և Բարի քրիստոնեայ, և պիտանի անդամ հասարակութեան։ Ո՛հ, եթէ ի ժողովրդականս այսպիսի գիտութիւն պահանջի, ապա ի հողևորականաց դասս և ի թագաւորս ոչչափ, որք զոլով տգէտ և անուսումք, ոչ միայն ինքեանց կորստեան լինին պատճառ և մեղաց, այլև որոց բարուք հոլութիւն և հոգք յանձնեալ են ինքեանց յԱստուծոյ։ Ձեզ թողում խմաստասիրել, քան թէ խմոլ բանիւ երկարել, մանաւանդ թէ ամաչեմ իսկ, զի

ասացեալ է ուրումն երանաշնորհի խմաստնոյ «Այլք ի գլուխս և ոչ յոտս»։

Տեսիք սրդիօք, թէ որչափ հարկաւոր է մարդոյ ուսումն զիտութեանց. չեն կամք ինձ բովանդակաբանել զխմաստութենէն, այլ առաքեմ զձեզ ընթեռնուլ զիմաստութեան գիրս մեծիմաստ արքային Սողոմոնի, և նոքօք բաւականանալ, որպէս մարմին մանկան կաթամբ հարազատ ծընողին մնանի, նոյնպէս հոգի մանկան աղգային լեղուագիտութեամբ և գպրութեամբ զարդարի. որպէս ոսկերչութիւնն արծնէ զարծաթն, նոյնպէս ուսումն արծնէ զհոգի մանկան, զի բառդ Սողոմոն խաղաղարար թարգմանի, և օրինակ է Քրիստոսի. որպէս սա Աստուածաշունչդ խմաստութեամբ խաղաղացոյց զաղգ իւր, և բարւոք կառավարեաց, նոյնպէս Քրիստոս Տէրն մեր երկնաւոր խաղաղութեամբ իւրով և աւետարանական օրհնութեամբ խաղաղացոյց զընտրեալն մարդկային և բարւոք տնօրինեաց։

Առատնօր ստիպեալ իմ ի համառօտութիւն բանիս, վասն արագախուստ լինելոյ ժամուս, (որպէս ի սկզբանն խոստացայ. թէև թերի մընայ իմ բան, այլ այն վերաբերի ի սղութիւն ժամանակիս,) զարձուցանեմ զդէմս բանիս առ թանկագին և հայրանման երախտաւորս մեր, օրհնելով զնոսա և բարեմաղթելով վասն կենաց նոցա։

Առ նորին կայսերական Մեծութիւնն առ Ամենաբարեպաշտ Ինքնակալն ամենայն Ռուսաց՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ Բ. Ամենազորեալ թագաւորն մեր, զի որպէս զհարազատ հայր խնամարկէ զմեզ, ընդ որոյ հովանաւորութեամբ պահպանիմք իբրև ի ծոց մայրենի։ Աղաչեսցուք զԱստուած, հաստատուն պահել զթագաւորութիւն նորա յաղէ յաղէ և յորդւոց յորդիս, և զհանդուցեալն նորին հանգուցանել ի լոյս երեսաց իւրոց, զի ձեռն մարդասիրութեան կարկառեալ բարեկարգէ զքաղաքական կեանս մեր, ըստ սմին, «թագաւոր արդար կանգնէ զաշխարհ»։ Այնպիսի թագաւորութիւն, որ ի բաղում ամաց մարդասիրեալ բարերարեաց մեզ, ազատելով ի յանիրաւ բռնաւորաց, բարբարոսաց և մանաւանդ ի թշնամեաց հաւատոյ սրբոյ, և եթ մեզ ազատ ստուգապաշտութիւնս, և զամենայն հնարս և միջոցս ի գործ արկանէ բարւոքել զաղգ մեր բաղդաւոր կացուցանել յաշխարհի, և նորոգել զաշխարհ մեր անշքացեալ յառաջին գեղեցկութիւն իւր, նա այժմեան լուսաւորիչ և սրտայուզ թագաւորն մեր, որ իբրև զնոյր գորովագութ շնորհեաց ստորագրեալ ազգաց ընդ տերութեամբ իւրով, զամենատեսակ բարի և աստուածավայել ազատութիւն, յորոյ աւուրս զաւաք զայժմեան լուսաւորութիւն, որում յուսամք տեսել մինչ ցկատարած աշխարհի։ Ուրեմն սրտի մաօք խոնարհեսցուք ընդ ամենաքաղցր լծով թագաւորութեան նորա, և ամենահրաշակաւորէն ծառայեսցուք նորին բարերար կամաց և սրտաուրս կացցուք նմա յաւուրս կենաց մերոց, յիշելով միշտ զսուրբ անուն նորին, յարաժամ յամենայն տեղոջ, յաղօթս և առաւել քան զամենայն ի սուրբ պատարագի՝ յաստուածային տաճարի. ապաքէն ինքն թագաւորն ունի ևս

քան զնս առատաբաշխել մեզ զհայրախնամ գութ մարդասիրութեան իւրոյ, ըստ որում «Բերան չնորհակալու պարտաւոր առնէ զԱստուած», ասէ աստուածխօսատ առաքելոն։ Եթէ բերան չնորհակալու պարտաւոր առնէ զԱստուած, որչափ ևս առաւել դիտաւորն առ ի բարերարել հըպատակաց իւրոց։

Բարերարն Աստուած զկեանս Վեհափառ Հայրապետին մերոյ Տեառն և Տեառն ՄԱՏԹԷՈՍԻ Ա. Արքաշնակատար Կաթուղիկոսի ամենայն Հայոց առողջ պահպանեսցէ և խաղաղութեամբ ի խոր ծերութիւն հասուցէ ի պայծառութիւն Արքոյ Եկեղեցւոյ և բանաւոր հօտի իւրոյ, որպէս զի անյաղթ պահպանեսցէ զեկեղեցիս Հայոց, զնիւթական և զբարոյականս, ի ներքին և յարտաքին թշնամեաց ըստ բանի փրկչին մերոյ. «Դու ես վէմ և ի վերայ այդր վիմի չինեսցից զեկեղեցի իմ. և դրունք դժոխոց մի յաղթահարեսցեն զնա»։ Մի այնպիսի Հայրապետի, որ զարդարեսայ զաղգ մեր ի կողմանս Տաճկաստանի, չինութեամբք աղգային փառաւորագոյն ճեմարանօք, որ միմիայն պարծանք է աղգի և դաւազան ոսկի յարուցիչ անկելոց, և զօրավիգ վառնգելոց։ Յօրինմամբ հայկական օդտաւէտ մատենից իմաստասէրց զմանկունս եկեղեցւոյ։ Արդ պարտիմք խոստովանել զնա նոր Մովսէս առաքեալ յԱստուծոյ ի Սինէական լեռնէն վասն աղգիս, աղատել զմեզ ի աղխուութենէ հարկաւորագոյն դիտութեանց, տպաւորել ի սիրտս մեր զպատգամս կենդանիս, բանալ ի քաղաքս Հայաստանի զդղրոցս երևելի արհեստից և դիտութեանց և նոքօք ածել զմեզ յերկիրն Աւետեաց, բղխողն կաթին և մեղու, որով երբէք չմոռանալ զմեզ, իսկ զմեզ որդիական հնազանդութիւնն տալէ և պարտաւորել ենթարկել զանձինս ընդ սրբազնակատար կամօք Նորին, և միշտ կալ ի սպասու ծառայութեան Նորին, և չարժիլ ըստ նորին ակնարկութեանց։

Գոհ լիցուք զՍրբազան Հարց Սիմեոնոսին Արքոյ Էջմիածնի, և զԳերապնիւ աստիճանաւորաց որ ի նմին, և մի ի մոռացօնս արկցուք զբարերարութիւն նոցին վասն աղգիս և վիճակիս, զի և նոքա ըստ պարտաւորութեանց իւրեանց ի կողմանէ Սիմեոնոսին ոչ սակաւ բարերարութիւնս, աղգասիրութիւնս և օժանդակութիւնս ցուցեալ են հասարակութեան մերում, հիմնաւոր կարգաւ վաւերացուցանելով զամենայն գործառնութիւնս առ Ուսումնարանն վիճակիս, միանգամայն և խրախուսեալ են ի բարին հարկաղրութեամբ։

Օրհնեսցուք զկեանս մեծապատիւ Պատգամաւորացդ ի մէջ ի Սուրբ Էջմիածին և զոհ եմք զձէջ մեծապէս, զի ի ցրտային և յանբարեխառն ժամանակիս յօժարակամ ճանապարհորդեցիք ի Մայր Աթոռն մեր ի մեծ Հայրապետական գահն Արարատեան և համազգական, յաղագս կատարելոյ զփափագ սրտից հասարակութեանս, այն է խնդրել և բերել զհրաման բացման Աղգային Ուսումնարանի ի վիճակիս Արցախայ ի Վեհափառ Հայրապետէն մերմէ, և միով բանիւ կատարեցիք զուք զՓրկչին մերոյ զբանն,

թէ «Եւ զոր ինչ խնդրիցէք ի հօրէ իմմէ յանուն իմ տացէ ձեզ», և թէ «Ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ և ես ի մէջ նոցա»։ Այո, ասա էր Քրիստոս Տէրն մեր, որ հաճեցաւ և կատարեաց ըստ խնդրոյ հաստատութեանս։ Դուք եղէք Նոյեան աղաւնի, և բերիք վասն երկրիս դշխոյ ձիթենւոյ պարարտացուցչի և տաստացուցչի յաւիտենական ուրախութեանց։ Դուք եղէք Նոյեան աղաւնի և առաւել քան զայն, և թէ որպէս, լուարուք. զի նա միակ, դուք հնդեակ, նա անբան, դուք բանական, նա երեր դշխոյ ի բերանի յանբան ծառոյ, դուք բերիք դշխոյ օրհնութեան ի բանաւոր յաստուածատունկ ծառոյն ի Սուրբ Հայրապետէն ի բերանս ձեր ի բանաճարակս. նա կոցաւ առեալ դշխոյ ձիթենւոյն, իսկ դուք ձեռամբ առեալ զօրհնութեան Կոնդակ՝ համբուրիս սուրբ աջոյ Նորին և բանիս Աստուածախօս բերանոյն եկիք առ մեզ. նա աւետեաց նահապետին Նոյի զցածումն ջուրցն հեղեղի, իսկ դուք աւետեցիք մեզ զցածումն տգիտութեան հեղեղի։ Աստուած նա Նոյի ինչան հաշտութեան զաղեղն յորկինս, իսկ Վեհափառ Հայրապետն մեր ետ մեզ ի ձեռն ձեր ինչան հաշտութեան զսուրբ Կոնդակ իւր։

Օրհնեսցուք զկեանս մեծապատիւ Հոգաբարձուացդ Ուսումնարանիս, և զոհ եմք յանչափս զձէնջ, զի դուք իբրև անյաղթ ախոյեանք, իբրև զօրականք անպարտելիք և իբրև ամոլք ակօսատարք, յաղթեցիք անօրինակ քաջութեամբ ձերով ամենայն չրջապատեալ լեռնակարկառ դժուարութեանց, արգելանաց և խոչընդոտից, և հանիք ի ցամաք զնաւն տլեկոծեալ յաղմկեալ ծովու, յանքոյթ նաւահանդիստն։ Ցեսանեմք յաբաժամ, զի ի ծագել ծայրակարմիր արևուն ի պայծառ երկինս, ամպք լերթագոյն ընդ առաջ եկանեն արեգական, ոմանք յայսկոյս և ոմանք յայնկոյս, ի խափանումն ճառագայթից նորին, ապա ի տաղնապել և ի հնչել հողմոյն, ցնդին, ցրուին, չքանան, արեգակն զիւրն վարէ անարգել ճանապարհ, և զղիմահարսն յաղթեալ, ներգործեալ մշտակաց լուսով իւրով թափանցիկս առնէ, և թէ որքան արդիւնաւորեցին ձեր անքուն արթնութեանց ջանասիրութիւնք, ամենեքեան մեծաբարբառ քարոզեն, և չհայեցայք երբէք յետս ընդ կրունկն, ըստ այնմ, «Ոչ ոք արկանէ ձեռն զմաճով, և հայիցի յետս, թէ յաջողեալ իցէ արքայութեան աստուծոյ»։

Իմ վերջին բանք առ բոլոր հասարակութիւնն է. զոհ եմք լիաբերան օրհնութեամբ և արժանահայց աղօթիւք առ ամենախնամն Աստուած, վասն անզին կենաց ձերոց, ձերայնոց ամէնից և վերատղեալ բարձրապատիւ երախտաւորաց։ Աստուած օրհնեսցէ զկեանս ձեր իւրով ամենազութ օրհնութեամբ, և խաղաղութեամբ պահեսցէ մինչ ի կատարած աշխարհի, յազգէ յազգ, յորդոց յորդիս. քանզի դուք ամենեքին միակամ, միասիրտ և միահոգի, ջանադիր եղէք և մեծամեծ արդեամբք դաստուածահաճոյ ջերմեռանդութիւն ձեր ցուցիք վասն հիմնարկութեան, բացման և պայծառութեան ուսումնարանի յԱրցախու երկրիս, որ և անուանի Աղ-

ուան, զի Աղուն ի գրոց լեզու քաղդր լսի, ասացէ սէր, զի երկիր մեր լի-
ցի Աղու ոչ միայն վասն իւր, այլև վասն օտարաբնակ եղբարց մերոց։
Իրաւքանչիւր օք ի ձէնջ չկամեցաւ ունել միայն իւր զմարմնաւոր որ-
դիս, այլ ունել ևս զհոգևոր որդիս. վասնորոյ բացիք զուսումնարան հա-
սարակաց, զի և հասարակաց որք որդիք վարժեսցին անդ արդեամբք
ձերովք, յորդեգրութիւն Հօրն երկնաւորի քրտամբք երկանց ձերոց։
Այլ, կատարեցիք զանտուտ վճիռ Հոգւոյն սրբոյ ի ձեռն առաքելոյն, «Ե-
թէ օք իւրոյն, և մանաւանդ ընտանեացն խնամս ոչ տարցէ, ի հաւատոցն
ուրացեալ է, և չար ևս քան զանհաւատս է»։ Խնամ տարայք ընտա-
նեաց և հաւատապահք եղէք սովին։ Արժանաւորեցայք դուք Հնորհաց
Հոգւոյն սրբոյ և արժանաւորեցիք զմանկունս ձեր նորին մեծամեծ պար-
գևաց և զգուանաց։

Հաւատացէք հաւատեաւ, զի ողորմութեամբն Աստուծոյ առաքելոց
են աղաւնիք յայսմ Ուսումնարանէ և առ հեռաւոր և օտարաբնակ եղբարս
մեր ազգակիցս, աւետաւորք եղիցին զարգացման նոցա յուսումնակա-
նութեան, և պատճառ ուսման նոցա ատուածպաշտութեան, և զիտելով
ոչ միայն զհայրենի լեզուն, այլ և զօտարին, որ յանգուցին զօտարակոնս առ
ազգ մեր, վասն լեզուագիտութեան, ըստ հոգևորական մասին և ըստ
աշխարհական։ Արդ զրչաւ երկաթեաւ և անդամանդեայ եղեղամբ զրե-
ցէք ի սրտի ձերում և ի մտի զմարգարէական բան խնամատարն Սողոմո-
նի. թէ՝ «Խնամատութեամբ չինի քաղաք և հանճարով հաստատի»։ Եւ ի միաս
որդւոց ձերոց ի մանկութենէ յամենայն ժամու տպաւորեցէք անջնջելի։
Երրորդական զիտութեամբ կատարելագործեցէք զմանկունս ձեր, զնեալս
մայրենի կաթամբ, զարմատացեալս բնութենական ազգային ծանրաբա-
ռոյութեամբ և վեհանձնութեամբ։

Աղէ սիրով և միաբանութեամբ մնացէք ընդ միմեանս, թողէք, զի
հուր աստուածային Հնորհայ ծաւալեսցի ի հոգիս ձեր և հուր սիրոյ նո-
րին բորբոքեսցի յիւրաքանչիւր հոգիս, հուր սիրոյ, խաղաղութեան, միա-
բանութեան, հայրենասիրութեան և ազգասիրութեան, զարկեալն ի Գրիգ-
չէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, յերկնաւոր վարդապետէն զհուր արծար-
ծեցէք և բորբոքեցէք ի սիրտս, և զիտացէք, թէ զինչ է այս,
թէ, «Հուր եկի արկանել յերկիր»։ Սէրն տայ մարդոյ զուսումն, և ու-
սումն առատացուցանէ զսէր, ապա արմատացուցէք զերկոսին զայս-
սիկ ի սիրտս ձեր և ի հոգիս, զի և երկնաւոր սէրն բնակեսցի ի ձեզ և
օթեանեսցի։

Հապա, դուք, սիրասուն և սիրակարիաճ մանկունք, ի տախտակս սրտից
ձերոց ոսկեղէն տառիւք անջնջելիք զրոշմեցէք զերախտիս այսպիսի երախ-
տամատոյց բարերարաց ձերոց, և Ջանացէք յուսալով յԱստուած, երախ-
տամատոյց զտանիլ սոցա ձերով ամենօգտակար ուսումնականութեամբ
և հրեշտակակրօն վարուք, որով միխիթարեսցին հոգիք բարերարաց ձե-

բոց, ըստ այնմ, «Որդեակ, զերախտիս երախտաւորի քո մի մոռանար»։ Դուք իբրև ազատեալք արծաթասպան թեովք և ոսկեզոյն թիկնամիջովք, չիւղ ի բերանի, բարգաւաճեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, դնացէք և տարածեցէք զուսումն դիտութեան յամենայն տեղիս, վանեցարուք աղդասիրական հոդւով, և զոհ լերուք վասն հայրենեաց, ըստ օրինակի Փրկչին մերոյ, որ սիրելով զաղդ իւր՝ զմարդկային բնութիւն, զորոյ առեալ էր զկերպարանս, մեռաւ ի վերայ աղդին, և ենեղ զպատուական սուրբ արիւն իւր վասն նորին, որով և ազատեաց յիշխանութենէ բանսարկուին։

Զոր օրհնութիւն կամ զոր գոհութիւն մատուցուք բարերարին Աստուծոյ, որ արժանաւորեաց զմեզ տեսանել զայս օր անսպառ ուրախութեան, որ յանկարելեացն էր կարդի, բայց եթէ զմածուցումն երևեաց մերոց ի հող երկրի, մինչ ցվախճան կենաց մերոց։ Օ՛ր, զոր տարեկան հանդիսիս պարտիմք տօնել ամ յամէ մշտապէս, հարկաղրեալ յաստուածային մատենից, թէ «փող յարէք ի զլուխս ամսոյ յաւուրն նշանաւորի տարեկանաց մերոց»։ Օ՛ր, որ աւուրցս այսոցիկ հաղորդի, յորս երդէ եկեղեցի սուրբ ի Ցինանցս վասն յարութեան Քրիստոսի տեառն մերոյ։ Օ՛ր յարութեան Ցեառն տայ մեզ աւետիս հաստարակաց յարութեան յաւուրն յետնում, իսկ օրս այս տայ մեզ աւետիս հաստարակաց խնամատութեան, լուսաւորութեան և յաւիտենական երջանկութեան։ Օր նոր և տարի նոր անուանել յուսադրիմ ես ի հաստարակաց համաձայնութենէ, զոր յԱղամայ հետէ չէր տեսեալ ոք ի նախնեաց մերոց, որում մեք՝ որդիք նոցա արժանաւորեցաք տեսանել ըստ բանի տեառն մերոյ, «Բազումք ցանկացան տեսանել զօրս զայս, և ոչ տեսին, և լսել զայս, զոր լսէքդ, և ոչ լուան»։ Զուրախութիւն աւուրս անմոռաց պահպանեսցուք յաղդս մեր, ի տարեգրութիւնս հաստատեսցուք, դի յիշատակեսցի յապագայս անդուլի ձայնիւ, և հարցանողացն զայսմանէ՝ պատասխանեսցի բանիւ մարգարէին Դաւթի, «Հարցջիր դու ցհարս քո և պատմեսցեն քեզ, ցծերս քո, և ասասցեն քեզ»։

Սրբազան դասք ստուածարեալ քահանայից, խնդրեմ ի ձէնջ օժանդակել ինձ Աստուածամերձ շնչովք ձերովք, երդել զայս երգ օրհնութեան առ Ամենաբարձեալն Աստուած, վասն հաստատութեան և պահպանութեան Եկեղեցւոյ իւրոյ սրբոյ. «Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա, և զերկրպագուս անուանդ քում պահեա ի խաղաղութեան»։

Օրհնեսցէ զձեզ Բարերարն Աստուած մեծաւ օրհնութեամբ, որ է օրհնեալ յաւիտեանս ամէն։

Յարութիւն Քահանայ Մելքոնեանց։

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻԶՈՒ ՆԵՐՍԻՍԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ

ՀՈԳԵՒՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ

Անցեալ Մայիս ամսոյ 7ին Թիֆլիզ հասան Սրբոյն Էջմիածնի յառաջաւոր միաբան և Ամենոյի երկրորդ անդամ Բարձրագոյն Սրբազան Մակար Արքեպիսկոպոսը ու Ամենոյի Ատենադպիր՝ յարգոյ պաշտօն Սուքիաս Թադիանոսեանց ասպիճանաւորն ու իջևանեցին քաղաքիս Հայոց Ներսիսեան Հոգևոր Ուսումնարանումը։

Նոյն ամսու 14ին, կիրակի օրը, Վանքի Մայր եկեղեցումը պատարագի սուրբ պաշտօնը կատարուելուց յետոյ Բարձրագոյն Սրբազան Մակար Արքեպիսկոպոսը համառօտ ատենաբանութեամբ ծանուցում արաւ ժողովրդեան մեր Վեհափառ Հօր՝ Սրբազան Կաթուղիկոսին իրան Տփխիս ուղարկելուն նպատակը, որ է քաղաքիս Հայոց Ներսիսեան Հոգևոր Ուսումնարանը վերակարգաւորել գործակցութեամբ և հսկմամբ Թիֆլիզու կրօնասէր և ուսումնասէր հայկական ժողովրդականաց։ Ուստի և հրաւիրեց, որ քաղաքիս բարեպաշտ հայազգիք իրանց միջից, իւրաքանչիւր թաղի եկեղեցու ժողովուրդը ներկայացնելու համար, երեք երեք պատգամաւոր ընտրեն ամէն մի եկեղեցի, որոնք և նշանակուած օրը սահմանուած ժամուն հաւաքուին միատեղ մեր Վեհափառ Տիրոջ՝ Սրբազան Կաթուղիկոսին օրհնեալ կամքը ի գործ դնելու։

Սոյն այս ծանուցումը նոյն օրը ամէն միւս եկեղեցիներումն էլ եղաւ իրանց Ատաղերէցներից քաղաքիս առհասարակ ամէն ժողովրդականաց։

Բարեպաշտ և ջերմեռանդ ժողովուրդը մեծ սիրով ընդունելով Վեհափառ Հօր՝ Սրբազան Կաթուղիկոսի հրամանը Բարձրագոյն Սրբազան Մակար Արքեպիսկոպոսի ընկերից, փութաց անմիջապէս խաղաղասիրութեամբ և միաբանասիրութեամբ իր պարտաւորութիւնը կատարել և մինչև սահմանուած օրը քաղաքիս տան և ութ եկեղեցիք ընտրեցին յիսուն և չորս երեսփոխանք։ Նոյն ամսու 24ին առաջին ժողովը գումարուեցաւ Հայոց Ներսիսեան հոգևոր ուսումնարանի մեծ դահլիճումը, ուր տեղ ներկայ էին Բարձր Սրբազան Մակար և Սարգիս Արքեպիսկոպոսները, մէկ քանի Ատաղերէցներ, Ուսումնարանի Հոգաբարձուներն ու բոլոր պատգամաւորները։

Այս առաջին ժողովում կարդացուեցաւ մեր Հոգևոր Տիրոջ՝ Վեհափառ Սրբազան Կաթուղիկոսի պատկառելի կոնդակը, որոյ օրինակը առնս հաղորդում ենք մեր ուսումնասէր համազգեաց։

ՄԱՏԹԷՈՍ Ծառայ Քրիստոսի և անհասանելի կամաց Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք համաշխարհական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ :

Բարձրապատիւ Մեծար Արքեպիսկոպոսի՝ Աղոտոյ Սինոդի Սրբոյ Էջմիածնի և Ատենադպրի Նորին՝ ոգեւորական Սուրբիսայ Թաղիանոսանց, սիրելեաց մերոյ յայտ առնեմք, զի յինչ ինչ առ մեզ հասեալ դրաւոր տեղեկութեանց և լրոց ի մասին բարեկարգութեան կարգաց՝ ուսումնական և տնտեսական, ներքին և արտաքին կառավարութեանց Հոգեւոր Ուսումնարանի Հայոց Թիֆլիզոյ հարկադրեալ, արժան դատեցաք առաքել զՁեզ ի Թիֆլիզ առ ի անձամբ անձին իսկ վերահասու լինել հանգամանաց վիճակի այնց կառավարութեանց :

Ուստի այսու մերով կոնդակաւ պատուիրեմք Ձեզ, զի ի ժամանել Ձեր անդր, առանց իւրիք յետաձգութեան, ընդ առաջնորդական պաշտօնատարի՝ Սարգիս Արքեպիսկոպոսի և պատուարժան հոգաբարձուաց Ուսումնարանին և ոմանց առաջաւորաց և ուսումնականաց տեղւոյն խորհրդակցութեամբ առնել զճիշդ նկատողութիւն, որպէս ներքին և արտաքին դրութեանց և կառավարութեանց այնր ուսումնարանի, նոյնպէս նորոգ առաջարկեալ մեզ կանոնադրութեանց նորին, ի կատարումն որոյ վերադառնալ ասա առ մեզ անյապաղ և ապա տեղեկութիւն մեզ զայնցանէ ի բարեհաճ անօրէնութիւն մեր :

Զայսմանէ առանձին առանձին կոնդակաւ մերով գրեցաք նաև կառավարչի տեղւոյն այնորիկ Սարգիս Արքեպիսկոպոսի և պատուարժան Հոգաբարձուաց այնր Ուսումնարանի ի տեղեկութիւն :

ՄԱՏԹԷՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Թիւ 199
Յամի Փրկչական 1861
ի 25ն Ապրիլի ի Սուրբ Էջմիածին :

Իսկ երկրորդ ժողովքը գումարուեցաւ նոյն Մայիս ամսոյ 35ին, ուր առաջնոյն պէս ներկայ էին Բարձրապատիւ Արքեպիսկոպոսունքը, Արժանապատիւ Ազգերէցներն ու Հոգաբարձուները, Թաղական պատգամաւորքն և ժողովրդականք ոմանք :

Այս երկրորդ ժողովքում պատգամաւորներն վերնախաւ Հոգեւոր հօր Սրբազան Կաթուղիկոսին ներկայացնելու Ուսումնարանի բարեկարգութեան համար կարեւոր համարուած սկզբնական հինգ յօդուածներու առաջարկութիւնը ընդունեց և ստորագրեցին և նոյնպէս հինգ յօդուածնեբ-

բու առաջարկութիւնը Սուրբ Էջմիածին տանելու և Վեհափառ Հօր՝ Սրբազան Կաթուղիկոսի սուրբ հաճութիւնը և հաստատութիւնը ընդունելու համար վից Պատգամաւոր ընտրեցին. նոյնպէս այս ժողովքումը դպրոցի Ուսումնական և Տնտեսական Կառավարութեան մասին մի Կանոնադրութիւն գրելու համար նոյն իսկ ընդունուած հինգ սկզբանց վերայ՝ մի յանձնաժողով կազմուեցաւ վից ուսումնական անձինքներից նոյն գործողութեամբ գրաղելու և զլուխ տանելու և ապա բոլոր ժողովականաց քննութեան ներկայացնելու համար։

Յունիսի 1 ին վից պատգամաւորները՝ հինգ յօդուածներու առաջարկութեամբ և Բարձրապատիւ Սրբազան Տ. Մակար և Տ. Սարգիս Ար.քեպիսկոպոսներու յանձնարարական թղթովը ուղևորեցան Սուրբ Էջմիածին և տասնըհինգ օրից յետոյ վերադարձան, բերելով իրանց հետ թէ Վեհափառ Սրբազան Կաթուղիկոսի հաստատութեան պատկառելի կոնդակը և թէ սուրբ Էջմիածնայ Միաբանութեան համահաճութեան լուրը այս գործոյս մասին։

Յունիսի 18 ին Բարձրապատիւ Սրբազան Սարգիս Ար.քեպիսկոպոսը մեր Վեհափառ Հօր՝ Սրբազան Կաթուղիկոսի կոնդակը Վանի Մայր Եկեղեցումը, պատարագի սուրբ պաշտօնը կատարելուց յետոյ, վայելուչ և չքեղ հանդիսիւ կարդաց ժողովրդականաց և յետոյ մի յորդոր ուղղեց առժողովուրդը ազգի մանկանց բարոյական և ուսումնական զարգացման վերայ միաբան գործակցութեամբ հոգ տանելու համար։ Նոյն օրը Վեհափառ Սրբազան Կաթուղիկոսի կոնդակի պատճէնը տպատպագրութեամբ տարածուեցաւ ժողովրդեան միջումը։

Անհաւասիկ յիշեալ կոնդակի օրինակը այստեղ հրատարակելով և այս համառօտ տեղեկութիւնը այս անգամ բաւական համարելով, յաջորդ ամսոյն խոստանում ենք մեր սրելի ընթերցողներուն մանրամասն տեղեկութիւն հաղորդել այս ամենակարեւոր գործողութեան մասին։ Մեր յոյսը մեծ է, որ քաղաքիս Հայոց Ներսիսեան Հոգևոր Ուսումնարանի նորոգ բարեկարգութեան ձեռնարկութիւնը քիչ ժամանակուայ մէջ բոլորովին կվերջանայ մեր Վեհափառ Հոգևոր Հօր՝ Սրբազան Կաթուղիկոսի հայրական ինամակալութեամբը և քաղաքիս առհասարակ ուսումնասէր և կրօնասէր ժողովրդականաց Ջանադիր աշխատութեամբը։

Եւ մենք այն ժամանակ զուարթ և անկեղծ սրտով կփութանք ըստասալ հաչակելու այս ձեռնարկութեան յաջողութեամբ, խաղաղութեամբ և միաբանութեամբ պսակուելուն լուրը, ի փառս Թիֆլիզու հայկազն ժողովրդեան և իբարի օրինակ այլևայլ քաղաքներու հայ ժողովրդոց։

ՊԱՏՃԷՆ ԿՈՆԴԱԿԻՆ

ՄԱՏԹԷՈՍ Ծառայ Քրիստոսի և անհասանելի կամաց Աստուածոյ Եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ։ Հարազատ որդւոց Առաքելական Եկեղեցւոյ, շաղկապելոց ի մի սէր և խաղաղութիւն հոգեկան, քրիստոնավայել ջերմեռանդութեամբ՝ բոլոր բարեպաշտն հասարակութեան տիրականամ քաղաքին Տփղխայ Աստուածային սէր և խաղաղութիւն հանդերձ Հայրապետական բաղմապատիկ օրհնութեամբ և ողջունիս։

Ի 25 թուոյ Մայիս ամսեանն զարձակեալն ի Զէնջ զինողրագիր ընկալաք յ7 այս Յունիսի ընդ ձեռն Գերաղնիւ Պատգամաւորաց, ընտրելոց յերեսփոխանաց ամենասիրելի ազգիս Մերոյ, բնակելոց յԱստուածապահ քաղաքիդ՝ Կոլեժսկիյ Սովետնիկ պարոն Կարապետի Վասակեանց, Նաղվօրնիկ Սովետնիկ Պարոն Յովհաննէսի Ղայթմազեանց, Նաղվօրնիկ Սովետնիկ Պարոն Գրիգորի Իզմիրլեանց, Շտապս Կապիտան Պարոն Միքայէլի Մինասարեանց, Տոհմական Պատուաւոր քաղաքացի Ավետիքի Սվէշնիկեանց և Տփղխոյ քաղաքացի Պարոն Յովհաննէսի Ալիբէկեանց։

Ցընթեռնուն որոյ՝ նորօրինակ անպատմելի խնդութեամբ լցան սիրտ մեր և հոգի ընդ այսպիսի ազգային համակամ, միասիրտ և միահոգի շաղկապ ի բարոյական զարգացումն ազգային յառաջադիմութեան, առ որ փոյթեռանդն ջանիւք հոգ կանուք զապագայ օգտէ հայկազն մանկանց ի պարծանս լրութեան ազգի և եկեղեցւոյ։

Ցօդուածք առաջարկեալք ի Զէնջ պարունակին ի յետագայս. Նախ՝ «Արդիւնք Թիֆլիզոյ Հայոց Ազգային Հոգևոր (Ներսիսեան) Դպրոցի, որք մատանեն ինքնա մինչև ցայժմ, կամ որք մատանելոց են յայսմհետէ ի կայից, ի դրամագլխոց, յընծայաբերութեանց, ի կտակաց և յայլոց աղբերաց, պարտին մնալ մշտապէս անձեռնմխելի սեպհականութիւն նորին և ի գործ դնիլ ի պայծառութիւն և ի յառաջադիմութիւն կրթութեանց մանկանց Հայոց։

Երկրորդ՝ Շրջան Թիֆլիզոյ Հայոց Ազգային Հոգևոր Դպրոցի, վերաբերութեամբ թուոյ ուսանողաց և աւանդեալ առարկայից, պարտի ընդարձակիլ ըստ չափու եկամտից նորին։

Երրորդ՝ Ամենայն մանկունք Հայոց, որք մատանեն ի Թիֆլիզոյ Հայոց Ազգային Հոգևոր Դպրոցն ունին ստանալ ինքնա զուսումն ձրիաբար, իսկ անտէրունջ որք Հայոց, առաւելապէս յեկեղեցականաց, պարտին ընդ նմին և մտանիլ ի նոյն իսկ Ուսումնարանի ծախուք նորին, և այնուցունց ի նոցանէ, որք աւարտեալ ղընթացս ուսման բարեբարոյութեամբ և դեռաղոնց ընդունակութեամբ ցանկանայցեն կատարելագործիլ ի բարձ-

բաղոյն ուսումնարանս, առեալ լինին առ այն օժանդակութիւնք ի դուռմարաց Դպրոցին ըստ չափու կարկոութեան

Զորրորդ՝ ի թուոյ ուսանողաց Թիֆլիզոյ Հայոց Ազգային Հոգևոր Դպրոցի, կարեն մատանել ի հոգևոր կոչումն միայն այնոքիկ, որք ըստ բնութեան իւրեանց և ներքին կոչման կարող են լինիլ արժանի սպասաւորք Աստուածային սեղանոյ, և որք յայտնեսցեն առ այն ղյօժարակամ ցանկութիւն իւրեանց, առանց իրիք ստիպմանց և համոզմանց։

Հինգերորդ՝ Թիֆլիզոյ Հայոց Ազգային Հոգևոր Դպրոցն պարտի լինիլ միշտ ի լիակատար կախման Ծայրագոյն Պատրիարգին ամենայն Հայոց. Կառավարիչն Թիֆլիզոյ Հայոց Վիճակի պարտի մնալ միշտ, ըստ կոչման իւրում, առաջին հոգատար և նախագահ Խորհրդարանին կառավարութեան Դպրոցին, իսկ այլ Անդամք այնր Խորհրդարանի պարտին ընտրիլ ի ձեռն հասարակութեան քաղաքիս, ըստ յայտնի արժանաւորութեանց իւրեանց, առանց զանազանելոյ ղեկեղեցականս և զաշխարհականս, և հաստատիլ ի Ծայրագոյն Կաթուղիկոսէն ամենայն Հայոց»։

Սակայն ի նկատելն մեր զայսոսիկ հնգեսին նախադիծս, որք ունին լինիլ հիմունք Կարգադրութեան Ներսիսեան Ազգային Հոգևոր Դպրոցիդ, արժան դատեցաք յաւելուլ ի վերայ զբաւս՝ առ առաջին յօդուածսն։ «Ներսիսեան» ի հոգեկան պարծանս երջանկայիշատակ սկզբնադաստատ հիմնադրի նորին

Առ երրորդն ի վերջ յօդուածոյն յաւելուլ՝ «Նախընթաց դիտութեամբ Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց և Սինոդի Սրբոյ Էջմիածնի»՝

Եւ առ հինգերորդն յաւելուլ՝ «Դպրոցն պարտի լինիլ միշտ լիակատար կախման Ծայրագոյն Պատրիարգ Կաթուղիկոսի ամենայն Հայոց և Սինոդի Սրբոյ Էջմիածնի։» Իսկ թիւք հոգաբարձուաց կամ անդամոց Խորհրդարանի լիցին, նախագահութեամբ Վիճակաւորին, յերկոտասան անձանց, և փոխանակ «Կառավարիչ» բառին «Վիճակաւոր Արքեպիսկոպոս տեղւոյն։»

Եւ այսպէս հաւանական գտեալ զայնոսիկ նախադիծսն և հաստատեալ զայնս, յանձնեմք Ձեզ՝ ընդարձակեալ ի վերայ Սկզբնական Հիմանցն զԸնդհանուր Կանոնս Ներսիսեան Հոգևոր Ազգային Ուսումնարանիդ բացայայտ և լիովի հանգամանօք ըստ պատշաճին, ըստ ներքին և արտաքին մասանց նորին, և ապա անաչառութեամբ ընտրեալ ի միջոյ հասարակութեանդ զնշանակեալ թիւ Հոգաբարձուաց՝ զարս, վկայեալս հարազատութեամբ և ջերմեռանդ աղդասիրական գործովք և անուամբ բարութեան, զոյդ ընդ կանոնադրութեանն առաքեսջիք ի վերանկատողութիւն և ի հաստատութիւն Մեր և Սինոդի Սրբոյ Էջմիածնի։

Հաւատի է, զի փորձն ընթացից ուսման, և ճիգն արդարավաստակ աշխատանաց Ձերոց յայդ Աստուածահաճոյ և ընդհանրաշահ գործ ապացուցեն զարդիւնս և զարգասիս բարութեան ազգին։ Թող ծաղկես-

ցին և փթթեսցին մանկունք Ձեր բարգաւաճ պտակօք լուսաւորութեան և փառաց անուն պատճառիցն բարութեան մնասցէ անջինջ յօրհնաբանեալ շրթունս և ի հոգիս նոցա և ապագայ սերնդոց նոցա ի դարս յաւիտենից։

Իսկ մեզ ճնայ զկնի յուշ ածելոյ Սիրելեացդ և հարազատից Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ մերոյ զառաքելական զյորդորականն զրան, թէ «Այսուհետև եղբարք, ողջ լերուք, հաստատուն կացէք, մխիթարեցարուք, միաբան լերուք, խաղաղութիւն արարէք, և Աստուած սիրոյ և խաղաղութեան եղիցի ընդ ձեզ»։ (Երկր. Կորնթ. ԺԳ. Գլ. 11 համար.) ընդդրել ի Հոգւոյն Սրբոյ խրով անսահման ողորմութեամբ, քաջզրութեամբ ակնարկել յայս Ներսիսեան դարաստան լուսաւորչատունկ, պահելով ի ներքոյ խնամոց Աժնազօր Աջոյ խրոյ, և Ձեզ վաստակաւորացդ յայդ Աստուածահաճոյ ձեռնարկս օժանդակեսցէ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ և վարձատրեսցէ զՁեզ զամենեսեանսդ աստ և ի հանդերձելումն։ Ամէն։

ՄԱՏԹԷՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ։

Համար. 327
յԳն Յունիսի 1861
Ի ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Հրատարակիչ և տնօրէն } ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԻՆՃԻԱՆՑ։ Խմբագիր ՄԱՐԿՈՍ ԱՂԱՆԻՍԵԱՆ։

Печатать позволяется г. Тифлисъ. 28го Іюня 1861 года.
Ценсоръ И. Кайтмазовъ